



« Խօսք » եւ « լոյս » երկու համանման բառեր են նախնական սրբազան լեզուին մէջ : Եւ առանց պատճառի չէ այդ : Լոյսը կերպով մը բնութեան խօսքն է : Եւ խօսքն ալ մտքին լոյսն է : Տիեզերքը մտիկ կ'ընէ եւ կը պատասխանէ : Յախտե- նական խօսակցութիւն մը կ'անցնի բնութեան եւ հոգիին միջեւ : Ե՞նչ հոգին չմարգմանէր, չլուսաւորէր ինչ որ միւսը կ'ըսէ, այդ չհասկցուած մտին բնու- թիւնը չեղածի պէս պիտի ըլլար :

Ժ. ՄԻՇԼԷ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պերճ Պոսչեա	ԱՐՇԱԿ ՉՕՊԱՆԵԱՆ
Նոր հոգիներ	ՉԱՐԵՀ ՎԱՐՍԱՄԵԱՆ
Երգեր	ՍՐԱՄ ՉԱՐԸԳ
Հերովդիա	ԿԻՍՍԹԱՎ ՖԼՈՊԷՌ
Պատճառորականութիւնը	ՏԲ • ՏՐԴԱՏ ԵՍԱՅԵԱՆ
Մուլէտ	ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ
Հողանտայի խաղաղութիւնը	ԲՈՂ ԱՏԱՆ
Տաղ՝ երխտասարգութեան	ԱՏԱՄ ՄԻՅՔԵԻԻՉ
Խաղաղութեան յաղթանակը	Ա • Չ •
Վճիռը	
Հայ երաժշտութիւնը Բարիզի մէջ	

Ընդունեցանք հետեւեալ նամակը Բարիզի Հայ Ուսանողաց Միութենէն՝

ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂԱՑ ՄԻՈՒԹԻՒՆ

63 BIS, RUE DU CARDINAL-LEMOINE, 63 BIS

Կ'իմանանք թէ Բարիզի «Հայ Ուսանողաց Ակումբ»ը, որ՝ համառակ Ուսանողութեան կառ-
 քին եւ առանց անոր հարմարութեան՝ կազմուած է խումբ մը «ոչ-ուսանող»ներէ, որոնց մէջ հա-
 զիւ երկու երեք ճշմարիտ ուսանողներ կարելի է գտնել, ձեռնարկած է հրատարակել «Համալ-
 սարան» հանդէսը, ուսանողական անուան տակ :

Միութիւնս, նախանձախնդիր ուսանողական պատուոյն եւ շահերուն, կը յայտարարէ թէ
 յիշեալ «Ակումբ»ը որ ոչ մեկ ուսանողական շահուն կը ներկայանէ, իրաւունք չունի ուսա-
 նողութեան անուան եւ պատասխանատուութեան տակ որ եւ իցէ հրատարակութիւն կամ գոր-
 ծունէութիւն կատարելու :

Ի զիմաց Բարիզի Հայ Ուսանողաց Միութեան

Ատենադպիր Վ • Ատենադպետի
 Խ • Սարգիսեան Բ • Չաւչեան

ԱՆԱԿԻՏ


ՀԱՆՏԻՄ ԱՍՍԵԱՅ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

Ա. ՏԱՐԻ

ՅՈՒՆԻՍ 1899

ԹԻԻ 8



ՊԵՐՃ ՊՈՕՇԵԱՆՑ

ՊԵՐՃ ՊՈՕՇԵԱՆՅ

— 00 —

Պոօշեանց , որուն յոբելեանը կը տօնեն այս օրերս Կովկասի Հայերը , անմիջական եւ ուղղակի շարունակողը եղաւ Արովեանին : Աշակերտը վարպետին հանճարը չունէր , բայց ունեցաւ անոր զգացմամբ գեղուն հոգին , անոր անձնութեան կրակը , նոյն հիացական գորովը զժբազդ ու գեղեցիկ հայ ցեղին համար , եւ համեղ տաղանդ մը , պարզուկ ու ինքնատիպ : Գիւղի զաւակ , Պոօշեանց գրեց գիւղին վէպը , իր բոլոր նաշխուն մանրամասնութիւններովը , ինչպէս Արովեան գիւղին քերթուածը գրած էր : Թէպէտ Կովկասէն երբեք դուրս չելած , Արովեանին դասերովն ու անձնական ընթերցումներով միայն կազմուած , Պոօշեանց յառաջգիմասէր ոգիի մը ապացոյցները ցոյց տուաւ իր կրթական գործունէութեանը մէջ , եւ իրեւ դաստիարակ ալ՝ Արովեանին գործը շարունակեց , հիմնեց Կովկասի Հայոց առաջին աղջկանց վարժարանը , եւ քառասուն տարի իր աշակերտներուն սորվեցուց ճանչնալ ու սիրել իրենց ցեղը , իրենց լեզուն , իրենց երկիրը ու ջանադիր ըլլալ զանոնք պահպանելու եւ զարգացնելու :

Բարի կեանք մըն է , եւ իսկապէս «հայ» կեանք մը , որուն հանդիսաւոր յարգանք մը կը մատուցուի այսօր , եւ ամէն Հայ պիտի մասնակցի այդ յարգանքին :

* *

Իր վէպերուն յօրինուածքին գեղեցկագիտական նշանակութեամբը չէ անշուշտ որ Սօս եւ Վարդիթերի հեղինակն ինքզինքը մեր մեծարանքին արժանի կը կացուցանէ : Պոօշեանցի վէպերը սկզբնական միտք մը կը յայտնեն , արեւմտեան արուեստին գրեթէ բացարձակապէս անգիտակ , ասիական թերութիւններովը բեանաւոր : Գործողութիւնը , թոյլ ու կցկտուր , անոնց մէջ յաճախ կ'ընդհատուի ցեղագրական , պատմական կամ բարոյաբանական փակագրիծներով . պատմուածքը , ծայրայեղօրէն երկարաբան , կը խճողուի աւելորդ մանրամասնութեանց կոյտերով , կը ծանրաբեռնուի անվերջանալի անպէտ խօսակցութիւններով որոնք շատ անգամ մէկ պար-

բերութեան մէջ կրնային ամփոփուիլ . վերջապէս՝ ոճը , անհաւասար ու պիտակ , ժողովրդական պատկերայից դարձուածքներու կը միացնէ պատուելիական ճոռոմարանութիւններ եւ հեռու է այն միացայտ , համասեռ , հզօր ժայթքումն ունենալէ որ Արովեանին ոճը կ'որակէ : Ֆլուպեան միտք մը այդ վէպերը անընթեռնելի պիտի գտնէր եւ «զբաղանուութիւն» անունը անոնց պիտի զբաւանար :

Սակայն պէտք է ամէն գործ նկատել իր ժամանակին ու միջավայրին մէջ եւ իր կատարած դերին համեմատ : Պոօշեանցի վէպերը ամէն բանէ առաջ , տխրանքներ են . անոնցմով կը պահպանուի հայ ժողովրդական գանձին մէկ ճիւղ հատուածը , — Աշտարակ գիւղին սիրուն բարբառը , գիւղական կեանքը իր ամէն երեւոյթներով , ու զէջ մը հայկական հին ու նոր աւանդութիւններ : Արզէն միմիայն այս տեսակէտով , գործը թանկագին արժէք մը ունի մեր ժողովրդին համար , որ հին դարերուն մէջ այնքան քիչ բան պահած է իր ներքին կեանքէն եւ նոր ժամանակներու մէջ դեռ քանի մը փորձ միայն կը հաշուէ ցեղական գոյնը խտացնող բարձրը , պատկերներն ու նշանները հաւաքելու : Կոռուածադիկը (որ Վերջ Հայաստանի գուգեակն է , եւ կրնայ կոչուիլ Աշտարակի Վերջը , ինչպէս միւսը Քանաքեռի Վերջն էր) կը բովանդակէ անթիւ մանրամասնութիւններ Պարսից լուծին տակ հայ գիւղացիին կրած չարչարանքներէն . Ճեցերը կը յաւերժացնէ գիւղական վաշխառուին հրէշային ու հետաքրքրական սիպարը . Սօս եւ Վարդիթերը (ամբողջութեամբ Աշտարակի բարբառով գրուած) գիւղի տարփանքները կը պատկերացնէ եւ անոնց շուրջը՝ գիւղի տօները , սովորութիւնները , բարձրերը : Արարատեան գաւառին հայկական կեանքը ուսումնասիրել ուզողին համար , Պոօշեանցի գործը անհրաժեշտ օժանդակ մը պիտի ըլլայ վաղը :

Ճեղագրական կարեւորութենէն զատ , Պոօշեանցի վէպերը նշանակութիւն ունին այն ողիովը զոր անոնց մէջ կը գտնենք եւ որ հեղինակին դէմքը կը մեծցնէ , տեղական մանրամասնութեանց հաւաքչի մը եւ իրական պատկերներու : Ընդօրինակչի մը դերէն աւելի լայն ու գեղեցիկ դեր մը կուտայ անոր : Պոօշեանցի վէպերը ատելութեամբ կը փրփրան կեղեքիչներուն , կեղծաւորներուն դէմ ,

ու գորովանքով լեցուն են աղնիւ ու ճնշուած տկարութիւններուն , սիրող ու իրենց սիրոյն մէջ հալածուած երիտասարդութիւններուն համար : ատով , Պոչեանց , իր գործին անարուեստ յօրինուածութեանը տակ , կը յայտնէ բանաստեղծի ըմբոստ ու սաք հոգի մը , եւ այդ հոգին է որ անոր բուն գեղեցկութիւնը կը կազմէ :

Այս բանաստեղծը , գիւղացի , կ'ուղղուի գիւղացիներու , իրենց պատմութիւնը կը պատմէ անոնց , իրենց լեզուովը , եւ կը լուսաբանէ , կը բացատրէ զայն : Անոնց համար որ մտաւորական բարձրագոյն ճարտարապետութիւններուն ըմբռնողութեանը վայելքին հետ գիտեն միանգամայն ճաշակել խոնարհ ու անկեղծ հրապոյրը զոր կ'ընծային ժողովրդական հոգևոյն ինքնաբուխ շինուածքները , Պոչեանցի վէպը կը ստանայ սիրուն շահեկանութիւն մը՝ իբրև ոգեւորուած պատկերացումը Գիւղին ազրոտ ու քնարերգական , ռամիկ ու գորովալից կեանքին : Եւ այն ատեն կը մղուինք խանգաղատանք զգալ հեղինակին նկատմամբ , այդ ամբողջ անձանօթ կեանքին համար զոր ի վեր կը հանէ անշուք անկիւններէն , եւ այն քաջութեան , արդարութեան ու սիրոյ գասին համար զոր կ'աւանդէ իր եղբայրներուն՝ դերահասկանալի ու բեղմնաւոր ձեւով մը : Ու կ'ողջունենք Պոչեանցը իբրև ժողովրդական վէպին վարպետը Հայոց մէջ , Աբովեանէն յետոյ :

Աբովեան սոմանդիկ երգիչն էր այդ ժողովրդական գրականութեան . Պոչեանց անոր իրապաշտ վիպասանը եղաւ :

Հակառակ որ Պոչեանց իր ուսումը կը ստանայ Աբովեանի ձեռքէն եւ իր գրողի կոչումը կը զգայ անոր Վերջը կարգալով , իր ազաջին գործերէն իսկ՝ խառնուածքի տարբերութիւնը կը նշմարուի , ընդհանուր մտածման նոյնութեանը տակ : Ընդհանուր մտածումը՝ ժողովուրդը իրեն մատչելի գրականութեամբ մը աղնուացնելու ջանքն է : Աբովեան նպատակին կ'ուզէր համնիլ իր ատելութիւնը կեղրոնացնելով բռնաւոր ու թշնամի մահմետական ցեղերուն վրայ եւ իր սէրը , հիացումն ու գթութիւնը անխառնօրէն նուիրելով հայ ժողովրդին ցաւերուն ու հերոսութիւններուն . Պոչեանց հաւատարմաբար կը նկարէ հայ կեանքը ինք իր մէջ , նոյնչափ անկեղծութեամբ երեւան բերելով անոր տգեղութիւններն ու արժանիքները : Աբովեան , իր ան-

սպառ ու հրեղէն ներշնչումէն յափշտակուած , աւելի իր հոգին թարգմանած է քան հայ գիւղական կեանքը ճշգրութեամբ ու մանրամասնութեամբ պատկերացուցած . ներկայացուցած տեսարանները՝ իր անհատական զգայնութեանը մէջէն կը մեծնան , կը դիւցազնեղանան , եւ այն մէկ քանի տիպարները զոր ըստեղծած է , — եւ որոնք կը վերածուին միակ տիպարի մը , Աղասիին , — իր խրոխտ ու սիրուն անձին ցոլացումն են աւելի քան ճշգրիտ արտայայտութիւնը իրական գեղջուկին . ատով է որ Աբովեանի գիրքը տեղական հանգամանքէն դուրս կ'ելլէ , մարդկային ու խորհրդանշական գործերուն կարգը կը բարձրանայ , եւ , իր ձեւին փայլատակմանն ալ շնորհիւ , կը ստանայ ներքին գեղեցկութիւն մը : զոր ամէն ժամանակի , ամէն կարգի մաքեր պիտի գնահատեն : Պոչեանց ուշադիր ու համբերատար նկարագրողը եղած է գիւղական կեանքին . գիւղի բարքերը , սովորութիւնները , նախապաշարումները , հանդէսները , պայքարները , նոյնութեամբ վերարտադրուած են իր վէպերուն մէջ , եւ գիւղական բոլոր տիպարները այնտեղ կարգով կ'երեւան , իրականին վրայէն կաղապարուած , առանց ո եւ է խտականացման : Վէպերուն նիւթը գրեթէ միշտ պատրուակ մըն է գիւղական կեանքի պատկերներու շարքի մը իբրև կապ ծառայելու համար . Սօս եւ Վարդիթերին երեք հարիւր երեսուհուշորս էջերուն մէջ , նիւթը — որ փոքրիկ նորավէպի մը նիւթ է պարզապէս , — զգաղգութիւնն է երկու երիտասարդ սիրահարներու որոնք իրենց միացմանը խոչընդոտ կը գտնեն գիւղական շարութիւններն ու նախապաշարումները . բայց ատի առիթ կ'ընծայէ հեղինակին որ մեզի նկարագրէ Աշտարակ գիւղին կեանքը ամբողջ տարուան ընթացքին մէջ , աւագ շաբթու հանդէսները , Ախիսը , եկեղեցիի ու տան տեսարաններ , Համբարձման տօնին զաշտային խաղերն ու նանկիւղիւնի երգերը , Ս . Գէորգի ուխտաղնացութիւնը , յուղարկաւորութիւն մը , հարսնիք մը , Վարդավառը , իրաջի տօնը , եւն . եւ այդ տեսարաններուն մէջ , կ'անցնին գիւղին բոլոր տիպարները , ագէտ , աղտոտ , շահասէր ու կեղծաւոր տէրտէրը , ընտանիքի հայրը՝ բիրտ , նախնական , բռնաւոր , որ իր կնիկը կը ծեծէ , զաւակը տուռէն կը վռնտէ ճաշի ժամէն քիչ մը ուշ հասնելուն համար , կնիկները՝ բամբասող , գոհիկ , խլրառն

ու կանչուընտան , չար ու կրօնամոլ . եւ աւտոնց մէջ՝ երիտասարդ հոգիները , զեռ տըկար , ազնիւ ու գեղեցիկ , որոնք կը սիրեն , կը հալածուին ու կը ճմուրհն : Հեղինակը ոչինչ աւելցուցած է , ոչինչ պակսեցուցած եւ ոչինչ մոռցած : Իր պատկերը կը ներկայացընէ Գիւղը , ամբողջ , անկեղծ , կենդանի . գիւղին հոտը կ'առնես հոն , քակորի ու վարդի խառնուրդ : Հեղինակին անձնականութիւնը կը յայտնուի այն խանդաղատանքովը զոր կը ցուցընէ ճգմուածներուն , սիրողներուն համար : Բայց նոյն իսկ այդ զոհերը , այդ սիրուն ու բարի հոգիները զոր մեր համակրանքին ու գթութեանը կ'ընծայէ , ո եւ է գեղեցկացում՝ չեն կրած իր ձեռքէն , ու կ'երեւնան այնպէս ինչպէս են իրականին մէջ , կոպիտ , միամիտ , անճարակ եւ սըրտաչարժ , հրապուրիչ՝ իրենց նախնական տարփանքովը , միանգամայն քնքուշ ու բիրտ , այնքան հզօր որքան պարզ : Սօս եւ վարդիրներն սիրոյ տեսարանները , ու մանաւանդ Յեցերուն Հնձանաբազին պատկերը , ուր Սօսան ու Սամփոսնը առաջին համբոյրը կը փոխանակեն իրենց ամչկոտ զոգզոջումին մէջ խելայել , գիւղական հոգեբանութեան ըզմայլելի էջեր են :

Ուրիշ նշան մը , որով Պոռչեանցի անձնականութիւնը կը շեշտուի իր գործին մէջ , իր հեգնութիւնն է , իր humourը : Ատի իր սեփական տարրն է , որ Աբովեանէն որոշապէս կ'անջատէ զինքը , իր բուն յատկանիշը կը կազմէ : Աբովեան իր ատելութիւնները կը թարգմանէ կատաղութեան ու անէծքի բառերով . Պոռչեանց իր ատած բարքերն ու տիպարները կը խարազանէ հանդարտ ու չարածըծի , քիչ մը թանձր , բայց համեղ հեգնութեամբ մը : Յեցերուն վանցի գրագիրը , լեզուանի , ճարպիկ ու սողոսկուն , անմոռանալի տիպար մըն է , շատ աղէկ գծուած . նմանապէս Յեցերուն վաշխառուն , Բալասան աղան , բռնաւոր ու դիւանագէտ , անարգ ու միանգամայն հզօր ու շահեկան . այսպէս նաեւ՝ Հագի խնդիրին Սաքօն , նախ գինեպան , յետոյ տէրտէր , յետոյ մոլլա , միշտ մեքենայող , միշտ շահամոլ ու զերասան :

Այդ հեգնութիւնն է որ , ամէն բանէ աւելի , Պոռչեանցի գործին բարոյական նշանակութիւնը կը բնորոշէ : Այն հազարաւոր հայ գիւղացիները որոնք Պոռչեանցի վէպերը լափած են , անոր մէջ պարզ ու արի դասը տե-

սած են զէպ ի ազնուացում առաջնորդող : Սաքօներն ու Բալասանները մոլեգնարար ատած ըլլալու են Պոռչեանցը . եւ ատի մեծագոյն պատիւն է զոր գրող մը կրնայ վայելել իր կեանքին մէջ : Բայց այսօր , բոլոր վարդիրներներն ու բոլոր Սամփոսնները—ամէն ինչ որ Գիւղին մէջ կայ գեղեցկութիւն եւ թարմութիւն ,— իրենց լեռներուն է՛ն աղւոր ծաղիկները բերելու են իրենց ալեւոր բարի եղբօրը , եւ իրենց սիրուն աչուրներուն երախտագէտ ժպիտը , ամենէն անպինը երկրի ծաղիկներուն :

ԱՐՇԱԿ ԶՊԱՆԵԱՆ



ՆՈՐ ԸՈԳԹՆԵՐ

«... Մտածումիս մէջէն կը սիրեմ գԱնիկա . ու մտածումիս մէջ գեղեցկութեան ասորքինակ իրականացումներու կը հասնի Ան...»

«Գիւթական լոյսերու մէջ երեւակայութիւնս օծեց քեզ , ու հասակաղւորացու նազելի ուռիներու պէս , ու սեւ աչքերդ կախարդութեան աղբիւրներ գարձան , ու միբճուեցայ մազերուդ երանութեան աղջամուղջին մէջ...»

«Յօնէ՛ այդ սեւ ու կակուղ բուրուցները իմ ճակտիս վրայ ու գինովցո՛ւր ու խեղդէ՛ զիս անոնցմով :»

Հին տարիին հրաժեշտ կուտամ այս հին էջերը , յիշատակները թղթատելով , ու նստած պատուհանիս առջեւ , աչքերս ու հոգիս ողողուած մութով , կէս գիշերին մտիկ կ'ընեմ զանգակներուն ձայները , պղնձէ եղբրի գութիւնները հեռաւոր զանգակներուն , արհաւիրքի երկայն ձայները որ նոր տարիի մը , ցաւով յաւիտենականութիւնը չափող տարիի մը մերձեցումը , խորհրդաւոր ու ըսպառնական մուտքը կ'իմացնեն :

Տի՛նկ , տէ՛նկ , տօ՛նկ .

Տի՛նկ , տէ՛նկ , տօ՛նկ . . .

Սրտի սեղմումով մը , գլուխս պատուհանին սեւ ապակիին փակցուցած՝ աչքերս կը գոցեմ ընկղմելու համար , հեռանալու համար դառն հեշտանքին մէջ բոլոր հին բաներուն , սրտի ու մտքի բոլոր քաղցրութիւններուն որ անցեալը տարաւ , որոնց խուլ ու անյոյս լացը կը գտնեմ զանգակներուն հեռաւոր ու միօրինակ ու ողբական ղողանջիւնին մէջ .

Տի՛նկ , տէ՛նկ , տօ՛նկ . . .

Ու այս երեք վանկերը կ'երկարածուին , կը բազմապատկուին էութեանս մէջ , ու նոր տարին մօտեցող յուսահատութեան մը պէս կը լեցնէ զիս սարսափով : Այ՛ տասերկու ամիսներուն մէջ որ պիտի գան՝ դժնէ կորուստներ պիտի բզբտեն , պիտի կիսատեն իմ զգայնութիւնս : Աղետալի փլուզումներու նախազգացումով մը , կը սզաւորուին , որբերու պէս , հոգիիս ամենէն աղւոր խանդաղատանքները : Ու միտքս կուգայ ցաւազին ու հազուադիւտ էակը , միակ բարեկամս , որուն հետ կաղանդեցինք անցեալ տարի , ընկղմած՝ երազանքին մէջ մայրական ապսէնթին : Խեղճ բարեկամս . երեք ամիս առաջ կաղանդը յուսալով , ու կաղանդը չհասած , ձգեց գնաց , կամ մանաւանդ տարուեցաւ , ֆիզիքապէս յոգնաբեկ ու սպառած՝ մտքի այն վիթխարի յուզումէն զոր ունեցաւ մինչեւ կեանքին վերջը , տենդէ մը որ առանց գաղարի չարչրկեց իր ուղեղը , որ պաշտելի բաներ ըսել տուաւ իրեն , ու իրեն գրել տուաւ քանի մը խորունկ էջեր որոնք իմ է՛ն թանկագին յիշատակներս կը կաղմեն : Բասանը՛ն՝ րս տարեկան , եւ արդէն յոգնած , ջախջախուած , լինցած էր խեղճը :

* *

Պրուսէլի մէջ հանդիպած էի իրեն : Շուտով իրար հասկցած էինք , ու գորովագին եղբայրութիւն մը միացուցած էր մեր հոգիները՝ հաւասարապէս լեցուած ցաւով ու տարփանքի հիւանդագին պէտքով մը : Կարճ ժամանակուան մը համար կարծեց , յոյսով դողդալով , թէ երջանկութիւն մը կը մօտենար իրեն : Օ՛ , հիմա , կսկիծով կը յիշեմ իր միամիտ ու պաշտելի խոստովանութիւնները , իր մոլեգին ու մանկական խանդավառութիւնը : Անգլուհի մը կը սիրէր զինքը : Իրար կը սիրէին մանուկներու պէս , խենդերու պէս : Իրենց սէրը գեղեցկութիւն մը եղաւ , ու ճանչցան ամենէն նուրբ ,

ամենէն խորունկ , ամենէն հազուադիւտ քաղցրութիւնները , գերագոյն գինովութիւնները , որուն մըայն կարող են սիրով աստուածացած արուեստագէտ խառնուածքները :

Ու որք օրին նոթագրեց վրդովմունքի ու երանութեան այդ շրջանը : Այդ էջերուն ընթերցումը զիս կը տանի տրտում՝ յաւիտենականութիւններու մէջ , ու հեռուներէն կուգայ ինծի իր ձայնը , հանդարտ ու դալկահար իր ձայնը .

«Ձեմ յիշեր ե՞րբ , քանի՞ տարի , քանի՞ դարեր առաջ սկսայ սիրել քեզ : Միայն գիտեմ որ գաղջ ու անուշահոտութեամբ կապոյտ իւրիկուն մըն էր , ամառուան թոյլ իրիկուն մը , եղական իրիկուն մը , ուր քեզի մօտենալուս հեշտալի գգուանք մը զգացի , ցնծութեան անակնկալ ողողում մը հոգիիս մէջ : Իմ քովէս անցած ատենդ , — ու բարիք մըն էր այդ անցքը , ո՛վ շնորհալի ու աղւոր գաւակս — քու մարմնոյդ զգեստներէն , վզիդ ճերմակ ու համբուրելի բացուածքէն , ձեռքերէդ , նայուածքէդ , գինովութիւն մը բղխեցաւ օդին մէջ , ու վայրկեան մը մարմնոյս երջանիկ ու մութ յափշտակութեանը վրայ զգացի սարսուլով հպումը քո կուսական փափուկ հասակիդ : Յանկարծ ինծի դարձեր էիր , — ու զեռ սրտիս խորը թանկագին գաղտնիքի մը պէս կը պահեմ այն նայուածքդ , յամառ , տիրական ու վրդովիչ այն նայուածքդ ուր ինքզինքդ մատնեցիր վայրկեան մը : Իմ հեզնողի հոգիիս մէջ երջանիկ վերադարձն էր միամտութեան եւ մանկութեան : Ու այն գիշերը՝ հսկումի ու տենդի գիշեր մը , այցելեցիր ինծի : Խելայեղ խանդաղատանքով մը շրջապատած էի քեզ . կրօնական սիրով կը համբուրէի քու երազով ու խանդով բարախող միտք , որ կը խօսէր ինծի վարդ սարսուռներով ու լոյս բառերով . ու խանդավառ աչքերս , ու շրթունքներս , ու ձեռքերս մտիկ կ'ընէին քեզի յափշտակուած : Հետեւեալ օրը քու վրագ մտածած ատենս ամբողջ մարմինս կը սարսուար գուրգուրանքով , ու միսիս մէջ կուլար քո աղւորութեանդ կարօտը : Ամբողջ օրը՝ աչքերուս առջեւ , իմ մէջս ապրեցար , մտածումս եղար : Մատղաչ ու հոյակապ լանջքդ , սփռոյն ճակտիդ անսահման անուշութիւնը , համբուրող նայուածքը թաւիչ աչքերուդ , ճերմակ ու գաղջ թեւերդ որ զիս շրջապատած էին միամիտ ու ինքնաբեր համբոյրով մը , այս ամենը զիս լեցուցին , եւ թերեւս բարեկամներս զիս գե-

ղեցիկ գտան այն օրը՝ առանց բնաւ գուշակելու սիրոյ այն դիւթական էակը որ իմ մէջս եկած էր բնակիլ . . .»

Ու բան մը որ շատ շահագրգռած էր ու զարմացուցած էր զիս , բարեկամիս կանացի հոգին էր : Իր բոլոր նոթերուն , աղաղակներուն , գանգատներուն ու յուսահատութեանը մէջ կ'նոջ շեշտ մը կայ , կանացի մեղկութիւն մը , կանացի քմահաճոյքներ : Կ'նոջ ճաշակներ են իրենները , ու կ'նոջ փափկութիւններ : Միակ առնական բանը՝ սիրուհի մը ունենալն էր , ուրուն սակայն ամենէն աւելի սիրած է երկայն մազերը , ու մոլեգին խանդաղատանքով մըն է որ կը խօսի անոր շրջազգեստին վրայ : Ու չեմ կրնար չօրինակել հոս իր յատկանշանական մէկ նոթը .

«Քսան տարեկան եղած ատենս ծեր էի , ու տարիէ մը ի վեր , քեզ առաջին անգամ տեսնելէս ի վեր , սկսայ մանկութիւնս գտնել : Տըզու մը սիրովը , տղու մը անհուն միամտութիւնովը կը սիրեմ քեզ . տղու տենչանքներ ունիմ , ու տղու հեշտանքներ : Կ'ուզեմ որ ինծի բարկանաս , զիս յանդիմանես , զիս լացընես ու զիս մխիթարես խաբող բառերով ու ինծի պզտիկ անուշ բաներ ըսես , ու իմ վրաս խնդաս . պաշտելի պիտի ըլլաս քու խնդացող աղւորութեանդ մէջ . ու կ'ուզեմ որ զիս ծաղրես գորովալիբ պչրանքովը մօր մը սիրող ծաղրին :

«Ի՞նչ կը նստիմ , ու քեզի չեմ նայիր , որ պէսզի վրաս մտածես : Աչքերս կը գոցեմ քեզմով լեցուած , ու հեշտականօրէն կը սարսուած քու անուշ շրջազգեստիդ հպումէն , շնորհի , փափկութեան ու բուրումի ծալքերէն քու շրջազգեստիդ մութ ժանեակներուն : Չեմ գիտեր ե՞ս թէ աչքերս մանաւանդ կը սիրեն քեզ : Բայց գիտեմ որ իմ այս աչքերս որոնք երբեք քեզ չեն կորսնցներ , իմ այս միամիտ ու խանդավառ աչքերս կեանքին մէջ միայն քեզ կը տեսնեն , քու մազերուդ հպարտ գեղեցկութեանը մէջ կորսուած : Առանց այս աչքերուս չպիտի սիրէի քեզ . ամէն օր անոնք քեզ աւելի գեղեցիկ կ'ընեն , ամէն օր աւելի կը ծանրանան անոնք քու հեշտանքիդ մեղամաղձութիւնովը : Այնչափ որ սկսած եմ ա'լ վախնալ ու կորուստի նախազգացումներ կը լլկեն զիս : Աչքերուս մէջէն տուր ինծի ծառայանքն ու Հեշտութիւնը . անոնք սիրեցին քեզ աղւոր

ու հաղուագիւտ ցաւիմը պէս . . . : Քեզի սկսայ մտածել այն գիշերէն ի վեր ուր ամբողջ սեւ հագած էիր : Անմոռանալի , իտէական , ճակատագրական գիշեր մը եղաւ անիկա : Սեփ սեւ ու երկայն շրջազգեստ մըն էր հագածդ , ու մարմինդ , սեւին մէջ բանտուած , ճերմակ ու գաղջ , լոյս մարմինդ , կերպասին տակ նուրբ ու լեցուն գծերով սլացիկ , շարժումի հեշտալի կակուղութիւններ ու առոյգ ներգաշնակութիւններ ունէր : Աղջիկի գողտր ու հպարտ կուրծքդ կանխահաս ու ըմբոստ վեհութիւն մը առած էր : Ու անպաճոյճ ու նուրբ սեւին վրայ , տրտում քերթուածի պէս նուրբ հասակիդ վրայ , գլուխդ կը կենար խրոխտ՝ աշտարակի մը պէս . ու տոգոյն դէմքիդ մէջ աչքերդ մութ ու խորունկ լոյսով մը ծանրացան վրաս : Այն գիշերէն ի վեր իմ էութեանս մէջ կը մնաս քու սեւ շրջազգեստովդ : Շրջազգեստդ մնացած է հոս , սենեակիս ամենէն գաղտնապահ մէկ անկիւնը , ու շատ անգամ գլուխս անոր մէջ կը թաղեմ ծծելու համար անոր ծալքերուն խորը մարմնոյգ անուշահոտ յիշատակը :»

Բայց իրենց երջանկութիւնը կարճատեւ եղաւ : Արդէն երբեք ամբողջովին չէր հաւատացած անոր : Առանց դադրելու իրար սիրելի , սկսած էին իրար ատել , իրար սկսած էին զարշնչիլ , հրէշային գտնել : Ու դէմ գիմաց ըսկսան իրարու բացատրել , լալով , ու պաղատելով , թէ ինչպէս կ'ատէին իրար , եւ թէ ինչպէս անկարելի էր ըլլալ առանց իրարու : Աւ լալով իրարմէ բաժնուեցան , անկարող դիմադրելու չար շունչի մը որ կը թռնաւորէր իրենց սէրը , եւ զոր չէին կրնար հասկընալ :

Ուղեցի հեռացնել զինքը այդ տեղերէն , մորմոքի ու անյուսութեան թելադրական ու սգաւոր այդ տեղերէն : Բայց վզիս փաթթուելով աղաչեց որ ձգեմ զինքը հոն , իր անցեալին մէջ , իր ցաւին մօտ : Օ՛ , չէ՛ , չէր ուզեր որ իր ցաւը առնէին ձեռքէն . ու անոր մէջ մտաւ , բանտարկուեցաւ անոր մէջ խենդի ուրախութեամբ մը , մինչեւ որ ամէն բան մոռցաւ , մինչեւ անգամ ինքզինքը , մինչեւ որ ծաւ մը եղաւ , ուրիշի մը , անծանօթի մը կորսուած , մոլորած ցաւը :

Եւ սակայն անտկնկալ մը չեղաւ ինծի այս կսկածալի վախճանը : Իր սէրէն տարի մը առաջ արդէն սկսած էր խոովել զիս հոգիի տա-

բորինակ անհանգստութիւններով : Երբեք մտքէս չ'ելլեր կազանդի առտու մը . ու սրտիս մէջ դեռ կուլան իր խօսքերը :

—Ամբողջ կեանքս փախուստ մը եղած է : Վախ մը , անբացատրելի ու անողոք վախ մը սպառնալիքի մը պէս ծանրացած է միշտ գլխուս վրայ , ու հեւալով , յուզումէ հեւալով կը փախչի՛մ , կը փախչի՛մ , կը փախչի՛մ խենդի մը պէս : Անըմբռնելի բան մըն է ասիկա , ու չեմ կրցած ազատագրուիլ անկէ , որովհետեւ վախնալէս կը վախնամ : Երբեք խաղաղութեան ամբողջական օր մը չեմ ունեցած : Մոռացումի հազուադէպ երջանիկ ժամերուս մէջ յանկարծ ինքզինքիս եկած ու յանցաւորի մը պէս կանգ առած եմ իմ գինովցնող յափշտակութիւններուս մէջ : Յոյս մը երբեք զիս տարամերժօրէն չէ լեցուցած : Ամենէն ազւոր երազներուն անցքը զգացած եմ հոգիիս մէջ , վաղամեռ իշխանուհիներուն պէս : Եւ սակայն կը յուսամ միշտ , սնուցանելու համար վախս , իմ հսկայ վախս :

«Աստի մը այսպէս չէի . այս տագնապի շրջանը չեմ գիտեր երբ սկսաւ . բայց անիկա հիմա տիրած է ամբողջ էութեանս , ու կը վախնամ , կը վախնամ , կը վախնամ ինքզինքէս : Անգործ ու զով ու եղբայրական մեծութիւններու ծարաւը ունիմ . ինծի այնպէս կուգայ որ եթէ ամբողջ աստի մը ապրելու եւ զանակս փոխէի , ու այս տեղերը մոռնայի , սա գորշ երկինքը , անձրեւի այս անհուն էջքը , պարտէզիս սա ծառը , այս մարդերը , սա դիմացի տուները , զիս սիրողները , զիս աւտողները , ինծի խոժոռ նայողները , —պիտի փոխուէի ես ալ : Աստիք ամենքը կ'ուզէի մոռնալ , ու ա՛լ չյիշել բնաւ զանոնք , ու այս ամենուն մէջէն , այս ամենուն վրայէն ետ առնել ինչ որ առած եմ անոնց իմ էութիւնէս , ու նոր կեանք մը սկսիլ թարմ ու վճիտ զգացումներու , եւ ինքզինքս մոռնալ բարերար ու կազդուրիչ ապաքինումի մը թրմութեանը մէջ : Բայց այդ ճիգին անկարող եմ , շատ խորունկ կերպով մտած եմ զիս շրջապատող իրերուն մէջ : Ու յետոյ—վայրկեան մը մտածելէ ետքը—չեմ ալ ուզեր : Հիմա սկսած եմ քաղցրութիւններ գտնել վախիս մէջ իսկ . սկսած եմ ամէն բանէ աւելի վախս սիրել , ու գուրգուրալ ցաւիս վրայ , ու զայն ընդլայնել , ու օրուիլ անով , այնպէս որ երբեմն , չպիտի փոխէի զայն ո եւ է երջանկութեան հետ : Եւ սակայն շաբօ օրեր , ինչ-

պէս այսօր , անիկա կ'ընկճէ զիս , ու այնպէս կ'ընկճէ որ պոռալու կը ստիպուիմ , վազելու մէկուն փարեղու , ազաչելով որ օգնէ ինծի , անուշ ու լացնող ու եղբայրական բաներ ըսէ ինծի որ չխենդանամ : Տօնական օրերուն մանաւանդ՝ երբ հոնտոր մարդկութիւն մը այնչափ տափակօրէն կ'երջանկանայ , ամենէն աւելի կը զգամ որբութիւնը , մինակութիւնը իմ դատապարտուած հոգիիս , ու կը դողդղամ յուսահատ ըմբոստացումովը իմ զգայնութեանս զոհուած իրաւունքներուն :

«Եւ յուսահատութիւն կուգայ կոր վրաս , ու ժասպառ ու հեւացող կեանք մըն է իմինս հիմա : Ցաւազին ուշադրութեամբ մը ներքին կեանքիս վրայ , աստիճանական սպառումս կը դիտեմ : Տարօրինակ պատկերներ , յուզումներ իրարու կը յաջորդեն , արհամարհանքի ու հպարտութեան հանդարտութիւններէն կ'անցնիմ ընկճող տկարութիւններու , ու վատ ըզձանքներու : Անէացումի ու վախճանի իմաստասիրական ու իջազազ արտմութեանէն՝ յուսահատ ընդզումներու ու կսկծալի տենչանքներու : Ու ազւոր երազներ զեղեցիկ երանութիւններու՝ ծիածաններու պէս ցօղոտ թրթրոտումով մը կը փթթին , կ'ուռճանան , կը ծաւալին , ու լուսաւոր ճարտարապետութիւններ նուազի , բուրումի ու սիրոյ՝ տիրակա՛նօրէն կը բարձրանան հոգիիս մէջ , ու ասոնք ամբողջ էութեանս խորը ցաւազին ու երկար լացի մը մէջ կ'երկարաձգուին :

«Պզտիկ , պզտիկ բաները կը խոչորնան ու զեղիս մէջ . խոժոռ նայուածք մը զոր տըխմար մը նետեց ինծի՝ լլկող յաճախանքը կ'ըլլայ : Եւ նոյն իսկ անամիտ էակի մը համակրութեան կարօտը զիս կը մսեցնէ ու խղճի խայթի մը պէս կը հալածէ զիս : Ամէն բան որ կ'անցնի հոգիիս մօտէն , խղճի խայթ մը կը դառնայ որ չի լռեր մինչեւ որ նոր մը անոր տեղը չգայ բռնել : Ահռելի կարողութիւններ ունիմ ինքզինքս ամբաստանելու , ինքզինքս չարչարելու : Ամբողջ կեանքս կ'անցնի ինքզինքիս անիրաւելով , ու ատոր համար բողոքելով ինքզինքիս զէմ , տրանջալով ինքնաչարչար ցաւերուս զէմ , հոգիիս խորը՝ հոգիիս գանգատները մտիկ ընելով : Եւ ասիկա՝ առանց դադարի , ցորեկը , գիշերը , ամէն ժամ , ասղընտելով ուղեղս , խեղճ ուղեղս ուր չբացատրուած զեղեցկութիւններ տենդէս կը տարուին : Ա՛լ ազատապա՛ռելու յոյսը չունիմ : Զգացումներս իրարու կը խառնուին , ու մի-

նակ ու տիրական՝ ինծի կը մնայ վախիս գիտակցութիւնը : Ես որ մէկէ մը չեմ վախնար, ես որ ամենուն առջեւ կրնամ ժպտիլ անտարբեր ու արհամարհոտ, կը վախնամ ինքիւմէս : »

Ինե՛ղճ չարատանջ հոգի : Անխմատ ու մանկական վախ մը սպառեց զինքը, ու կորսնցել տուաւ իրեն ազնուական յուզումի ու մտածումի բոլոր այն նուրբ ու հեշտալի քերթուածները որով իր հոգին լեցուած էր, եւ որոնց իրականացումին համար սակայն պէտք եղած խաղաղութիւնը երբեք չունեցաւ : Եւ յետոյ՝ իրաւ անիմաստ, մանկակա՞ն էր այդ վախը, բոլոր կորնչելի բաներուն ընկճող բմբուումին, դատապարտուածի, այդ վախը, երբ շատ անգամ մենաւոր սենեակին մէջ երկու ձեռքերովը գլուխը բռնած էր անձայն սարսափով մը, կամ դուրս՝ փողոց՝ վազած էր, մինա՛կ, մինա՛կ չմնալու համար, ուրիշի մը հետ ըլլալու համար, — մինակ չմնալու համար Անոր հետ, իր Թշնամիին հետ որ իր մէջը պահուած էր :

Հիմա, հոգին մութ ու մայրական ծոցին մէջ, ա՛լ զագրած են իր վախերն եւ իր խռովքները :

Եւ ես, միս-մինակ իմ մորմոքներուս հետ, ինքզինքս կուտամ զանդակներուն որ սեւ երկնքին մէջ անհունօրէն դեռ կուլա՛ն, կուլա՛ն մարդերուն տրտում ճակատագիրը :

ՉԱՐԵՉ ՎԱՐՍԱՄԵԱՆ



ԵՐԳԵՐ



Ա

Ո՛վ մայր երկիր, մի ֆից կանգ առ ու լրսի՛ր
Զաւակներդ հեկեկսկսկն ու արսասոսփ .
Նոխ մերկ եւ, անօրի եւ ու ծարսու ,
Թաւալում ես միկն դու ուղիդ անբասոյգ :

Ո՛ւր ես սանում ֆո գաւակները յոգնած,
Արագ սրացնով իրեզերքը ձեղեկով .
Ո՛ւր ես դիմու՛ւ, ուղիդ զըրկող հրրակայծ
Աշխարհների մեջ անյոյս լուռ սողալով :

Ո՛խ դեպի ֆայր այն սահնակներն հեռաւոր,
Որոնց մասին երազները ցակնուցիր
Պասեղ եւ ֆո գաւակներին իրնում խոր,
Ո՛վ մայր երկիր, դեպ այն կողմեր սրբացիր :

Բ

Տես փոքորիկը երգում է կրկին
Տանջանքի երգը խորին գիշերով .
Այիքը ծովում, շանքը անպերում
Արնազակի սայիս եւ ևնրա երգին :

Իմ սիրտը խռոված երգում է մեկեղ ,
Նա էլ մի ծո՛վ է, ծո՛վ սանջակների ,
Փոքորիկից, շանքից, այիքից անեղ՝
Հրեցում եւ ևնրա շեշտերն ան եւի :

Գ

Ների՛ր, Ասումս, չեւ հաւասում երկրնին .
Այդ հաւասը ծայր է դարձել ինձ հաւար .
Չեւ հաւասում քե կս, մի կեանք երկնային ,
Ուր անահե է մարդկութիւնը եւ արդար :

Թեւ մայրս ինձ սովորեց ֆեց աղօթել ,
Մակայն կեանքում այդ ես շուտով մոռացայ .
Անեւայն բան միայն իմ մեջ զընկնում
Ընկնումս անահե անահե անահե . . .

Էլ չե՛ւ իրենդում եւ ոչ մի բան երկրնին .
Մահանից յե, ես ոչինչ չեւ ըստսում .
Չե՛ւ սարսափում կեանքի վայրագ պայտարից .
Իմ իրեւս անգին գեկս է այդ կրուում :

Եւ ես գիտեւ զոնուի անվասի, անըրտունջ՝
Թըշուտ մարդու դասի հաւար կրուումով .
Գիտե՛ւ դիմել դեպ Գողգոթա անըրտունջ,
Մահուանը վարձ անահե մի կեանք չուտալով :

Լինեւ անգամ անահեութիւն մահից յե,
Չեի՛ ցանկալ այրի անվեց ու չըզգայ . . .
Կեանք ֆայր է, երբ ունի մա՛հ ևս իր հե, .
Երբ կայ կրուի, սիրեղ-սիրուն, շայ-յուտայ :

ԱՐԱՄ ՉԱՐԸԳ

Լայպիգ



ՀԵՐՈՎԴԻՒ(*)

(Շար .)

Պատնէշները բազմութեամբ ծածկուած էին երբ Վիտելլիոս բակը մտաւ : Իր թարգմանին թեւին կը կրթնէր . ետեւէն կուգար մեծ կարմիր դեպակ մը՝ գարգամանակներով ու հայելիներով զարդարուած . հիւպատոսի պարեգօտ , լատիկլավ ու մոյկեր ունէր , եւ սակրաւորներ՝ իր անձին շուրջը :

Դուռնի վեր ցցեցին իրենց տասերկու խըրձունքները , ճպտաներ՝ փոկով մը կապուած , մէջտեղը տապար մը : Այն ատեն , ամենքը սարսուռացին հողմայեցի ժողովրդին վեհութեանը հանդէպ :

Դեսպակը , զոր ութը հոգի կը կրէին , կանգ առաւ : Պատանի մը դուրս ելաւ անկից , հաստափոր , դէմքը կարմրաշիտ , մատները մարգրիտներով բեռնաւոր : Բաժակ մը մատուցին անոր՝ զինիով ու համեմանքներով լեցուն : Խմեց , եւ երկրորդ մըն ալ ուզեց :

Չորրորդապետը , Անթիհիւպատոսին ծնկուրներն ինկած , ցաւ կը յայտնէր անոր գալուստին շնորհն աւելի կանուխ իմացած չըլլալուն : Ապա թէ ոչ հրամայած կ'ըլլար ճամբաներուն վրայ պատրաստել ամէն ինչ որ հարկաւոր է Վիտելլիոսներուն համար : Վիտելլիա դիցուհիէն կը սերէին անոնք : Ուղի մը , որ Յանիկուէն մինչեւ ծովը կը տանէր , անոնց աւտուովը կը յորջորջուէր տակաւին : Գանձաւորները , հիւպատոսները անհամար էին անոնց ընտանիքին մէջ : Գալով Լուկիոսին , որ հիմա իր հետն էր , պէտք էր շնորհակալութեամբ պաշարել զայն՝ իբրեւ յաղթողը Կլիտացուց եւ իբր հայրը այդ դեռատի Աւլոսին , որ իր երկիրը դառնալու ձեւն ունէր , քանի որ Արեւելքը հայրենիքն է աստուածներու : Այս չափազանցաբանութիւնները լատիներէն լեզուով արտայայտուեցան : Վիտելլիոս զանոնք անխոով ընդունեցաւ :

Պատասխանեց թէ Մեծ Հերովդէսը կը բաւէր ազգի մը փառքին համար : Աթենացիք Ոլիմպեան Խաղերուն վերատեսչութիւնը յանձնած էին անոր : Աւգոստոսին ի պատիւ տաճարներ կանգնած , համբերատար , հնարամիտ , ահարկու եղած էր ու Կեսարներուն միշտ հաւատարիմ մնացած :

(*) Տե՛ս՝ քիւ 1 , 6-7 .

Արոյրէ խոյակներով սիւներուն մէջտեղէն Հերովդիան նշմարուեցաւ որ կայսրուհւոյ քալուածքով մը կը յառաջանար , կիներով ու ներքինիներով շրջապատուած՝ որոնք ոսկեզօծ արծաթէ ափսէներու մէջ վառուած խընկեղէններ կը բերէին :

Անթիհիւպատոսը երեք քայլ առաւ զայն դիմաւորելու , եւ գլխու խոնարհումով մը բարեւեց :

— Ի՞նչ երջանկութիւն , գոչեց Հերովդիա , որ այլեւս Ագրիպպաս , Տիրերիոսի թշնամին , անոր վնասելու անկարելութեան մէջ կը գտնուի :

Վիտելլիոս այս եղելութիւնը չէր դիտեր . այդ կինը վտանգաւոր թուեցաւ իրեն . եւ տեսնելով որ Անտիպաս կ'երդուրննար թէ կայսեր համար ամէն բան ընել յանձն պիտի առնէր , աւելցուց՝ « Եո՞յն իսկ ի վնաս ուրիշներու : »

Պարթեւներու թագաւորէն պատանդ առած էր , եւ կայսրը ատի մոռցեր էր , որովհետեւ Անտիպաս , որ բանակցութեանը ներկայ կը գտնուէր , իր վարկը բարձրացնելու համար իսկոյն հաղորդած էր այդ լուրը : Ատկից , խորին ատելութիւն մը , եւ օգնութիւն հասցընելու յապաղումներ :

Չորրորդապետը թոթովեց : Բայց Աւլոսըսաւ խնդալով .

— Հանդարտէ՛ , ես քեզ կը պաշտպանեմ :

Անթիհիւպատոսը չլսել ձեւացուց : Հօրը դիրքը տղուն պղծութենէն կախում ունէր . եւ այդ Կապրէի տիղմերուն ծաղիկը այնքան շահաբեր էր իրեն համար՝ որ մեծարանքով կը պաշարէր զայն , զգուշանալով հանդերձ , որովհետեւ թունաւոր էր ան :

Աղմուկ մը բարձրացաւ դրան տակ : Ներս կը մտնէին շարք մը ճերմակ ջորիներ , որոնց վրայ հեծած էին քահանայի զգեստով անձեր : Սագուկեցիներ ու Փարիսեցիներ էին , զոր միեւնոյն փառասիրութեւնը կը մղէր Մաքեդոնոս , վասնզի առաջինները կ'ուզէին պատարագչութեան պաշտօնը ստանալ , իսկ միւսները՝ զայն պահպանել : Իրենց դէմքերը մոայլ էին , մանաւանդ Փարիսեցիներունը թշնամի Հոմմի եւ Չորրորդապետին : Իրենց պատմուճանին քղանցքները շարժումներուն արգելք կը դառնային բազմութեան մէջ , եւ խոյրը ճակատնուն վրայ կը տատանէր մազաղօթէ ապարօշին վրայէն ուր գրուածքներ գծուած էին :

Գրեթէ միեւնոյն ատեն , յառաջապահ գունդին զինուորները հասան : Վահաններնին պարկերու մէջ գրած էին , որպէսզի փոշիէն չաղտտան , եւ անոնց ետեւէն կուգար Մարկելլոս , Անթիիւ պատին տեղապահը , եւ հարկահաններ որոնք իրենց անութին տակ փայտէ պնակիտներ կը սեղմէին :

Անտիպասիւր մարդոցը գլխաւորները անուանեց , Թովմայի , Քանթերա , Սեհոն , Ամմոնիոս Աղեքսանդրացի , որ իրեն ասփալտ կը գնէր , Նաաման , իր թեթեւազէններուն զնուգապետը , Նասիմ Բարեւոնացին :

Վիտելլիոսի ուշադրութիւնը գրաւած էր Մաննային :

—Ո՞վ է սա մարդը :

Չորրորդապետը շարժուածքով մը հասկցուց թէ զահիճն էր :

Յետոյ Սաղուկեցիները ներկայացուց :

Յովնաթաս, կարճուկ մարդ մը համարձակ ձեւերով եւ որ յունարէն կը խօսէր , պաղատեցաւ որ տէրը զիրենք պատուէ Նրուսաղէմ այցելութեամբ մը : Վիտելլիոս յայտնեց թէ հաւանականաբար պիտի երթար այնտեղ :

Եղիազար , կեռ քթով ու երկայն մօրուքով , խնդրեց որ փարիսեցիներուն դարձնեն քահանայապետին վերարկուն զոր քաղաքային իշխանութիւնը Անտոնիա աշտարակին մէջ վար դրած էր :

Յետոյ , Դալիլիացիները Պոնտոս-Պիզատոսը ամբաստանեցին : Խենդի մը պատճառով որ Դալիլիոսի ոսկեզէն անօթները կը փնտռէր քարայրի մը մէջ՝ Սամարիոյ մօտ , բնակիչներէն մաս մը սպաննել տուած էր : Եւ ամենքը մէկանց կը խօսէին , Մաննայի՝ աւելի ուժգնապէս քան միւսները : Վիտելլիոս հաւաստեց թէ ոճրագործները պիտի պատժուէին :

Պոռչտուքներ պայթեցան կամարակապի մը զիմացը , ուր զինուորները իրենց վահանները կախած էին : Մածկոյթները վար առնուած ըլլալով , ունկոյտներուն վրայ կեսաբին պատկերը երեւցաւ : Հրէաներուն համար կու պաշտութիւն էր այդ : Անտիպաս մէկ քանի խօսք ուղղեց անոնց , մինչդեռ Վիտելլիոս , սիւնեարին մէջ բարձր աթոռի մը վրայ նստած , զարմացմամբ կը տեսնէր անոնց կատաղութիւնը : Ծիբերիոս իրաւունք ունեցած էր անոնցմէ չորս հարիւր հողի Սարտենեա աքսորելու : Բայց իրենց երկրին մէջ զօրաւոր էին . եւ հրամայեց որ վահանները վերցնեն :

Այն ատեն , Անթիիւ պատոսը պաշարեցին , առանձնաշնորհումներ , ողորմութիւններ հայցելով : Իրարու հագուստ կը պատուէին , իրար կը ճզմէին , ու տեղ բանալու համար , ստրուկներ գաւազաններով աջ ու ձախ կը զարնէին : Դրան ամենէն մօտ զանուոյնները կածանը իջան . ուրիշներ անկից վեր կ'ելլէին . ետ քաշուեցան , երկու հոսանքներ իրարու կը զարնուէին այդ մարդկային զանգուածին մէջ որ կը ծփար՝ պարիսպներուն շրջափակէն ճնշուած :

Վիտելլիոս հարցուց թէ ինչո՞ւ այդքան մարդ կար խոնուած : Անտիպաս բացատրեց պատճառը , որ իր տարեգարձին խնջոյքն էր , եւ ցոյց տուաւ իր մարդոցմէն շատերը որ բերդին ատամունքներուն վրայ ծոած՝ չուանով վեր կը քաշէին մտի , պտուղի , բանջարեղէնի ահազին կողովներ , յամոյրներ ու տանեղներ , երկնագոյն լալն ձուկեր , խաղող , ձմերուկ ու նուա՞ բրգածեւ զիլուած : Աւելոս ինքզինքը չկրցաւ բռնել : Իէպի խահանոց նետուեցաւ , մղուած այն որկրամուտութենէն որ աշխարհ պիտի պաշեցնէր :

Ներքնատան մը քովէն անցնելով , կաթսաներ նշմարեց որ զրահի կը նմանէին : Վիտելլիոս եկաւ զանոնք դիտելու , եւ պահանջեց որ բերդին գետնափոր սենեակները բանան իրեն :

Ժայռին մէջ փորուած էին անոնք , բարձր կամարներով , հեռուէ հեռու սիւներու վրայ յեցած : Առաջինը հնտաի գէնուզարդեր կը պարունակէր . բայց երկրորդը լեփ-լեցուն էր տէգերով , որոնք իրենց սայրերը կ'երկարէին , փետուրներու փունջէ մը դուրս նետուելով : Երրորդը եղէգէ փաթաթներով օթոցուած կը թուէր , ա՛յնքան քովէ քով շարուած էին բարակ սլաքները : Եիմշիրներու շեղփեր կը ծածկէին չորրորդին պատերը : Հինգերորդին մէջտեղը , սաղաւարտներու շարքեր իրենց կատարներով կարմիր օձերու վաշտ մը կը ձեւացնէին : Վեցերորդին մէջ կապարձներ միայն կը տեսնուէին , եօթերորդին մէջ՝ կնեմիզներ միայն , ութերորդին մէջ՝ բազպաններ լոկ . հետեւեալներուն մէջ , երեքժամիներ , ճանկեր , ստնգուղներ , չուանեղէններ , մինչեւ անպամ՝ կայմեր՝ քարընկէցներու համար , ու բոժոժներ՝ ուղտերու կուրծքին համար , եւ որովհետեւ լեռը իր հիմունքին կողմէ երթալով կը լալնապար , ներսիդին պարպուած՝ մեղուի փեթակի մը պէս ,

այդ սենեակներուն ներքեւ կային աւելի բազմաթիւ սենեակներ եւ աւելի խորունկ :

Վիտելլիոս , իր Փինէէս թարգմանը , եւ հարկահաններու պետը Սիսեննա , այդ սենեակներէն կ'անցնէին ջահերու լոյսով , զոր կը կրէին երեք ներքինիներ :

Ստուերին մէջ կ'որոշուէին քստմնելի բաներ՝ բարբարոսներէն հնարուած , զամբողջ զինուած մահակներ , վէրքերը թունաւորող նիզակներ , արքայներ որ կոկորդիլոսի ծնօտի կը նմանէին . վերջապէս Չորրորդապետը Մաքերոսին մէջ քառասուն հազար հոգիի մթերք ունէր :

Այդ բոլորը հաւաքեր էր իր թշնամիներուն զաշնակցութեան հաւանականութիւն մը նախատեսելով , Բայց Անթիհիւպատոսը կրնար կարծել , կամ ըսել , թէ Հոովմայեցոց զէմ կոռուելու համար էին ատոնք , ու բացառուութիւններ կը փնտռէր :

Կարող էր յայտարարել թէ ատոնք իրը չէին . շատը կը ծառայէին աւազակներուն զէմ պաշտպանուելու . արդէն , ատոնց պէտք կար Արաբներուն համար . կամ թէ , այդ ամենը իր հօրմէն մնացած էր : Եւ փոխանակ Անթիհիւպատոսին ետեւէն քալելու , առջեւէն կ'երթար , արագ քայլերով : Յետոյ գնաց կեցաւ պատին առջեւ . եւ զայն կը ծածկէր իր պարեգօտովը , զոր երկու արմուկները կ'ընդլայնէին . բայց զրան մը վերնամասը , իր գլխէն բարձր , կ'երեւար : Վիտելլիոս նշմարեց , եւ ուզեց զիտնալ ի'նչ կար հոն :

Բարեկացին միայն կրնար բանալ .

— Կանչէ՛ Բարեկացին :

Սպասեցին անոր գալուն :

Հայրը եփրատի ափունքներէն եկած էր ինքզինքն ի սպաս գնել Մեծ Հերովդէսին , հինգ հարիւր ձիաւորով , արեւելեան սահմանները պաշտպանելու համար : Թագաւորութեան բաժանումէն յետոյ , Նասիմ Փիւլիպոսի քով մնացած էր , եւ հիմա Անտիպատին կը ծառայէր :

Երեւցաւ , աղիզ մը ուսին վրայ , ձեռքը խարազան մը : Բազմազոյն խրացքներ իր ծունկերը պինդ կը սեղմէին : Հաստ բազուկները առանց թեզանիքի պատմուճանէ մը դուրս կ'ելլէին , եւ մագոտ մորթէ գտակ մը կը հովանաւորէր զէմքը , որուն մորուքը օղակ օղակ խոպոպուած էր :

Նախ , թարգմանին ըսածը չհասկնալ ձեւացուց : Բայց Վիտելլիոս ակնարկ մը նետեց Անտիպատին , որ խկոյն իր հրամանը կըրկնեց : Այն ատեն , Նասիմ երկու ձեռքերը զրանը փակցուց : Դուռը պատին մէջ սահեցաւ :

Տաք օդի շունչ մը արտաբղիսեցաւ աղջամուղջէն : Ուղի մը կ'իջնէր դարձդարձելով . անկից յառաջացան ու հասան սեմին առջեւ քարայրի մը , որ միւս գետնափորէն աւելի ընդարձակ էր :

Կամար մը , խորը , կը բացուէր գահավէժին վրայ , որ այդ կողմէն միջնաբերդը կը պաշտպանէր : Այժտերեւուկ մը , որ կամարին կը փաթթուէր , իր ծաղիկները դրսի լոյսին մէջ կը կախէր : Հողուն երեսը , բարակ ջուր մը կը խոխոջէր :

Ճերմակ ձիեր կային հոն , հարիւրի չափ , որ գարի կ'ուտէին իրենց բերնին հաւասարութեամբը զրուած տախտակի մը վրայէն : Ամենուն ալ բաշք կապոյտ ներկուած էր , կճղակները կեմեղենէ թաթպաններով ծածկուած , եւ ականջամէջքին մազերը ճակտուկրին վրայ ուռեցած՝ կեղծծամի մը նման : Շատ երկայն պոչովնին թուօրէն իրենց կարթերը կը ծեծէին . Անթիհիւպատոսը հիացումէն պապանձած մնաց :

Հրաշալի անասուններ էին , օձի պէս ճապուկ , թոչունի պէս թեթեւ : Հեծեալին նետի չափ արագ կը սլանային , մարդիկը փորերնուն խածնելով կը զգեսնէին , ժայռիէ կ'անցնէին առանց նեղութեան , անդունդներու վրայէն կը ցատքէին , եւ ամբողջ օր մը դաշտերուն մէջ կը շարունակէին իրենց խելայից արշաւը . բառ մը զիրենք կը կեցընէր : Նասիմը ներս մտնելուն պէս , անոր զէմը եկան , ինչպէս ոչխարներ՝ երբ հովիւը կ'երեւայ . ու պարանոցնին երկնցուցած , զանի կը գիտէին խոտված՝ իրենց տղու աչքերովը : Սովորութեանը համեմատ , կոկորդիլոս խորէն խոպոտ ճիւղ մը արձակեց որ զսնունք զուարթացուց . ու կը ծառանային , ազատ միջոցի անօթի , քալելու անձկակարօտ :

Անտիպատ , վախնալով որ Վիտելլիոս զանոնք չաւնէ չտանի , բանտարկած էր այդ սեղը , որ անասուններու կը յասկացուէր՝ պաշարման պարագային :

—Ախորը գէշ է , ըսաւ Անթիիւպատոսը , եւ այս ձիերը կրնան փճանալ հոս : Տուցակը շէնէ' , Սիսեննա :

Հարկահանը մէջքէն պնակիտ մը հանեց , ձիերը համրեց ու արձանագրեց : Դիմոսական ընկերութեանց գործակալները , գաւառները կողոպտելու համար , կուսակալները կը կաշառէին : Այս մարտը քիթը ամէն տեղ կը խոթէր , իր կուզի ծնօտովը ու քթթուն կուպերովը :

Վերջապէս բակը ելան նորէն :

Պոռնոզէ բոլորակներ՝ սալաքարերուն մէջ , հոս ու հոն , ջրհորները կը ծածկէին : Ուշիւ զննեց ատոնցմէ մէկը , միւսներէն աւելի մեծ , եւ որ միւսներուն հնչականութիւնը չունէր իր գարշապարին տակ : Բոլորին ալ վրայ ետեւէ ետեւ ոտքը զարկաւ , յետոյ ոռնաց , գետինը դոփելով :

—Գտա՛յ , գտա՛յ : Հոս է Հերովդի գանձը : Հերովդի գանձերուն հետախուզութիւնը Հըռովմայիցւոց յիմարութիւններէն մէկն էր :

Անոնք գոյութիւն չունէին , երզուընցաւ Չորրորդապետը :

Սակայն , ի՞նչ կար ատոր ներքեւը :

—Ոչի՛նչ . մա՛րդ մը , բանտարկեա՛լ մը :

—Տուցո՛ւր , ըսաւ Վիտելլիոս :

Չորրորդապետը չհնազանդեցաւ . Հրէաները կրնային այսպէսով իր գաղտնիքը իմանալ : Դժկամակութիւնը զոր կը ցուցնէր բոլորակը բանալու , Վիտելլիոսին անհամբերութիւն կը պատճառէր :

—Կոտրեցէ՛ք , պոռաց նիզակաւորներուն :

Մաննայի գուշակած էր անոնց միտքը : Տապար մը տեսնելով , կարծեց թէ Նւքանանը պիտի գլխատէին . եւ մետաղէ զանգուածին վրայ առաջին հարուածին , նիզակաւորին բազուկը կեցուց , կափարչին ու սալաքարերուն մէջտեղ տեսակ մը կեռ սահեցուց , յետոյ իր երկայն վտիտ թեւերը պրկելով , գայն վեր վերցուց . ցատքեց ինկաւ ան . ամենքը սքանչացան այդ ծերունիին ուժին վրայ : Փայտով աստառուած կափարչին տակ , նոյնքան ծաւալ ունեցող դռնակ մը կը տարածուէր : Մէկ կոուփի հարուածով , դռնակը երկու տապակի ծալուեցաւ . այն ատեն ծակ մը տեսնուեցաւ , ահագին փոս մը որուն մէջ ուրորուելով կ'իջնէր սանդուղ մը առանց բարամբունքի : Եւ անոնք որ եղերքը ծոցեան .

խորը նշմարեցին տարտամ ու զարհուրելի բան մը :

Մարդկային արարած մը գետինը պառկած էր , երկայն մաղբու տակ որոնք իր կոնակը ծածկող անասունի մորթին կը խառնուէին : Ոտքի ելաւ : Ճակատը հորիզոնական ձեւով գամուած վանդակապատի մը կը դպչէր . ու մերթ ընդ մերթ , իր որջին խորութեանցը մէջ կ'անհետանար :

ԿԻՒՍԹԱՎ ՏԼՈՊԷՌ

(Շարունակելի)

ԻՄԱՍԱՍԻՐԱԿԱՆ ԽՕՍՈՒՇՈՒՏՈՒՔՆԵՐ

ՊԱՏՃԱՌՈՒՈՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

(DÉTERMINISME)

Ահա խնդիր մը , որ երկար տարիներէ ի վեր վիճաբանութեան նիւթ ընծայած է ամէն դոյնի : ամէն դաւանանքի փիլիսոփաներու : Հեթանոս իմաստասէրները , քրիստոնեայ ընազանցագէտները , ամենքն ալ իրենց ըմբռնումը , իրենց դաւանանքը ունեցած են այդ խնդրոյն մէջ , եւ վերջապէս գիտական իմաստասիրութիւնը եկած եւ անոր տուած է լուծում մը որ վճռական լուծումն է մեր կարծիքով :

Խնդիրը կը կայանայ սա հարցման մէջ՝ Մարդու կամքը ազատ է թիո՞ղ :

Անոնք որ կը կարծեն թէ ազատ է մեր կամքը , ազատական պիտի կոչենք . իսկ անոնք որ կը պնդեն թէ մեր կամքը արդիւնք մըն է , որ , նման ամէն արդիւնքի , ունի եւ իր պատճառը : պատճառաւորական պիտի անուանենք : Այդ երկու կարծիքներն ալ իրենց իբրև պաշտպան ունին մեծ հեղինակութիւններ հին եւ նոր դարերու իմաստասէրներուն մէջ :

Ազատականութիւն են դաւանած Լուկրետիոս , կաթոլիկ եկեղեցիին ամենամեծ ներկայացուցիչները , ինչպէս Պոսիւէ , Ֆէրըրոն , նոր ժամանակներու իմաստասէրներ՝ ինչպէս Տէքարթ ,

Ռուսօ , Գանթ , Շէլլինկ , եւ այլն : Հակառակ ճամբարին մէջ կը գտնենք նոյնքան նշանաւոր անձնաւորութիւններ , նոյնքան մեծ հեղինակութիւններ , Լուտէր , Գալլին , Եպիկուրոս , Սկեպտիկեանները , Լոք , Ռոլէն , Վովնարկ , Գալթի շիւմ , Սքրինոզա , Վոլթէն եւ այլն :

Ինչպէս կը տեսնուի , կարելի չէ ուրեմն զէպ ի այս կամ այն կարծիքը հակիլ՝ հեղինակութիւն ունեցող անձնաւորութիւններու կարծիքին հետեւելով պարզապէս :

Պէտք է խորհիլ , պատճառաբանել եւ կարծիք , համոզում գոյացնել մեր անձնական խնդարկութիւններուն վրայ հիմնուելով :

Նախ եւ առջ հարկաւոր է ճշգիւ ըմբռնել թէ ինչ կը նշանակէ «կամքի ազատութիւն» բառը , այնպէս ինչպէս կ'ըմբռնեն ազատականները : Առենք օրինակ մը . Այսօր տունէն դուրս չեմ ուզիր ելլել . եթէ ճշմարիտ ազատականի մը հարցնէք թէ ինչո՞ւ չ'ուզեր դուրս ելլել , ձեզի պիտի պատասխանէ՝ Չեմ ուզեր որովհետեւ կամքս այդպէս է : Եւ եթէ հարցնէք թէ՛ ինչո՞ւ իր կամքը այդպէս է , Ֆէյնլոնի նման ձեզի պիտի պատասխանէ , թէ իր կամքին ո եւ է պատճառ չի ճանչնար :

Գիշ մը խորը իջնանք այդ պատճառաբանութեան եւ մտնէն քննենք զայն : Կը տեսնենք թէ ինչ որ ազատականները «կամք», «ազատութիւն» կը կոչեն , ուրիշ բան չէ բայց եթէ կամայականութիւն (arbitraire), քանի որ արարք մը՝ որ արդիւնք չէ ուրոյնալ շարժառիթի մը , դատապարտուած է , նոյն իսկ այդ պատճառով , անկայուն . յարափոփոխ ըլլալու ըստ քմաց իր հեղինակին : Բայց միթէ ամենէն համոզուած ազատականը կ'ուզէ՞ր արդեօք հաւատք ընծայել այդպիսի սկզբունք ունեցող անձի մը խօսքին : Այդ անձը այսօր կրնայ իր ամենէն հաւատարիմ բարեկամը ըլլալ եւ վաղը՝ եթէ խելքին փչէ՛ կրնայ իր ամենէն ռիսկիւս թշնամին դառնալ , քանի որ այս կերպարանափոխութիւնը անոր ազատ կամքէն կամ անոր կամայականութենէն կախուած է միայն : Ոչ բարոյական օրէնք , ոչ անոր ամբողջ անցեալը , ոչ անոր ժառանգականութիւնը , ոչ մէկ բան կրնայ մեզ ապահովցնել , մեզի զբաւական ըլլալ անոր ապագայ վարմունքին : Այս մասին յաջորդ յօդուածով մը պիտի խօսինք երկարօրէն , ուստի եւ չենք ծանրանար առ այժմ այդ կէտին վրայ : Մեր նպատակն է միայն ցոյց տալ «կամքի ազատութիւն» բառին ճշմարիտ իմաստը , որովհետեւ բառերը , մասնաւանդ «ազատութիւն» բառը՝ որ այնքան սիրելի է ամէն զարգացած անձի ու մասնաւորապէս մեզի նման ընկճուած ազգերու , կրնան տեղի տալ չափազանց վրտանդաւոր թիւրիմացութիւններու :

Մեզի կը թուի թէ այդ աղետարեք վարդապետութեան հետեւանքներուն զոհ չըլլալու համար ամենէն ապահով միջոցն է ցոյց տալ

նախ թէ կամայականութիւնը գոյութիւն չունի ընտր , թէ աշխարհիս վրայ ամէն ինչ անյեղլի , անբռնաբարելի օրէնքներու ենթարկուած է եւ թէ հետեւաբար մեր միտքը , մեր իմացականութիւնը , մեր տրամաբանութիւնը , մեր կամքը , որոնք արդիւնք են մեզ շրջապատող արտաքին երեւոյթներու հաւատարիմ անդրադարձութեանը , չեն կրնար բացառութիւն կազմել այդ ընդհանուր օրէնքին : Երբ տեսնենք թէ ինչպէս կազմուած են մեր միտքը , մեր իմացականութիւնը դարերու յաջորդութեանը մէջ , անկարելի է պաշտպան հանդիսանալ այդ բարոյագեղձ վարդապետութեան , որուն հիմը տղիտութիւնը , խաւարը եւ մտքի ծուլութիւնն է միայն : Ո՛րքան ճշմարիտ է յոռետես իմաստասէրին խօսքը . «Կրօնքները լուսաճճիներու կը նմանին , խաւարի պէտք ունին փայլելու համար :» Խաւարը միակ եւ անհրաժեշտ պայմանն է արդարեւ կրօնքի նման երկզիմի եւ պղտոր տարրերու գոյութեանը : Ահա օրինակ մը , այս ճշմարտութեան իբրեւ ապացոյց , նոյն իսկ մեզ հետաքրքրող խնդրոյն մէջէն առնուած : Նախախնամութեան զազափարը բացարձակապէս անհաշտ է «կամքի ազատութեան» գաղափարին հետ . արդարեւ , եթէ երբեք գերագոյն էակ մը նախաահմանած է մեր մտքին , մեր իմացականութեան կատարելիք դերը ընկերական աշխարհին մէջ , մեր կամքը չի կրնար ազատ ըլլալ , քանի որ այդ գերագոյն էակը նախապէս գիտէ թէ ինչ կ'ուզենք ընել այս կամ այն պարագային մէջ : Փոխադարձաբար՝ եթէ ազատ է մեր կամքը , Աստուած չի կրնար գիտնալ թէ ինչպէս պիտի վարուինք բարոյական աշխարհին մէջ , եւ հետեւաբար նախախնամութիւնը չի կրնար գոյութիւն ունենալ , եւ Գերագոյն էակը զրկուած կ'ըլլայ իր ամենագիտութենէն , իր այդ ամենակալան ստորոգելիքներուն մէկէն :

Գիտէ՞ք թէ ինչպէս վճռած են այդ խնդիրը միջնադարեան նբամիտ աստուածաբանները . այդ հակասական երկու կարծիքները միանգամայն ընդունելով : Սակայն , ինչպէս տեսանք , Լուտեր ազատականութեան ամենամեծ հալածողներէն մէկն է եղած , ան է որ ըսած է թէ՛ «Ազատականութիւնը ընդունիլը Գրիստոս ուրանալ է :»

Անցողաբար նկատել կուտանք թէ կրօնքը իբրեւ պաշտպան աստուածային նախախնամութեան . մեծապէս կը մօտենայ իր դաւանանքով՝ ճակատագրականութեան :

Այս նախապատրաստական նկատողութիւններէն ետքը , կրնանք համարձակօրէն մտնել մեր խնդրին սիրտը եւ զայն դնել , նեարդ առ նեարդ ուսումնասիրելով :

Աչքէ անցընենք բոլոր գիտութիւնները , եւ պիտի տեսնենք թէ ընտրութեան մէջ չկայ երեւոյթ մը որ իր պատճառը չունենայ , թէ այն ամէն երեւոյթները , որոնց պատճառները անծանօթ ըլլալով , գերագոյն էակի մը

միջամտութեան գաղափարն էին թելադրած ազէտ մարդկութեան տղայական մտքին, այսօր գիտութիւնը եկած եւ երեւան է բերած այն պատճառները՝ որոնց պարզ արդիւնքներն են անոնք : Եւ եթէ կան երեւոյթներ որոնք, ինչպէս հոգեբանական երեւոյթները, տակաւին անբացատրելի կը մնան, բայց եւ այնպէս, բաց ի քանի մը վերացական կամ միատիքական մտքերէ, ճշմարիտ գիտունները, հիմնուելով այն մեծ, անյեղլի եւ ընդհանուր օրէնքին վրայ թէ «Չկայ արդիւնք առանց պատճառի», վստահ՝ գիտութեան մեզի ցոյց տուած հրաշալի հեռապատկերին վրայ, կ'ընդունին թէ պիտի գայ օր մը, ուր այդ ամենքը պիտի ստանան իրենց բացատրութիւնը, եւ նորանոր խորհրդաւոր գաղանփքներ պիտի յանեն մեր խուզարկութեան յարաբերաբար կատարելագործուած միջոցներով երեւան բերուած, գաղանփքներ՝ որոնք ուսումնասիրութեան նիւթ պիտի ընծայեն յաջորդ դարերու գիտուններուն եւ այսպէս հետզհետէ : Անոնք նախ եւ առաջ բնագիտութիւնը : Ահա քարի ահագին զանգուած մը, որ ապաւնտի մը կողէն բրդելով լեռան ստորոտը գրունուող գիւղին վրայ կը գահավիժի եւ զարհուրելի աղէտի մը պատճառ կը գտնայ . բազմաթիւ տուններ կը կործանին, աւերակ կը դառնան, կիներ, ծերունիներ եւ տղաքներ զոհ կ'ըլլան : Ի՞նչ պիտի ըսէին մեր նախնիք՝ որոնք չէին կրնար բացատրել այդ երեւոյթը . իսկոյն աներեւոյթ ուժ մը, անտեսանելի ձեռք մը պիտի երեւակայէին այստեղ, եւ թեւրեւ այդ աղէտը պիտի նկատէին իբրև պառուհատ մը, ի պատիժ մարդկային յանցանքներուն : Ի՞նչ կ'ըսեն ընդհակառակն նեւտոնէն ի վերնոյն իսկ ամենէն մեծ պաշտպանները այն վարդապետութեան զոր «ազատականութիւն» անուանեցինք . այդ երեւոյթին մէջ տիեզերական ձգողութեան օրէնքին մէկ կիրարկութիւնը կը տեսնեն, եւ կ'ընդունին թէ՛ արուած ըլլալով նոյն պայմանները, անխուսափելի եւ անհրաժեշտ կերպով միշտ այդ երեւոյթը տեղի պիտի աւենայ, ինչ որ կը նշանակէ թէ այդ օրէնքը տիեզերական է, եւ ոչ մէկ կամք, ոչ մէկ ազդեցութիւն չի կըրնար անոր արգելք հանդիսանալ :

Ամառնային գեղեցիկ առաւօտ մըն է . պայծառ երկնքին վրայ լուսազեղ կը թաւալի արեգակը, կեանքը կը տեղայ լոյսին եւ ջերմութեան հետ : Յանկարծ հովը կը սկսի ուժգին փչել, նախ ածօսը եւ հետզհետէ աւելի թանձր, ու թուխ ամպեր, իբրև օդաչու ձամբորդներ, անոր անշօշափելի բայց հզօր թեւերուն վրայ հեծած, կը հասնին մէկը միւսին ետեւէն . անոնց կողերէն՝ նախ խուլ ու հեռաւոր, եւ հետզհետէ աւելի մօտ ու շրորնդալից որոտումներ կը ցայտեն, եւ կայծակը՝ իբրև պտուղ այդ տարրերու յեղաշրջութեան՝ իր բեկբեկեալ եւ լուսաւոր ալիօսը կը զծէ շլացուցիչ անջրպետին մէջ : Ի՞նչ

կրնային խորհիլ նախնական մարդիկը՝ երբ այսպիսի յանկարծական յեղաշրջութեան մը հանդիսատես ըլլային : Իրենց զիւրայլալ եւ զիւրաբորբօք երեւակայութեամբ սարսափահար եղած, եւ չկարենալով որ ու եւ է պատասխան մը գտնել այն բազմաթիւ ինչոյններուն որոնք կը խուժէին իրենց մտքին մէջ, հոգի կուտային այդ բնական տարրերուն՝ որոնց արտայայտութիւնները ա՛յնքան ուժգինակի կը յափշտակէին զիրենք . անոնց կամայականութեան քմահաճոյքին մատնուած կը կարծէին իրենք զիրենք, կ'աստուածացնէին եւ կը պաշտէին զանոնք : Ի՞նչ կը խորհինք մենք այժմ ի տես այսպիսի տեսարանի մը : Հովը, մեզի համար ուրիշ բան չէ բայց եթէ արդիւնք միջոցորտային ճնշման յանկարծական փոփոխութիւններուն, որոնց համեմատ՝ երբ օդը թեթեւայ որոշեալ կէտի մը վրայ, իսկոյն շրջակայ կէտերէն դէպ ի այդ կէտը օդեղէն հոսանք մը կը կազմուի՝ խախտուած հաւասարակշռութիւնը վերահաստատելու համար . այդ հոսանքը յառաջ կը բերէ հովը : Ամպերը՝ արդիւնք են օդին մէջ զիւզուած, հաւաքուած ջրաշոգիին խտացման, բարեխառնութեան յանկարծական ցրտացման ազդեցութեանը ներքեւ : Փայլակը, կայծակը արդիւնք են հակառակ ելեքտրականութեամբ լեցուած երկու ամպերու, կամ ամպերու եւ երկրի միջեւ ելեքտրականութեան փոխանակութեան : Այս ամենը ուրեմն պարզ է մեզի համար եւ զիւրութեամբ բացատրելի : Կանխելով մեր ապացուցման վրայ, այստեղ կ'ործ փակագիծ մը պիտի բանանք : Ինչպէս կը տեսնենք, ոչ ոք այսօր կասկածի կրնայ ենթարկել թէ հովը որ կը փչէ, ամպերը որոնք երկնքի ճակատը կը մթազնեն, փայլակները, կայծակը որ կը շանթահարէ, անձրեւը որ կը տեղայ, կը հնազանդին անյեղլի, անխուսափելի, անբնարարելի օրէնքներու : Ո՞չ ապաքէն, երբ շօշափելի դառնան մեր հոգեկան երեւոյթներու պատճառները, նոյնքան անխուսափելի, նոյնքան անբնարարելի օրէնքներու ենթարկուած պիտի նկատենք զանոնք, ո՞չ ապաքէն մեր հոգեկան կրքերու մոլեգին շունչը՝ արդիւնք մեր մտաւորական միջոցորտին յանկարծական յեղաշրջութիւններուն, նոյնքան պատճառաւորուած պիտի ըլլայ մեզի համար որքան հովը, փոթորիկը, բընագիտական աշխարհին անոր համապատասխան երեւոյթները . բարկութիւնը՝ հոգեկան այդ փայլակը, նոյնքան զիւրութեամբ իր բացատրութիւնը պիտի ստանայ, արցունքները՝ հոգեկան երկնքին այդ անձրեւը, վիշտերը՝ անոր ամպերը, նոյնքան բացառապէս կերպով պատճառաւորուած պիտի ըլլան :

Քանի մը օրինակներ առնենք աստեղագիտութենէն : Գիսաւոր աստղ մը յանկարծ մեր մոլորակին տեսանելի կը դառնայ : Մեր նախնիքները իրենց կրօնական մեղկութեամբ համակուած՝ մտքին եւ երեւակայութեանը ազատ

ասպարէզ տալով , մարդկութեան իբրև պատուհաս մը կը նկատէին զայն , աստուածային գայրոյթէն զրկուած . անոր ընդհարումը երկրիս հետ անոնց կարծիքով պիտի գար վերջ տալ մեր մոլորակին գոյութեանը . անոր խորհրդաւոր տտուենին մէջ կը նշմարէին սպառնալից պատկերներ , վրիժառութեան զէնքեր : Հիմայ այդ ամէն ցնորատեսութիւնները մարած , ցնդած են գիտութեան անողոք լոյսին ներքեւ : Ոչ միայն այժմ գիտենք թէ այդ նիւթեղէն յարաբերաբար փոքր գանգուածները անկարող են երկիրը փշրել իրենց ընդհարմամբ , այլ եւ կարող ենք հաշուել եւ գուշակել ճշգիւ անոնց մերձեցումը եւ անոնց երեւման ժամանակը կանխաւ ճշգիւ որոշել : Նոյնպէս աստղերը , մոլորակները որոնք հին ժամանակ մեզ լուսաւորելու կամ մեր աչքերը գիշերային մթութեան մէջ զբօսցնելու եւ կամ մեր ճակատագիրը որոշելու համար ստեղծուած ըլլալ կը կարծուէին , հիմայ , ի մեծ ցաւ բանաստեղծներուն , կորսնցուցած են իրենց վաղեմի այդ մոգական նշանակութիւնը , եւ մեր հորիզոնին առջեւ բացած են , ի շնորհս գիտութեան , անասման , անչափելի աշխարհներ , որոնց տարածութիւնը , որոնց հեռաւորութիւնը , որոնց շարժումները , եւ որոնց կազմաւորելի նիւթերը ծանօթ են մեզի : Անհերքելի ապացոյց մը չէ՞ ի նըպաստ պատճառաւորականութեան , այն իրողութիւնը թէ՛ գիտութիւնը թոյլ է տուած , աստեղագէտներուն հաշուով , միջոցին այն ինչ կէտին վրայ , որոշեալ տարածութեամբ եւ ծաւալով աստղի մը գոյութիւնը գուշակելու կամ արեգակին եւ լուսնին խաւարման ժամանակը ամենաճշգրիտ կերպով նախատեսել : Միթէ նոյն պատճառաւորականութիւնը չէ՞ որ իրոյլ տուած է վերձր նման քիմիագէտներուն , իրենց ֆորմիւլներով , մինչեւ այն ատեն անծանօթ մարմիններու գոյութիւնը գուշակել եւ զանոնք բաղադրել : Բնական է որ , եթէ երբեք աստղերու շարժումներուն եւ քիմիական մարմիններու բաղադրութիւնները , փոխանակ անյեղլի , անբնաբարելի օրէնքներու հնազանդելու , արդիւնք ըլլալին քմահաճ ուժի մը կամայականութեանը , անկարելի պիտի ըլլար այդ գուշակութիւններն ընել :

Ակնարկ մը նետենք կենդանաբանութեան , բուսաբանութեան , կենսաբանութեան (biologie) վրայ : Այնտեղ ալ կը տեսնենք որ գիտութիւնը մեծ թուով իրողութիւններ հաւաքելով եւ ուսումնասիրելով գտած է բազմաթիւ անհերքելի եւ տիեզերական օրէնքներ որոնք վերջնականապէս ապացուցուած են եւ այդ գիտութիւններուն հիմը կը կազմեն : Այսօր գիտենք թէ ինչպէս կը զարգանան կենդանիները , բոյսերը , թէ ինչ օրէնքներու կը հպատակին իրենց զարգացման , իրենց բազմապատկման մէջ , թէ ի՞նչ պայմաններ հարկաւոր են անոնց կեանքը պահովելու

համար . գիտենք անոնց յօրինուածութիւնը ձեւացնող գործարաններու կազմութիւնը , այդ գործարաններու պաշտօնավարութիւնները , սակայն ըստ որում այս գիտութիւնները շատ աւելի նոր են . բազմաաբար , ըստ որում անոնց առարկաները ուսումնասիրելու միջոցները եւ գործիքները աւելի անկատար են , եւ վերջապէս ըստ որում անոնց առարկաները շատ աւելի կնճռոտ են եւ բազմաթիւ քան նախարկաները , շատ աւելի անծանօթ կէտեր կը գտնենք այդ վերջիններուն քան առաջիններուն մէջ :

Բնախօսութեանէն անցնենք հոգեբանութեան , որ ուրիշ բան չէ բաց եթէ ուղեղին բնախօսութիւնը : Այս է մեզ հետաքրքրող գիտութիւնը , այն գիտութիւնը որ մեր նպատակակէտը կը կազմէ : Այդ գիտութեան մէջ ալ ծանօթ օրէնքներ կան մտքին կամ լաւ եւս ուղեղի կազմութեան եւ պաշտօնավարութեան մասին , բայց այստեղ անծանօթ կէտերու թիւը շատ աւելի մեծ է նոյն վերոյիշեալ պատճառներով : Արդարեւ գիտութեան ի՞նչ միջոցներ ունինք մեր տրամադրութեան ներքեւ . նաեւ մեր գիտակցութիւնը , որ մեզի կը ծագայէ մեր մտաւորական գործունէութիւնը ուսումնասիրելու , եւ երկրորդ մեր զգայարանքները (աչքը եւ կանխընդր ,) որ մեր նմաններու ուղեղին պաշտօնավարութիւնը ուսումնասիրելու կը ծագային . սակայն , պէտք չէ մոռնալ թէ , այդ երկրորդ պարագային մէջ ալ գիտակցութիւնը մեծ դեր կը կատարէ , որովհետեւ չենք կրնար ուրիշներու արարքները քննել , եւ զանոնք պէտք եղածին պէս ըմբռնել , առանց մեր նմանօրինակ արարքներուն մերձեցնելու զանոնք , եւ ասոնց մասին մեր գիտակցութեան տուած բացատրութիւնները այդ առաջինները կիրարկելու : Արդ , գիտակցութիւնը բաւական անկատար գործիք մըն է գիտողութեան . անոր «տրուածք»ները յաճախ սխալմանը են ենթակայ , եւ լուրջ վերաքննութիւններ հարկաւոր են անոր խուզարկութիւններուն արդիւնքները ճշգիւլու եւ վերջնական եզրակացութիւններու յանդիլու համար : Երկրորդ , գիտակցութիւնը ինքն ալ հոգեբանական երեւոյթ մը ըլլալով ենթակայ է արտաքին աշխարհի ազդեցութիւնը կրելու , մտաւորական ամէն կարողութիւնները (ուշագրութիւն , զգայութիւնները , զատողութիւնը) , որոնց յանդակէտն է գիտակցութիւնը , կրնան թերի կերպով պաշտօնավարել եւ թեթութիւններու ծնունդ տալ գիտակցութեան տուած ծանօթութիւններուն մէջ : Շատ հոգեբանական իրողութիւններ կան որոնք ուշագրութեան պակասութեամբ եւ կամ ուրիշ պատճառներով չեն հասնիր մինչեւ գիտակցութիւնը , եւ մեր ուղեղին ստորապիտակցական (subconscient) բնազուառներուն մէջ կը մնան , այնպէս որ անոնց պատճառներուն եւ անոնց

էութեանը անգիտակից կը մնանք : Ինչպէս կը տեսնենք , ուղեղի գործունէութիւնը գիտելու համար մեր ունեցած միջոցները զեռչառ անկատար են :

Ինչ է ուղեղի գործունէութիւնը՝ իր ամենապարզ իսկութեանը վերածուած : Ահա՛ ինոր պէտք է քննենք :

Բայց նախ պարտինք հաստատել հետեւեալ հայցարկութիւնը (postulat) : Պէտք է գիտնալ թէ մարդու ջղային գրութիւնը արդիւնք մըն է պարզապէս արտաքին աշխարհի, միջավայրի, նորանոր սովորութիւններու ազդեցութեան ներքեւ ստացուած եւ ժառանգականութեան մեծ օրէնքին շնորհիւ ապագայ սերունդներուն փոխանցուած եւ անոնց մէջ գործարանական դարձած այն յաջորդական կատարելագործութիւններուն զոր կրած է ջղային գրութիւնը կենդանաբանական սանդուղին վրայ . պէտք է գիտնալ նոյնպէս թէ ջղային գրութեան եւ մասնաւորապէս ուղեղին պաշտօնը՝ որ ա՛յնքան կնճռոտ, ա՛յնքան բազմայօդ ձեւի մը տակ կը ներկայանայ մեզի կենդանական սանդուղին ամենաբարձր աստիճաններուն վրայ դասուած կենդանիներուն եւ մարդու մէջ , ուրիշ բան չէ բայց եթէ նոյն վերոյիշեալ ազդակներու ազդեցութեամբ կենդանի նիւթին անբաժանելի մէկ յատկութեան—զգայնութեան—յամբ բայց յառաջխաղաց կատարելագործութիւնը :

Ակնարկ մը ձգենք ամենաստորին աստիճանի ամենապարզ կենդանիներուն վրայ , եւ պիտի տեսնենք թէ ոչ մէկ գործարանի նախագիծ կայ այնտեղ : Նախանիւթի (protoplasme) կոյտ մըն է այն պարզապէս , կեդանական կատարեալ բջիջ մը (cellule) անգամ չի կազմեր , որովհետեւ զուրկ է շրջապատէ (enveloppe) : Եթէ խոշորացոյցի տակ ուշադրութեամբ գնենք զայն , կը նշմարենք որ երբեմն երբեմն , այդ նախանիւթին մէկ կողմէն տեսակ մը ոտք դուրս կ'ելլայ զոր բնաբանները ստոտք (pseudopode) կը կոչեն . եթէ բան մը գտնէ իր մօտ , կ'առնէ զայն եւ քիչ ետք այդ որսը նախանիւթին զանգուածին մէջ կը գտնենք : Հետեւաբար այդ ստոտքները կը ծառայեն նախանիւթին սնունդը հայթայթելու . բայց ասկից զատ , ուրիշ պաշտօն մըն ալ ունին , այն է կենդանին տեղափոխել . արդարեւ , եթէ որ եւ է անախորժ կամ վնասաբեր տպաւորութեան մը—ջերմութիւն , քիմիական թթու մը , եւն—ենթարկենք զայն , իսկոյն հակառակ ուղղութեամբ մը ստոտքները երեւան կուգան եւ յամրօրէն կը տեղափոխին , վտանգէն հեռացնելու համար զայն : Ընդհակառակն , օգտակար եւ ախորժելի տպաւորութիւնները — ինչպէս լոյսը , ուտեստը—կը յանկուցանին այդ նախական էակը՝ որ իր ստոտքներուն շնորհիւ կը մօտենայ այդ օգտակար տպաւորութիւնները առաջ բերող առարկաներուն : Նախանիւթն է որ կը կատարէ մարսողութիւնը , շնչառութիւնը , պաշտօններ որոնցմէ չի կրնար զեր-

կուած մնալ ամէն ապրող էակ : Նմանապէս ան է որ կը կատարէ ծննդական պաշտօնը՝ որ արդիւնք է սնուցման չափազանցութեանը : Բայց ինչ որ ամենէն աւելի կը հետաքրքրէ մեզ այդ տարրական էակին մէջ , զգայնութիւնն է : Տեսանք թէ չունի ան ո եւ է գործարան մը՝ արտաքին տպաւորութիւններ ստանալու համար , թէ անոր մարմնոյն ամէն մասերն ալ հաւասարապէս օժտուած են նոյն յատկութիւններով , նոյն պաշտօններով : Երբ միջավայրի փոփոխութեամբ կամ նմանօրինակ պատճառներով նոր պահանջներ կը ստեղծուին , կենդանի նիւթը , պարտաւորուած ըլլալով նորանոր պէտքեր հողալ , նորանոր եւ բազմաթիւ պաշտօններ կատարել , իսկոյն կը տեսնենք որ աշխատութեան բաժանումը տեղի կ'ունենայ , նախանիւթին զանազան մասերը , զանազան պաշտօններ կը ստանձնեն եւ այդպէսով գործարաններ կը կազմուին , ի շնորհս այն մեծ բնաախօսական օրէնքին թէ «պաշտօնն է որ գործարանը կը շինէ» : Այն ժամանակ է , որ , նման ուրիշ գործարաններու , ջղային գրութիւնը ծնունդ կ'առնէ : Անցողաբար նկատել տանք թէ այս վերջին գործարանը՝ իբրև ինքնուրոյն եւ յարաբերութար կատարելագործեալ գործարան , բաւական ուշ կը կազմաւորուի բազմաամբ մարսողական եւ ծննդական գործարաններու որոնք անհրաժեշտ պաշտօններ ունին եւ առանց որոնց՝ սեռական պահպանութիւնը վըտանդի ենթարկուած պիտի ըլլար : Այս օրինակը ցոյց կուտայ թէ գործարաններու զարգացումը , անձկապէս ստորադասուած է պաշտօններու յարաբերական կարեւորութեանը : Եթէ հետզհետէ բարձրանանք կենդանաբանական սանդուղին աստիճաններէն վեր , կը տեսնենք որ այդ ամէն գործարանները ու մասնաւորապէս ջղային գրութիւնը՝ համապատասխան կերպով հետզհետէ աւելի բազմայօդ եւ աւելի բազմատեսակ պահանջներու , կը կնճռոտի , կը կերպարանափոխուի , կը կատարելագործուի . կենդանի էակին մարմինը ջղային նուրբ թելերու ցանցով մը կը ծածկուի . այդ թելերը տակաւ տեղ տեղ արտաքին աշխարհի տպաւորութիւնը հաւաքելու յատկացած կեդրոններու կը յանգին , կեդրոններ զոր խոյլ (ganglion) կը կոչեն . հետզհետէ այդ կեդրոնները կը բազմանան , կարեւորութիւն կը ստանան , մանաւանդ երբ զգայնական գործարաններ կը կազմուին : Երբ կը հասնին որոնաշարաւոր կենդանիներուն , արդէն ողնաձուծը կազմակերպուած է բոլորովին , իբր կեդրոն անգիտակից զգայնութիւններու եւ ներքին գործարանական կեանքին , եւ ուղեղը , հոգեկան կեանքի այդ վառարանը , նախագիծուելու վրայ է . կապիկներու եւ մարդու մօտ՝ ուղեղը կը հասնի իր ծայրագոյն կատարելագործութեանը : Այս ամենէն կը հետեւի որ մարդկային իմացականութիւնը , գիտութեան տեսակէտով , ուրիշ բան չէ բայց եթէ ար-

տաքին աշխարհի բազմատեսակ ազդեցութիւններու շնորհիւ , նախանիւթին զգայութեան աստիճանաւոր զարգացմանը : Ուրեմն , զգայնութիւնը եւ մտորկային իմացականութիւնը , կենդանի նիւթին էական մէկ յատկութեան երկու ծայրագոյն կէտերն են . անոնց միջեւ աստիճանի տարբերութիւն մը կայ միայն եւ ոչ թէ իսկութեան : Ահա խնդիր մը զոր կրնանք վերջնականապէս ապացուցուած համարիլ :

Փանօ

ՏՐ . ՏՐԴԱՏ ԵՍԱՅԵԱՆ

(Շարունակելի)



ՍՈՒԼԵՏ



Թմբուկի , շեփորի ու ջութակի խառնափրնդոր , այլանդակ շշկոցը որ հնուէն կը հասնէր մինչեւ ականջնուս , կ'ապահովցնէր վերջապէս թէ մօտեցած էինք Շէյխ էլ Պազի :

Շէյխ էլ Պազ Մանսուրայի մօտ փոքր գեղ մըն է , քսան-քսանըհինգ հիւղակներով , բամպակի ու բրնձի արտերուն մէջ կորսուած : Միակ աչքի զարնող բանը այդ ցեխով ծեփուած աղտոտ բնակարաններուն մէջ , կ'ըր ճերմակ չէնքն է մուլլայի մը փաթթոցին նման : Բարացած , հսկայ փաթթոց մը զոր առեն աւտն կը նորոգեն եւ որ սուրբի մը , Շէյխ էլ Պազի , գերեզմանն է : Ամէն տարի , յունիսին , սուրբին տօնը՝ Առլիքը՝ կը կատարուի հոն եւ ինը օր բոլոր շրջականերէն քսան հազար հոգի կուգան կը լեցուն գերեզմանին շուրջը :

— Շէյխ էլ Պազի մուլէսը , Թանթահի մուլէտէն ետքը , ամենէն նշանաւորն է , կ'ըսէին ինծի Ֆէլլահները հիացումով երբ զիրենք կը հարցուփորձէի :

Շոգեկառքի ճամբէն դուրս , Նեղոսէն հեռու տեղ մըն էր սակայն Շէյխ էլ Պազ , ուր մեր ապարակէն ուղտով կամ էշով կարելի էր երթալ հասնիլ , ութը ժամ ճամբորդելէ ետքը : Յունիսի մէջ , այդ տեսակ ուղևորութիւն մը՝ Եգիպտոս՝ հեշտալի ախորժանք մը չէ անշուշտ եւ երբ առտուն կանուխ , ութը տասը

Ֆէլլահներու ընկերակցութեամբ , ճամբայ ելայ , յիմար գործ մը բրած բլլալու կասկածանքը արդէն կը սկսէր կրծել զիս :

Մեր փոքրիկ խումը հետզհետէ կը ստուարանար : Կէսօրին երբ Չարահ հասանք , ուր երկու ժամ հանգիստ առինք , հարիւր հոգինոց կարաւան մը կազմած էինք : Այլազան , ակնախտիղ կարաւան մը՝ ուղտերէ , ջորիներէ , ձիերէ եւ էշերէ կազմուած : Ֆէլլահները ամենքն ալ իրենց նոր կարապիկներով , փայլուն , պոռոտ գոյներու խառնուրդ մը կը ձեւացնէին , որոնց մէջ դեղինն ու կանանչը կ'իշխէին ամենէն աւելի : Խլացուցիչ աղմուկ մը , հարիւր հոգիի միաձայն խօսակցութիւններէն , երգերէն , վէճերէն ու քահքահալից ծիծաղներէն կազմուած , կը քալէր կարաւանին հետ : Ու այս ամենքը , արեւուն տակ , զաչտերուն կանանչութիւններուն մէջ , զուարթ , ցնծուն պատկեր մը կը յօրինէր որ մոռցնել կուտար ճամբուն տաժանքը :

Սակայն արեւը կը տաքնար հետզհետէ , շնչառութիւննիս դժուարացնելու աստիճան . աւազուտ փոշին՝ քրախքի կաթիլներուն խառնուելով՝ կը ցեխտէր երեսունս վրայ . էշերը , յոգնած , ա'լ չէին ուզեր քալել ու պուտ մը ջուր չկար խմելու : Ֆէլլահները կը շարունակէին իրենց անկեղծ զուարթութեամբ ու լիաթոք պոռչտութեամբ լեցուն խօսակցութիւնը . ես միայն ա'լ չէի մասնակցիլ իրենց : Էշին վրայ կ'ըսէի , գլուխս ճաթելու աստիճան տաք , արիւն քրախքի մէջ , պապակած , կը հեւայի , աչքս հորիզոնին ուղղած՝ ի զ'ւր փնտտելով Աւետեաց երկիրը , Շէյխ էլ Պազի ճերմակ գերեզմանը :

Ու երբ մեր առաջնորդը , որ ուղտի մը վրայ կարաւանին առջեւէն կ'երթար , Թեւերը շարժելով ըսաւ թէ՝ էլ Պազի վրանները կ'երեւային , ես ամենէն առաջ գոչեցի , սրտաբուխ գոհունակութեամբ մը .

— Էլ հա'մտուլլահ . . .

Ու քիչ քիչ սկսանք որոշապէս տեսնել վրանները , հազարաւոր , անհասնում վրաններ , որոնց տակ քսան հազար հոգի ժողվուած էր :

Կէս ժամ ետքը իջանք մեր հեծանելիքներէն , երբ արդէն մութը սկսած էր պատել :



Ամբողջ քաղաք մըն էր քովէ քով հաստատուած վրաններով : Փողոցներ ու հրա-

պարակներ , հարուստ թաղեր ու աղքատ թաղեր , թաարոն , կրկէս , սրճարան ու պանդոկ , խաղարան ու բողանոց , բան մը չէր պակսեր : Պանդոկը՝ ուր գացի , խոշոր վրան մըն էր , երկուքի բաժնուած , փողոցին վերայի մասը գինետուն-ճաշարանի տեղ ծառայող ու ետեւի մասը՝ ննջարանի : Հողին վրայ փռուած հինուամին գորգ մը ուր ձգուած էին շիրթներ եւ երկար , անվերջանալի բարձ մը որ վանոնք կը միացնէր իրարու , խոշոր անձոտնի անկողին մը կազմած էին՝ որուն մէջ պիտի ննջէինք , քով քովի , տասը-տասերկու հոգի : Էլ Պազի տօնաւաճառին ամենէն հանգըստաւէտ , ամենէն պերճաշուք պանդոկն էր այս : Էէրը Փարսաքուրցի Յոյն մըն էր , քարէն ջուր հանող մարդ մը , գինեպան-պանդոկապետ մը որ նաեւ վաշխառութիւն կ'ընէր , հաշիչ կը փախցնէր , բամպակի միջնորդութեամբ կը զբաղէր , բժշկութիւն կ'ընէր ֆէլլահներու , ահուայ կը քաշէր ու միանգամայն Յունաց պատուակալ փոխ-հիւպատոսի պաշտօնը կը վարէր . ժամագործ էր եւ տեսակ մը դեղ հնարած էր ճանճերը ջնջելու համար :

Արիստիտի , —այս էր մեր փոխ-հիւպատոսին անունը , — գործը գիտցող մարդ , իր վրանը չէր հաստատած հարուստներու թաղին մէջ ուր առեւտուր չէր կրնար ընել , ո՛չ ալ աղքատներու թաղին մէջ ուր ստակ չկար , ո՛չ ալ հաւատացեալներու մօտ որոնք չէին խմիր . Արիստիտի իր վրանը հաստատած էր զբօսանքի թաղին մէջ : Գիմացնիս կար երկու գինետուն , երեք հաշիչ ծխելու վրան ու չորս հինգ հատ ալ ուրիշ վրաններ ուր արար կիներ այցելուներ կ'ընդունէին առանց նախապէս ներկայացման պէտք զգալու : Ասոնցմէ զատ ալ չեմ գիտեր մեր քովերը , ետին ու գիմացը քանի՛ վրան՝ որովայնապարի յատկացուած , որոնց մէջէն անընդհատ կը լսուէր թմբուկի ու շեփորի յոգնեցուցիչ , կատղեցնող աղմուկը :

Երբ յոգնած դադրած շունչս առի Արիստիտի վրանը , ուր քանի մը գաւաթ դարեջուր շինծու կաղզուրում մը տուին ինձի , վրաններուն մէջ աղմուկն ու իրարանցումը կը կրկնապատկուէր : Երեկուան տաքէն ու նախորդ գիշերէն բնդարմացած ֆէլլահները նորէն կը լեցուէին սեղաններուն շուրջը , Նէյս էլ Պազը արժ նապէս տօնելու համար : Մեր վրանին մէջ գլխիկ շարժելու տեղ չէր մնացած :

— Ի՞նչնա՛ք , վիսքի՛ , պիրա՛ , չէպի՛ պ , կը պոռային ամէն սեղաններէն ու Արիստիտի իր չորս օգնականներով չէր բաւեր ծառայելու : Ազդին անգին կը վազէր , կը վազվզէր շարունակ , օգնականներուն պոռալով ու հայհուելով , յաճախորդներուն առջեւ քծնելով , կրակ կարած թէ ինչու չորս հինգ կտոր չէր կրնար բլլալ ամենուն հասնելու համար , առեն առեն փողոց խուժելով՝ որպէսզի թեւէն քաշած բռնի ներս մտցնէ վարանոտ ֆէլլահ մը որ երկու երեք գինետուն-վրաններու միջեւ չէր կրնար ընտրութիւն մը ընել : Ծակատամարտի տաք միջոցին անակնկալ արգելքի հանդիպած զօրավարի , ընկղմելու վրայ եղող նաւու մը նաւապետին ինչալիզութիւնը ունէր կարծես Արիստիտի , որ իր անդադրում վաղքերովը հետըզհետէ տաքցած՝ ա՛լ մէկիկ մէկիկ կը նետէր վրայէն ժաքէթը , ժիւլէն , շապիկը ու վերջապէս բանթալոնը :

Ֆէլլահները կը սկսէին գինովնալ : Համբուրսնյներու , անուշ անուշ խօսակցութիւններու , գոհ , անձնորւր , սրտաբուխ քահքահներու կը յաջորդէին սեղանէ սեղան կծու ակնարկութիւններ , նախատինքներ , ծեծի սպառնալիքներ : Արիստիտի քաղցր , համոզկեր լեզուով կը ջանար հանդարտեցնել յաճախորդները , որոնք վէճի բռնուած՝ կը մոռնային խմելը :

— Չէ՛ , իրար անցնելու , յուզուելու բանմը չկար . Սայիտ նախատելու մտքով չէր որ գող ու աւազակ ըսած էր Ապու Չէյթին . պարզապէս կատակ էր ու ասանկ օրեր կատակը ներելի է : Իրաւ է որ Մուհամմէտ քֆրած էր Յուսուֆի կնոջ , բայց Յուսուֆ ալ Մուհամմէտի հօր գերեզմանին հայհոցեց , ուրեմն վէճը պէտք էր փակուած նկատել :

Ու Արիստիտի հաշտութիւնը կնքելու համար երկու հակառակ կողմերուն մէյմէկ քոնեաք կը հրամցնէր իր կողմէն :

Ու ահա՛ ձայներ կը բարձրանային , մեղմ , զիջող եւ հաշտարար .

— Մա՛լէշ , եա՛ Սիտի , մա՛լէշ , մա՛լէշ . . .
 Ա՛հ , այդ հմայիչ , մոգական բառը որուն առջեւ ամենքը զինաթափ կ'ըլլան , որ եղիպտացիին ամբողջ անհոգ , կորովաթափ , համակերպող փիլիսոփայութիւնը կը խտացնէ : Մեր լեզուին բացատրութիւնները շատ անգոր են թարգմանելու համար ներողամտութեամբ , համակերպութեամբ , կեանքի ամէն

պատահմունքներու հանդէպ բարձրամիտ ար-
համարհանքով լեցուն այդ բառը՝ Մա՛րիշ . . .

«Վնաս չունի, հող չէ» կը նշանակէ շատ
անգամ, բայց կրնա՞նք այսպէս թարգմանել
երբ եգիպտացի ամուսին մը իր ննջատեանեակը
մտնելով՝ կինը կը գանէ ուրիշի մը թեւերուն
մէջ եւ այդ ուրիշը խաբուած ամուսնին ուսը
ծեծելով կ'ըսէ. «Մա՛րիշ» :

Կէս-գիշերին մօտ մեր վրանը պարպուեցաւ :
Ճաշելու եւ խմելու արարողութիւնը վերջա-
ցած էր : Արիսդիտի դիակի մը պէս ինկաւ
գետին , փսիսթի մը վրայ , եւ սկսաւ խոր-
գալ : Հակառակ յոգնութեանս , ես չէի կրնար
քնանալու որոշում տալ : Նախ՝ այդ հասարա-
կաց անկողինը ուր արդէն հինգ վեց հոգի
փռուած էին , յանկուցիչ չէր բնաւ , յետոյ
բոլորաթի վրաններուն մէջ դժոխային աղ-
մուկը երթալով կը շատնար : Աթոռ մը առի
եւ վրանին գուրսը նստայ սեղանի մը առջեւ :
Բողանոց-վրաններու շուրջն էր հիմա կենդա-
նութիւնը : Եգիպտացի , Սուրիացի , Պէրպէ-
րիստանցի , Սուտանցի եւ Հապէշիստանցի
կիներ շարուած էին վրաններուն առջեւ , ի-
րենց ամբողջ ազեղ հրապոյրներովը : Յուցա-
գրութիւն մը այլանդակօրէն չպարուած աչ-
քերու , կեղծ ընթուիներու , մարտիրոսացած
կուրծքերու , որոնց համախմբումը , հո՛ն աչ-
քիս առջեւ , նողկանքով խառն սոսկում մը
կ'ազդէր ինծի :

Ֆէլլահները կ'անցնէին կը դառնային , յայ-
րատ ցանկութեան նայուածքներ նետելով ա-
նոնց , մինչ անոնք միարեան կը գոչէին՝

—Փաղաղ , ես՝ Շէյխ .
«Հրամմէ՛ , ո՛վ տէր :»

Ոմանք գլխու շարժումով մը ո՛չ կ'ըսէին ու
կ'անցնէին կ'երթային : Ուրիշներ , տարտամ,
վարանտա , պահ մը կը թուլցնէին իրենց զը-
նացքը , մասնաւոր ուշադրութեամբ նայելով
կիներէն մէկուն : Այն ատեն կինը առաջ
կը նետուէր , կը խուժէր մարդուն վրայ ,
թեւէն կը բռնէր , կը խօսէր , կ'աղաղակէր ,
կը պազատէր որպէսզի միասին վրանը եր-
թան : Ու երբ խօսքերը անզօր մնային , ծի-
ծերէնմէկը կը քաշէր , գուրս կը հանէր բո-
լորովին , ապրանքէն նմուշ մը ցոյց տալու
պէս , կը սխմէր , կ'որորէր ափին մէջ , պըն-
զութիւնը կը գովէր ու շօշափել կուտար
մարդուն .

—Վնաս չունի , մա՛րիշ , ձեռքդ դպցո՛ւր ,
նայէ՛ ինչպէ՞ս պինդ է , ամբողջ մարմինս
այսպէս է » , ու փէշը վեր կը վերցնէր մինչեւ
ազդրը :

—Շո՛ւֆ , շո՛ւֆ , քոյիս , քոյիս .
«Նայէ՛ , նայէ՛ , աղւոր է , աղւոր :»

Չեմ գիտեր ի՛նչ ողորմուկ , անձկագին բան
մը կար իրենց այս ազաչաւոր ստիպումին մէջ :

—Շո՛ւֆ , շո՛ւֆ , քոյիս , քոյիս :
Վերջապէս մարդը տեղի կուտար :

Եւ կինը՝ յաղթական՝ մարդուն թեւէն քաշե-
լով կը տանէր վրանը :

Հաշիշ խմելու վրաններն ալ կը լեցուէին
կամաց կամաց : Ոստիկանական հսկողութիւնը
ա՛լ հիմա , կէս-գիշերէն ետքը , վերջացած է
անոնց շուրջը , եւ նոյն իսկ ոստիկաններն են
որ օրուան խոնջէնքէն ետքը , իրենք ամենէն
առաջ , կասկածոտ նայուածք մը պտըտցնելէ
ետքը շուրջիսին , կը մտնան ներս , կը շա-
րուին երկար փայտէ նստարաններու վրայ ,
որոնք աղատ գորգով մը ծածկուած են : Ուրիշ
Արաբներ կուգան կը միանան իրենց , լուրջ,
ծանրախոն , մզկիթ մտնողներու պատկառան-
քով : Մեր , դաժան մարդիկ են ընդհանրապէս .
քայքայուած մարմնով ու անբանայցած նայ-
ուածքով :

Աւելի լաւ դիտելու համար զիրենք՝ աթոռս
կ'առնեմ ու կ'երթամ իրենց վրանին առջեւ
եւ սուրճ մը կ'ապսպրեմ :

Քսան հոգիի չափ բոլորածու շարուած են
նստարաններու վրայ . չորս հինգ հատը ոստի-
կան , փաթթոցաւոր շէյխեր ու մոլլաներ :

Բառ մը չեն փոխանակեր իրարու հետ : Աւ-
մենքն ալ խորին մտածման մը մատնուածի ե-
րեւոյթը ունին , լուռ , մտածկոտ , ծալլա-
պատիկ կծկուած նստարանին վրայ , նայ-
ուածքներն զետին ուղղած՝ կը սպասեն : Ասդին,
մանդալի մը գլուխը , Սուտանցի մը կը պատ-
րաստէ կողմն , հաշիշի չուպուխը : Կիսամերկ,
գոռզ , լաջն ու դարձած շրթունքներով
մարդ մըն է , այրած փայտի մը պէս սեւ
ու չոր :

Չուպուխը պատրաստելէ ետքը , դաւաթ մը
եւ օշարակի խոշոր շիշ մը կ'առնէ ու կը սկսի
կարգով կէս-կէս դաւաթ օշարակ խմցնել նըս-
տողներուն : Օշարակը յատկութիւն ունի հա-
շիշի ազդեցութիւնը կրկնապատկելու : Յետոյ
չուպուխին կրակը կը դնէ , քանի մը անգամ
կը քաշէ , հաշիշը վառելու համար ու կը մօ-
տենայ նստողներուն :

Չուպուխը ինքը բռնած է . փողը միայն կը ներկայացնէ նասուղին որ ուժով մը եւ երեք չորս անգամ վրայէ վրայ կը ներշնչէ ծուխը , յետոյ խղղուելու աստիճան կը սկսի հազալ ու գլուխը կը ձգէ կուրծքին վրայ :

«Բռնուած» է :

Հաշիշը գործած է իր ազդեցութիւնը , ու Սուտանցին կը շարունակէ իր շրջանը : Ամենքն ալ մէկիկ մէկիկ կը բռնուին : Անոնք որ չեն աշղուած դեռ , նշան կ'ընեն Սուտանցիին որպէսզի մէկ երկու անգամ եւս քաշել տայ չուպուխը : Բոլոր այս արարողութիւնը կը կատարուի առանց խօսք մը արտասանելու :

Բայց դեռ ամէն բան չէ լմնցած : Սեւ մարգուկը կը դառնայ մանղալին քով : Սուանը կ'առնէ , տեսակ մը բուրվառ , մէջը հոտաւէտ բան մը կը դնէ ու կուզայ խնկել հուշիշիներու քթին տակ :

Ա' չիմա ֆեյֆը կատարեալ է :

Հաշիշի չուպուխէն ու խնկումէն գոյացած ծուխերով լեցած է ամբողջ վրանը . ծանր զգլխիչ հոտ մը կը տարածուի մինչեւ գուրսը , հաշիշիները կը սկսին տեսիլքներ ունենալ , ոմանք քաղցր , հեշտամոլ , ուրիշներ մոռայլ , սոսկալի իրենց խառնուածքին ու արամազրութեանը համեմատ :

Անկասկ , անկատար խօսքեր կ'արտաբերեն քնէած վիճակի մէջ , ինքնիրեն խօսող մարգերու ցած ու խորհրդաւոր ձայնով մը , հեշտանքի խօսքեր ու ատելութեան խօսքեր : Մին իր սիրած կնոջ սիրացած է , ուրիշ մը իր թշնամին կը սպաննէ :

— Դատտ շահեցայ , կը մրմռայ մէկը , տխուր ցաւագին ծիծաղով մը :

— Նա' , նա' , նա' , կը գոչէ միւսը , գաշունելու պէս թեւը շարժելով :

— Ձէյնէ' պ , քիչ մըն ալ . . . քիչ մըն ալ . . . կը մրմնջէ ուրիշ մը :

Սակայն ուրիշներ ալ կան որոնք իրենց կարգին կը պասեն ներս մտնելու համար : Սուտանցին կուզայ ու գրեթէ բռնի մէկիկ մէկիկ գուրս կը հանէ հաշիշամոլները , որոնք կէս-քուն կէս-արթուն , սայթաքելով կը փորձեն քաշել :

..

Աստուծոյ ժամը չորսն է եւ գրեթէ լուսնալուստ : Ոտքի կ'ելլեմ անհամբեր ու կը սկսիմ քաշել մեր վրանին շուրջը , սպասելով արշալոյ-

սին որպէսզի կարենամ վերադառնալ ագարակ : Իրիկուրնէ ի վեր տեսածներս՝ տարբեր այլ հաւասարապէս տխուր եւ անհաճոյ տպաւորութիւններ գործած էին վրաս ու իրենց ամբողջութիւնը հիմա չեմ գիտեր ի'նչ անբացատրելի եւ խորին զգուանքի մը կը փոխուէր :

Որովայնապարի վրաններուն մէջ ժխորը կը շարունակուէր , թէեւ ոչ առաջուան չափ խըլացուցիչ : Ճիշտ մեր վրանին քով կամրուած վրանի մը մէջ կը լսէի թմբուկի ու սրինգի ձայնքը : Լուսնալուծն դեռ կէս ժամ կար , քաշելէն յոգնած էի ու քիչ մըն ալ սատանան զիս մղելով՝ մտայ վրանէն ներս :

Կը կարծէի թէ ներսը ուրիշ հանդիսականներ ալ կային : Ձէ' , բնաւ մարդ չէր մնացած . թմբուկն ու սրինգը կը հնչեցնէին պարզապէս միամիտները քաշելու համար : Շարժում մը ըրի գուրս ելլելու , բայց արդէն ուշ էր . պարուհին եկած թեւս մտած էր ու աղաչելով զիս դէպ ի բազմոցը կ'առաջնորդէր , հրավառ նայուածքներ ուղղելով ինծի ու մօրուքս ու այտերս շոյելով :

Նստեցայ :

Երաժիշտները , Սուտանցի սեւ մը եւ Խպտի մը , նոր եռանդով սկսան իրենց խուժողութեանը :

Ալմէն քաթանեթները ձեռքը անցուց , դէմն կայնեցաւ , շնորհալի ըլլալու յաւակնութեամբ խոնարհութիւն մը ըրաւ եւ սկըսաւ պարել : Ձէ' , հաւատացէք , գեղեցիկ չէր պարուհին : Քառասուն տարեկանի չափ կ'եւրեւար : Սարսափելի կերպով ներկած էր երեսը , աչքերը , կուրծքը , մազերը , թեւերը , փորը , վերջապէս ինչ որ կարելի էր ներկել իր մարմնոյն վրայ : Այլանդակ ընթուխներ շինած էր որոնք գրեթէ իրարու կը միանային . մազերը՝ ծոծրակն ի վար կախուած՝ աջ ու ձախ կ'օրօրուէին գլխին շարժումներուն համեմատ : Կարճ , կարմիր շրջազգեստ մը հագած էր որ հազիւ մինչեւ ծունկը կ'իջնէր , ցոյց տալով ամբողջ սրունդները գոյնզգոյն գուլպաներով : Ոտքը՝ ձերմակ մետաքսէ կիսակօշիկ երկար կրունկներով : Լանջքն ու թեւերը հոլանի , միայն կուրծքին վարի մասը , մինչեւ փորը , սեղմած էր նեղ ժիլէով մը , իսկ փորը թափանցիկ թիւղի մը տակէն կը տեսնուէր :

Սկսաւ իր շրջանները , իր ետեւ առաջ կը քուլմները , մարմնոյն բոլոր ծամածոտութիւնները որոնք որովայնապարը կը կաղմեն : Ատեն ատեն ոտքինձայրերուն վրայ կեցած՝

փորը վերվեր կը նետէր : Յետոյ , պարելով հանդերձ , կամաց կամաց քովս մօտեցաւ , գրեթէ ծունկերուս դպելու աստիճան , նոյն յայրատ , լիտի շարժումները շարունակեց , ահա ի իօրէն սպեղ ժպիտ մը շրթունքներուն վրայ :

Պահ մը պարելը դադարեցուց ու քովս գալով ինդրեց որ մէյ-մէկ օղի հրամցնեմ իրեն ու եւրաժիշաներուն , եւ օղին խմելու համար եկաւ նստիլ ծունկերուս վրայ , թեւին մէկը գլխիս շուրջը անցուցած : Բոլոր ասոնք վատառողջ , աղաոտ գրգռում մը յառաջ բերած էին մէջս : Ոտքի ելայ մեկնելու համար , մինչ պարուհին՝ ճիստ փաթթուած՝ կը համբուրէր զիս , աղաչելով որ չհեռանամ ու օղի մըն ալ խմցնեմ :

Հինգ դուրուշ տուի ձեռքը ու դուրս նետուեցայ :

Լուսցած էր : Վրաններէն դուրս , դաշտին մէջ պտոյտ մը ըրի ու վերադարձայ : Արիսդիտի , քունէն արթնցած , իր օգնականներով , կարգի կը գնէր վրանը : Միասին նստեցանք սուրճ մը առնելու համար եւ պատմեցի իրեն թէ ինչպէս անցուցած էի ամբողջ գիշերը : Երբ պարուհին խօսքը ըրի , խնդալով ըսաւ .

— Կը ճանչնամ զինքը , կեցիք կանչեմ ու սուրճը մէկտեղ խմենք :

Ուզեցի արգիլել զինքը , բայց ինքը արգէն նստած տեղէն կը պոռար :

— Մալուհի՛ , եկո՛ւր սուրճ մը խմէ :

Քիչ մը ետքը ներս մտաւ , էրիկ մարդու ժաքէթ մը հագած , բայց միշտ կարճ շրջազգեստով : Մետաքսէ կիսակօշիկներուն տեղ՝ կարմիր մուճակներ կը կրէր : Դէմքը լուացեր էր ու թոռմած այտերը մէջտեղ ելած , իսկ ընթուինները անյայտացած էին : Մազ չունէր բնաւ ու գլուխը ֆէս մը գրած էր :

Արիսդիտի ինձի նայելով սկսաւ քահ-քահ խնդալ :

Պարուհին յիսուն տարեկանի մօտ խպտի մըն էր պարզապէս . . .

Առանց սուրճս խմելու , առանց բարեւ տալու , ամօթով ու զգուանքով դուրս ելայ վերանէն ու շունչս առի իշապանիս քով , վայրկեան մը առաջ փախչելու համար էլ Պաղէն :

ԵՐՈՒԱՆԻ ՕՏԵԱՆ



Հեռագիրներն ու լրագրական թղթակցութիւնները օրը օրի կը հաղորդեն՝ իրենց շոր ամփոփումներովը՝ Լա Հէի Դեսպանախորհրդին դիւանագիտական ճիգերուն արդիւնքը . բայց այդ երեսօթին բարոյական ու գեղեցկագիտական նշանակութիւնը— իր կարեւորագոյն իմաստը թերեւս , առ այժմ , - դրագէտ մը միայն պիտի կրնար ըմբռնել ու թարգմանել : Բոլ Ասան , որ Զարին նախաձեռնութեանը խանդավառ ջատագովողներէն մէկը եղաւ առաջին վայրկեանէն , լա Հէ մեկնեցաւ , « Ժուռնալ » լրագրոյն իբրև թղթակից , Դեսպանախորհրդին դիւանագիտութիւնը սեւեռելու համար մէկ քանի համարական յօդուածներու մէջ : Կը հրատարակենք թարգմանութիւնը իր առաջին յօդուածին , որ մտածման ու արուեստի շքեղ էջ մըն է :

ՀՈՒԱՆՏԱՅԻ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆԸ

— 00 —

Լա Հէ , 21 մայիս 1899

Լա Հէի մուսէոնին մէջ , շատ հին կարմրորակ աղիւսէ շէնքերուն մօտ որոնք կեղրոնական Չկնոցին ջուրերուն ծոցը կը ցուանան , կը դանուի Բամպրանտի Հոմերոսը : Ծերունի մըն է : Իր աչուրներով որթերեւս փակ են կենդանի աշխարհին , կը թուի զննել , իրմէ հեռուն , ժամանակին փուլերը , ժողովուրդներու կը-ոխները եւ խորհուրդը յանդուգն ցեղերու որ կը հիմնարկեն ու կ'աշխարհակալեն , բնութեան ու մրցակից ժողովուրդներու գէմ կը մաքառին : Տարիներէն խոռոչացած գէմքին վրայ , մարդ կը փորձուի փնտոել , ինչպէս խորտուբորտ հողագետնի մը ծալքերուն մէջ , հեաքերն այն քաղաքներուն որոնցմէ ելան Իշխախանին ու բոլոր մեծ պայքարներուն մարտիկները : Մաղթափ ճակատը տառապանքները կը կրէ ժողովուրդներուն որ իրար բղբկտեցին : Հերոսներուն ատելութիւնը , զոր իր բռնորդ երգեցին , երեսը առ յաւէտ պոստեց : Անցեալին մեծարոյ գէմքն է որ եղբայրասպան կոիւններուն շրջանը կ'ողբայ : Մուսէոնին քսան հրաշակերտներուն մէջ , ասի ամենքը կը գերազանցէ : Նոյն ինքն մարդկութիւնն է որ , ծերունիին արտայայտութեամբը , իր մարդասպանական գինովութիւններուն վրայ կը կսկծայ :

Բամպրանտ ատով հուլանտական ամզգը խորհրդապատկերել ուզեց , որ 1564 էն ի վեր , զէնքը ձեռքը , կ'ողորէր սպանիական իշխանութեան զէմ որուն անողոք հաւատաքննութիւնները վերանորոգման ոգին կը հալածէին՝ ազատութիւնը բռնաբարելով այդ ուժերուն որոնք կարող հանդիսացան ծովուն տիրապետութենէն խլել հողի մէկ մասը իրենց հայրենիքին՝ արդէն շատ հարուստ , եւ Ասիոյ ովկիաններուն վրայ անարածուած , ուր իր ցովհանաւերուն պիտոյնը կը բարախէին : Այդ անընդհատական պատերազմներուն տեսարանը զինքը տիրեցուցած ըլլալու էր : Քառասուն երկու տարեկան էր 1648 ին , երբ Բոքրուայի , Փրիպուրկի , Նորտինկլէնի եւ Լէնսի ֆրանսական յաղթութիւնները վերջապէս Փիլիպպոս Գ. ը ստիպեցին դաշնապիր մը ստորագրել որով , վեթիֆալիոյ հաշտութեամբ , Հուլանտայի անկախութիւնը վերջնապէս կը ճանչնար : Բայց այդ հաշտութիւնը կոխենք որուն վախճանը չնշանակեց : Բամպրանտ զեռող էր երբ երբեակ նիդակակցութիւնը կազմուեցաւ Հոլանտայի , Շուէտի եւ Անգլիոյ միջեւ , որոնք միասին պիտի գիտագրէին Լուզովիկոս Ժ. Գ. ի փառասիրութեանը : Ու պատերազմը երկայն ատեն կը շարունակուի Պաթալեան հողին վրայ , երբ մուսլիմները Թագաւորին արքունիքին հետ կուգան յարձակում գործել հոն , կամ երբ Սաքսի մարաջախտին մարքիզները ֆրանսական պահակազուններուն հրացանաձգութիւնը կը վարեն այնտեղ , կամ երբ Բիշկոն կը քաշէ հոն կը տանի Հանրապետութեան ջլերացները , կամ երբ Կայսրութեան կրկնափորները Լուզովիկոս Թագաւորին հրամանովը հոն կ'արշաւեն , կամ երբ 1830 ին Փրանսացիք Անվերսը կը պաշարեն եւ այդպէսով Պելճիքան 1814 ին կազմուած Ստորին Նահանգներէն կը զատեն :

Անշուշտ արուեստագէտը փորձեց Հոլանտայի այդ երկարատեւ անձկութիւնը թարգմանել Իլիականը ոգող հին Այեաին զէմքին մէջ՝ զէնքերու շաչիւնովը , Պրիամին հեծեծանքովը , Բրիսէլսին լացովը , Աքիլլէսին ու Էասին ցատուծովը համակ թնդացող , Պատրիկի եւ Հեկտորի արիւնովը կարմրած : Յալթական Հոմեր մը չնկարեյ , այլ հինաւուրց մարդկութիւնը որ կը յուսահատի :

Այսօր , Այեաին զէմքը կ'ողեւորուի : Խօսելու համար , ձայնը ունի ժողովուրդներուն որոնք իրենց զիւանապէտները զրկեցին և

Հէի Գեոպանախորհրդին՝ որպէսզի գումարուին նոյն իսկ այն սրահին մէջ զոր պաթալեաններ կարիչները պատկերազարդեցին , այնտեղ իրենց վրձինովը՝ գեղեցիկ , արգասաւոր , զուարթ մերկ կիներ նուիրագործելով եւ ապահովութիւնը զոր վեթիֆալիոյ հաշտութիւնը բերաւ Հոլանտային :

Իբր վերջաբան այն ճառին որ Գեոպանախորհուրդին առաջին վայրկեանները գրուեց , Պ. տը Պոֆոս , Հոլանտայի արտաքին գործոց նախարարը , այդ աչնիւ պատկերները վկայութեան կոչեց . « Այլաբանական խմբակներուն ու զէմքերուն մէջ , ըսաւ , կայ հատմը վեթիֆալիոյ հաշտութեան վերաբերող , որ մասնաւորապէս արժանի է ձեր ուշադրութեանը : Այն նկարն է որ այս սրահին մուտքի դրան վերեւը կը գտնուի . հոն կը տեսնենք խաղաղութիւնը որ ներս կը մտնէ Յանսի տաճարին դռները գոցելու համար : Կը յուսամ , պարոններ , որ այդ գեղեցիկ այլաբանութիւնը ձեր աշխատութեանց համար բարեգուշակ պիտի ըլլայ , եւ թէ՛ ձեր գործը աւարտելէ յետոյ՝ պիտի կարենանք ըսել թէ խաղաղութիւնը , զոր գեղարուեստը այս սրահին մէջ մտցուցած է , անկից գուրս ելաւ իր բարիքները բովանդակ մարդկութեան վրայ սփռելու համար : »

Ուժգին ու թարմ երփնապատկեր մըն է , Ռիւպէնսի ոճով : Պալլաս եւ Հերմէս , իրաքանչիւրը՝ երկու տասյակներէն մէկուն վրայ նըկարուած , իրենց ցայտուցիկ մկանունքներուն ճիգովը կը թուին հրել կիսաբաց դրան երկու թեւերը որպէսզի անցնել կարենայ շողարձակ էակը որ սրարշաւ կը հասնի : Ձախ պատին վրայ , մատղաշ ցուլ մը երկրագործութեան բարիքները կը ներկայացնէ , մինչդեռ գեղին շրջազգեստով թանձրածոճրակ մտտ ազջիկ մը միրգերով լեցուն կողով մը կը բարձրացնէ . աջ կողմը , վարդերով գրասանդուած ոչխարներ կը խառնուին կիսամերկ կիներու հօտին՝ որոնք իրենց արգաւանդ լանջքերուն գեղեցկութիւնը կ'ընծայեն :

Արդարեւ , հողին պարարտութիւնը կը նպաստաւորէ քոլտիներու այդ յուրթի գաշտորայքը , այդ անսահման մարգերը՝ գետակներով կտրուած եւ ուր ծանրազանգաղ արջառը կ'երեւայ ցանուցիք : Հողմազանքներու թեւերուն մօտ , երբեմն նաւի մը կայմերը կը բարձրանան ցամաքին մէջտեղը : Պրանցքին ջուրը զայն հող բերաւ՝ այն համաչափ թրծուած աղիւսներով տուներուն կեդրքէն , որոնք իրենց

ճերմակով գեռ նոր ջրդեղուած պատուհաններուն աչքերովը կը նային : Լա Հէ աշխարհիս ամենէն աղւոր քաղաքներէն մէկն է : Հնուց ի վեր , Մալեգիոյ վաճառակահանութիւնը հարստացուց այն մարդիկը որ կառուցին այս հզօր տուները , միշտ նոր : Դռներուն , կամարիկներուն , խաչակներուն ջրդեղը չի մղտանար հոն : Թիթեղներուն , բոյթերուն փայլունցուած պղինձը չի գաղթիր անցուդարձը հայելացնելէ : Բաց-կապոյտ քերտալով հագուած սպասուհիները , շլացուցիչ գոգնոցներով , իրենց մերկ թեւերովը կը շարժեն աւելը որ չի մաշիր : Մեր լատին երկիրները նոր կը սկըսին ճանչնալ մաքրութեան պերճանքը : Որպէսզի այդ մաքրութիւնը այլեւս մեզ չզարմացնէ Հոլանտայի մէջ , պէտք է չափազանց խեղճուկրակ փողոցներէ անցնիլ : Դեռ սպանախորհրդին առիթով , անսահման եռագոյն դրօշներ կը կախուին առիքներէն մինչեւ խանութները , պանդոկներուն ճակատը կը զարդարեն : Վաղնջական լանտօներու մէջ կ'անցնին դիւանագէտներ ու սպաններ , խաչաճամուկ համազգեստներով , ուսնոցները , թուրը , գօտին ու տաբատին երիզը թանձրօրէն ոսկեզօծ : Փետուրները կը սարսուան պիտոններուն կորուծեանը վերեւ : Ծնորճածեւ երիտասարդներ բանուած լօղիկներու մէջէն կը սիգան : Մէկն իր առջնագործութեանց զըրահը , արծաթազարդ տաբատը , փայլուն սուրը կը ծածկէ թաւշէ օձիքով խոնարհ ռաքիկէ վերարկուի մը տակ : Վիթխարի , բարի պարոններ , սիրալիբ , իրար կը բարեւեն , ենթայտերը շապկօձիքին կարծրութեամբը կըտրուած , եւ ուշադրութեամբ կը դիտեն եզական մեռելակառք մը , անկիւնները չորս գնկակերտ գերուկ հրեշտակներով շքաւորուած , որոնց վերեւ կը կանգնի կառուպանը , տասնվեցերորդ դարու մաքրակրօն մը զոր կը սքողեն ցած գլխարկի մը անսահման թեւերն ու սուզը անկիւնաւոր սեւ վերարկուի մը , որուն վրայ ճերմակ լանջաւոցը կը ծածանի : Կաթնալաճառները կը հրեն սայլակը փողփողուն պղնձէ խոշոր ջնտանօթներով բեռնաւորուած , որոնք այնտեղ կը հակին կոճղիզաւոր , լայնափոր , բարձրածիզ , շատ մը ցեղեր կշտացնելու կարող : Մթափոյն զպետով , ոտիկանները կը փութկոտին : Արեւը կ'ոգեւորէ տերեւախիտ ծառերը , նկարուած տախտակորմերու ապակիները , դռնառաջներու անարատ քարերը , ուրիճօներուն ջինջ սպա-

կիները , եւ անոնց սթորներուն սիւրան : Քաղաքին կեդրոնը , ուր Ձկնացին քառակողմնածեւ ջուրը կը խորշոմի , լանտօներուն , ոտիկաններուն եւ չուխային մէջ պրնգուած սրունգներով , փայլուն կախարպաններով հուսաններուն շարժումը ա'լ աւելի կը հապճեպի : Թրամվէյները կը փութան , կ'եղջերահնչեն ու կը սուլեն , փոքրիկ ձիերուն սուրանքովը կը պտուտքին : Ծիկակարմիր օրթոնպիլը կը խոյանայ : Ծառաները դռները կիտովին կը բանան , լսելով ժխորը կոլասկային որ կ'անցնի , փայտի պէս անշարժ բուսասաւորները՝ վրան կանգուն : Գարեջրատան ապակիին ետեւ , խմողներ՝ նստած , երեսնին փողոցին դարձուցած , քաղաքին ցնծութիւնը կը դիտեն : Լայն եռագոյն նշանադրօշները կ'ալեւժիին : Պաթաւներուն արեւակէզ կամ մաղձագոյն դէմքերը հոս հոն կը պչնուն : Իրենց պզտիկ յատակ կամուրջներէն կ'անցնին , պզտիկ մաքուր փողոցներու մէջ կը դառնան , հանդարտ ջրանցքներուն եզերքն ի վար կը քերեն կ'անցնին , փայլուն դռները կը դարնեն : Ահաւասիկ Անտառին թեթեւ տերեւակոյտերը : Կիները , պտոյտի ելած , յարգէ կախքա մը գլուխնին , պեժ ներքնակով ու պարզ չէզոք շրջագրեատով , առնաբար կը կը քալեն : Սիփիսքները կը հնչեն , կ'երեւնան , մետաղական ուրուականներ , կը հեռանան , կը փոքրանան , կը կորսուին : Ծառներն իրենց ոտները դէպ ի լիճը կը խոնարհեցնեն , ուր կը դեգերին կորածիզ կարապները : Ծառուղի մը կը յանգի վանդակապատին , զոր կը պահպանեն հոլանտացի զինուորներ , կանանչ ու դեղին հագուած . անմօրուս , սեւուկ պատանիներ են : Պատի մը տակէն կ'անցնին : Կառքերը կը սլանան , դիւանագիտական պարոններով ծաղկազարդ . գլխարկներ կը շողան : Պարզ ինչպէս գիւղի մեծ տուն մը , Անտառին Պալատը իր գոգածեւ ճակատը կը պարզէ , բազմաթիւ կիյեոթինաւոր պատուհաններով ձեղքուած : Դռնառաջին լայն սանդուղին վրայ նեղ գորգ մը կայ փռուած : Դիւանագէտները վեր կ'ելլեն : Ռըտէնկոթով բարձրահասակ ծերունին , զոր գորշ գլխարկը ա'լ աւելի կ'երկնցնէ , Պ . տը Մունսթրըն է , Գերմանիոյ գեսպանն ի Ֆրանսա : Հսկայ վաթսնամենի , կը ժպտի , ցոյց տալով ակուաները , դեղնած , քիչ մը լինաերէն անջատուած : Ըերմիէկ մօրուքը ոսկրուտ այտերուն վրայ կը ցանցառի . եռանդուն ու անկիւնաւոր ձեւեր

ունի : Կարճիկ , բարեձեւ ու բարակ , սը-
տէնկոթին մէջ անձկապէս սեղմուած , Պ . Տե-
լիանիս Յունաստանը կը ներկայացնէ : Երեք
ֆէսեր կարմիրով կը կնքեն թուրք լիազօրնե-
րը , ամուր մանչեր՝ ամառուան վերարկուով :
Ասթրաքանէ երկու գտակներ կը բեռնաւորեն
Պարսկաստանի ներկայացուցիչները , ծանրա-
խոհ երեւոյթով , հատլիկ , աչուրնին անփայլ :
Մեր Չինացի մը , ճիզուիթ ձեւերով , կը հա-
կի իր կապոյտ մետաքսէ պատմուճանին մէջ ,
որուն կ'ընկերանայ շագանակագոյն բաճկոն
մը՝ ոսկի թելերով ուսերուն կապուած : Ման-
տարինութեան կարմիր կոճակը սեւ գտակին
յետասկոգմը կը պճնէ . հին զինուորի գորշ ըն-
չացք մը կը հովանաւորէ անոր շրթունքը , որ
բան մը կը մրմնջէ իր դեռատի հայրենակցին ,
որուն կատուակերպ մարմինը թխագոյն պատ-
մուճանով մը կը սքողուի ու շատ դուրս ին-
կած այտուկներով , քթթուն կուպերով դէմ-
քը բոսորագոյն խորքով ասգրաքանէ շարփուչ
մը կը կրէ : Սիվիլ հագուած դպրոցականներու
պէս , ձարոնցիները կը ցատքտեն , գլուխ-
նին կտու կը նետեն խօսակիցին զննելու
համար : Վայելուչ , զուարթ պարոններ , միւս-
ները կը խնդան , կը կատակեն իրարու հետ ,
իրենց վերարկուները ծառաներուն կը յանձ-
նեն . ծեր զօրավարներ քարձրահասակ , ոսկե-
զօծ կարաններով , իրենց թուրերով կարծես
նեղութիւն կը պատճառեն :

Պատերուն հին կենդանագիրները այս բազ-
մութիւնը կ'ընդունին սեւեռուն ժպիտներով :
Անոնց զիմագծութիւնները մրճաւոր կեղծ-
ծափներէ դուրս կ'ելլեն : Փափուկ դէմքով ,
սեւահեր , սա բարակ թագուհին , տասնութե-
րորդ դարուն ճաշակովը արդուզարդուած , նեղ
իրան մը կը կանգնէ սրածայր չփակին մէջ ,
չարժուածքի մը վայելչութիւնը կ'երկարածգէ :
Պատին միամիտ սպիտակութեանը վրայ , իշ-
խաններ , շրջանակներուն մէջ տեղը , բարե-
չընորհութեան կեցուածքը ասեր են , ձեռքեր-
նին լանջակալին մէջ դրած : Եւ ատի այնքան
չի տարբերի այն բարեձեւութիւններէն զոր
ժամանակակիցներուն կեանքը , վարը , ջր-
զեղուած դաներուն քովերը , կ'ընծայէ : Սի-
րուն դէմքեր են , նոյն իսկ չարածճի , գորշ
փալոյններուն միջեւ , կարծր կեղծօձիքներուն
ու ուրէնկոթները զարգարող փայլուն մետաք-
սէ խոտորկուտուրքներուն վերեւ : Բաց-գոյն
հեակերով ուրքեր կը դարձդարձին : Առանց ձե-
ւակերպութեան , ամենքը ներս կը մտնեն ու-

թոնտածեւ ու բարձրագոյն սրահին մէջ .
նստարաններուն վրայ կը տեղաւորուին , կա-
նանչ-պոռնզագոյն չուխայով ծածկուած սեղան-
ներուն առջեւ : Ողորկ գանկերը կը շարուին :
Պերճաշուք ծոպափունջերով քանի մը սակա-
ւաթիւ ուսնոցներ կը ճօճան՝ զինուորական
պատգամաւորներուն ուսերուն հետ : Թուրք մը
ֆէսը դէպ ետեւ կը նետէ , տաքէն նեղուած :
Երիտասարդ քարտուղարներէն ոմանց մագերը
չատ ուղղագիծ ճեղքուածքով մը երկուքի կը
բաժնուին : Լուծիւն կը հաստատուի : Առոյգ
գոյներով հեծելաճեմքը , պատերուն վրայ , կը
չարունակէ թափօրներուն շարժումը : Ֆլաման
զիցուհիները կը ծիծաղին , շատ մերկ : Փառ-
քը , Եսրտանսի ընդարձակ նկարին մէջ , իր
սրածայր փողովը Մահուան բազուկը կը հա-
րուածէ , որ ճերմակ քառաձիով մը ու նիմ-
փաներու սլացքովը յառաջացող կարմրա-
զգեստ յաղթականին կ'ուղղէ իր նիզակը :

Այդ Մահը կը գահէ , սրահին բարձունքը ,
գմբէթին մօտ : Փառքը գծուարութիւն կը
կրէ իր հարուածը անոր հասցնելու : Ճաս-
կատ ու չարամիտ , գանկը կը քեքեւէ աչ-
խարհիւ շքեղութեանց ու պատրանքներուն
վրայ , զոր կը նշանակաւորեն զիցուհիները որ
ճոխերանց հանգերձներ ծաւալելով կը թոջը-
տին : Մահը պիտի յաղթանակէ՞ արդեօք՝ այդ
մէկ քանի ուղեղներուն մէջ որ հաւաքուեր են
կաղաղութեան բաղդը ապահովելու համար :
Իր թալկագոյն եւ ուժեղ ոսկորները իրարու
վրայ կը կրթընին՝ անդրդեղի ճարտարապե-
տութեամբ մը : Ան կը տիրէ միւս բոլոր որմ-
նանկարներուն , Յանոսի դրան անձերուն , ու
լոյսին՝ որ զեղին մետաքսէ վարագոյրներուն
մէջէն կուգայ լուսաւորել Ռուսիոյ անպիլա-
կան դեսպան Պատոնտը Սթալին ճաղատ գլուխը ,
վարդերանգ փոսկր , ու ականջներուն մօտ
գանդուած մաղերուն եւ լայն ֆալոսիներուն
խոշորահատ ձիւնը : Անոր մօտիկ , Պ . Պուռ-
ժուայի մօրուեղ դէմքը կը կարկատի , իմա-
ցականութեամբ լեցուն , պատրաստ խօսքի ,
զոր մնծ շրթունքները արդէն կը մրմնջեն :
Կալիփական ամբողջ որոշակամութիւնն է ,
յանդուզն , զոր կը կրէ այդ ճարպիկ մարդուն
հասակը . մինչդեռ Պ . տ'էսթիւոնէլ , աշխոյժ
ու համարձակ վայելչաձեւութեամբ մը , մեր
վերսայլի նախահայրերուն աւանդութիւնը
կ'ողէ . իր ուրնտէնկոթը արքունիքի զգեստի
մը պէս կ'իյնայ , եւ իր եռանդուն խօսուած-
քը ժպիտներուն հաւանութիւնը կը քաշէ ի-

րեն : Այդ երկու մարդերուն մէջ , նոյն ինքն
Յրանսան կ'երեւայ , վայելչածե ու խիզախ ,
վասնզին առջեւ զուարթամբտ :

Ձայն մը կը բարձրանայ : Պ . տը Պոֆոռ բա-
րի դալուսա կը մաղթէ յանուն Վիլհելմինա
թագուհւոյն , Ձայրը կը գովէ իր նախածեոնու-
թեանը համար , հարկաւոր ծանրութեամբը կը
խօսի այս պատմական դէպքին վրայ : Մտիկ
կ'ընեն , ոմանք արմուկները բարոնին կըր-
թընցուցած ու կէս մը բանախօսին զարձած ,
ուրիշներ՝ թեւերնին ծալլած ու աչուրնին փակ :
Թանձրամարմին ծերունի մը , հաստ ու զօրեղ
դէմքով , կը թուի քնանալ , դունչը՝ վիզն
հանգուցող բարակ սեւ փողկապին վրայ
ծանրացած :

Ձեւակերպութիւն մըն է : Ամէն մարդ գիտէ
թէ օգտակար բան մը կարելի չէ ըսել բացման
նիստերուն մէջ . պէտք է զգուշանալ չափա-
զանց հապճեպ ֆրազին մատնութիւններէն :
Այդ զուարթամբտ քաղաքավարութեան ձեւե-
րուն տակ՝ ամենքը կը կասկածին , իրենց շար-
ժուածքին , կեցուածքին նշանակութիւնը կը
չափեն : Գերման պատգամաւորները հակառա-
կորդներն են իրաւարարութեան զազափարին :
Պարոն Սթէնկըլը զրքոյկ մը հրատարակած է որ
պատերազմին արդիւնքները կը գովէ եւ անոր
յաւերժացումը կը բաղձայ : Պ . Ձորն միեւնոյն
տեսութիւնները կը պաշտպանէ : Լա Հէի փո-
ղոցներուն մէջ իրարու ցոյց կուտան այդ
վերջինը , որ կ'երթայ կանանչ կտակէ հովա-
նոցը անութիւն տակ ու վարնոց կապոյտ բա-
թինէ զգեստներով : Գէշ ողորկուած գլխարկ
մը կ'երկնցնէ հսկան , իր միակտուր ծո՞-
րակը՝ գորշ մազերով խուռացած , դէմքը՝
հանդարտ գամփոխ նման : Տախտակամածներն
իր քալուածքին տակ կը ճարճատին : Մեծա-
տարած կոնակը կը խափանէ հեռանկարը եւ
Պիլեհեհեթին պատմական կամարները : Ամ-
բապինդ դաշնակիցը կը թուի այն Մահուան
զոր Եորտանս նկարեց , կանանչորակ կմախք ,
կամարոյքին վրայ սրահին որուն պատերը
արուեստներէն երկնաւորուած կեանքովը
կ'ապրին :

Արդեօք այդ բարերար զիցուհիներէն մէկը
պիտի ըլլա՞յ դեռատի Վիլհելմինա թագուհին ,
զոր վիմագրութիւնները կը ներկայացնեն շատ
Հոլանտացի , խիստ ու յամառ տիպարով մը ,
երիտասարդութեան սիրունութեամբ հաղիւ-
չպարուած : Պ . տը Սթալ կը յուսայ որ այդ-
պէս պիտի ըլլայ : Ձայնը կը պապաչէ ու

կանգ կ'առնէ : Ձեռքերը թղթին շուրջը կը
թափառին . կ'աւարտէ , կը նստի : Դեսպանա-
խորհրդին քարտուղարները կ'անուանուին ,
եւ կուզան իրենց տեղը դրաւել կիսաշրջանա-
կածե սեղանի մը առջեւ . խարտեաչ սպա-
ներ ոսկերիզ հագուստներով , ճերմակ բաճկո-
նով մեծափոր երիտասարդ մը , եւ ու-
րիշներ :

Այս ամբողջը ոչ մէկ յուզմունք յառաջ չի
բերեր : Կարծես զիւղացի ազնուականներու
ծաղկազարմանական ընկերութեան մէկ դու-
մարումն է : Տարուք թուրք մը , նիհար , մօ-
րուքը կը փայփայէ ձեռքովը զոր կը ճոխացնէ
գեղեցկագոյն զմրուխտը եւ որ երեսը կը քե-
րէ՝ նոխազի դունչէն մինչեւ յօնքերուն վրայ
իջած ֆէսը : Պ . տը Սթալի քովը , սեւ ու
ոսկի հագուած երկչոտ հսկան իր ճերմակ
ձեռնոցներով տենդագին ձեռքերուն մէջ փեա-
րաւոր պիփոն մը կը դարձնէ :

Ոտքի կ'ելլեն : Պ . Պուրժուա կուզայ Պ . տը
Սթալի ձեռքերը սեղմել : Կը խօսին խնդալով ,
իրարմէ ախորժելնին յայտնի կը ցուցնեն
ժողովուրդներու պատգամաւորներուն առջեւ :
Վայրկեան մը այդ ժողովքը կ'եռուզեոայ ,
գորշ , սեւ ու ոսկի , գանկերը փղոսկրա-
թոյր , բուլիկ ոտքերուն տակ պերճազեղ
աստուածուհիներուն եւ հզօր ու մարմնեղ հե-
րոսներուն ու կիկլոպներուն , պատմուճան-
ներուն ներքեւ մսոտ ծո՞րակներով Փլաման
Պոմոնաներուն ու Փլորաններուն :

Փոխանակուած խօսքերէն սա կարծիքը կը
հետեւի . Դեսպանախորհուրդը զէնընկեցու-
թեան մասին ոչինչ պիտի կարգադրէ , որովհե-
տեւ պատգամաւորներուն միջեւ ասիկա
կրնար կոխ յարուցանել : Բայց Ժընէվի պայ-
մանագրութեան սկզբունքները ընդարձակելէ
յետոյ , որպէսզի անի աւելի լաւ պաշտպանէ
պատերազմի դաշտին վրայ եւ ծովային պա-
տերազմներու մէջ՝ գթութեան իրաւունք-
ները հանդէպ վիրաւորեալներուն , դիւա-
նագէտները կը յուսան այսպիսի ժողովք-
ներու պարբերականութիւնը պարտաւորիչ
դարձնել : Այսպէս պիտի սկսէր գոյութիւն
ունենալ տեսակ մը իրաւարարական ատեան ,
որ տարին կամ երկու տարին անգամ մը կա-
նոնագրուած գումարումներ պիտի ունենար . ան
պիտի ջանար միջազգային գթութեանց ա-
ռաջքն առնել , զանոնք ամոքել , բարեկա-
մական իրաւարարութեանց թիւը բազմա-
պատկել : Թէպէտ ասիկա աննշան երեւայ

անոնց որ Դեսպանախորհրդէն տիեզերական խաղաղութիւն կը յուսային , կարելի է սակայն ուրախութիւն զգալ : Այսպէսով ըսկըզբունք մը պաշտօնապէս պիտի հաստատուէր պետութեանց միաբանութեամբը : Եւ ատի պիտի ամրացնէր այն համաձայնութիւնը որ արդէն կարողացաւ իրագործել Կրէտէի իրական անկախութիւնը՝ սուլթանին անուանական գերիշխանութեան ներքեւ : Ոչինչ կ'արգելէ որ ապագային մեծ ազգերու շահերը կարգադրուին ինչպէս որ ընդհուպ պիտի կարգադրուին փոքր ժողովուրդներու շահերը :

Այս յոյսերը զգուշութեամբ արտայայտելով , պատգամաւորները պալատէն դուրս կ'ելլեն , կառքերին կը նստին նորէն , մինչդեռ , ֆուաք հագուած , սինեմաթոկրաֆին աբուեստագէտը իր գործիքին բռնոցը կը դարձնէ : Ամէն մէկ գործողութենէն յետոյ՝ մինչեւ գետին խոնարհելով կը բարեւէ , ապահովաբար կը խորխտանայ այն ասղնագործութիւններով որ իր շապկին լանջակը կ'ուռեցընեն :

Ահա Անտառին թիթեւ տերեւակոյտերը , բրգագոյն զգեստով շրջագայուհիները , լիճն ու կորածիգ կարապները , քաղաքը միշտ նոր , ջրըզեղուած , գարունով լեցուն : Էքիբաժները կը ցոլան , կը սուրան ու կը փողփողին :

Գիշերը , հարուստ ճամբաներէն , լուրիկ խանութպաններու աղմկոտ ամբոխէն ու լուսավառ վաճառանոցներէն անդին , կարճ , թանձր ու ցած տուներով մութ փողոցի մը մէջ , յանկարծ ընկերվարական Ակումբին , Քոնսիտոսիային , ճակատը երեւան կ'ելլէ : Ամայի պատէ մը կ'անցնինք , վերնայարկը կ'ելլենք մաքուր կերպով ձեփուած թատրոնի փոքր սրահի մը , ուր լեցուած են մաքուր օձիքներով պզտիկ պուռժուաններ , ուշադիր գործաւորներ , յարդէ կալէթայով գլխանոցուած լուրջ աչկերատահիներ : Իրենց տղու փոքրիկ դէմքերը դէպ ի բնմը կը պչնուն :

Մեծանուն յիզափոխիչը , Տոմէլա Նիեվէնհուիս , կը բարձրանայ հոն՝ բողոքական ժողովարանի ամպիոնի մը վրայ գոր կանգնած են անտառին Տեֆոռին մէջ , մօտն ունենալով սեղան մը , ու աթոռներ ուր նստած են յիշափոխական մասնախմբի մը երիտասարդ անդամները : Նետերլանտական ռամկապետային ընկերվարութեան առաքեալը նիհար սեւ մարդ մըն է , խստադէմ աւետարանչի կերպարանքով : Գորշ բաշէն դուրս կը ցատքէ վճիտ ճակատ մը : Յարձակող աչուրները հողիներու խորը կը թափանցեն , կը խուզարկեն : Դուռնն ու գորշ մօրուքը կ'երերցնէ , թղթիկներու

վրայ արձանագրուած իր պատճառաբանութիւններուն ստուգութիւնը կը մատուցանէ հասարակութեան :


Անշարժ , ծանրախոհ , Հոլանտացիները մըտիկ կ'ընեն զինքը : Ասիկա մեր խոռվայոյզ ժողովրդական հաւաքումներուն չի նմանիր , ոչ ալ մեր Խորհրդարանին մօլեգնութեանը որ կը նախատէ բանախօսն ու գազանագուսպ-նախագահը : Գիտնալով որ այդ կուսակցութիւնը Ստորին-Նահանգաց զօրաւորագոյնն է , Լա Հէի ընկերվարականները աւանդուած դասը մտիկ կ'ընեն իրենց խմաստութեամբը , բայց ոչ իրենց կըքովը : Ատոնց մէջ կը վերագտնենք այն գլուխները , որոնցմով տասը զարէ ի վեր նկարիչները կը ներկայացնեն Քրիստոսի աշակերտները , անոր հետեւող ազատ մարդիկը , եւ որոնց միջոցով արեւմտեան աշխարհին վրայ տարածուեցաւ ազատագրութեան ու սիրոյ նոր ոգին : Գործը կը շարունակեն : Մտիկ կ'ընեն՝ գլխէն անջատուած նոյն ականջներով , ճակատին կարծր ու ցոլուն , ածիլուած ծոճրակներն վայրահակ : Չեն ծափահարիր : Մերթընդ մերթ , մէկ քանի սուքեր տախտակամածին գերանները գարշապարելով՝ հաւանութիւն կը յայտնեն . բայց բերանները կը լսեն :

Քրիստոսը կը շարունակէ իր ճառը , անսեթեւեթ գծերով բողոքական ամպիոնին մէջ : «Չէնընկեցութիւն , կը գոչէ՝ հեղնոտ , մի՛ հաւատաք , ո՛վ աշխատողներ ու ըմբոստացողներ : Մի՛ հաւատաք թէ գործադուլին կամ ընկերական պահանջումներուն առեւնը , ժանտառմը , կամ հեծեալ ոստիկանը , կամ դրամագլխական զօրանոցին զինուորը զէնքը վար պիտի դնէ . մի՛ հաւատաք թէ պատերազմը քիչ ատենէն կրնայ վերնալ . որովհետեւ եթէ կառավարութեանց միջեւ ջնջուի ան , Աշխատութեան զէմ Դրամագլխին կոխը չի կրնար վերջանալ՝ մինչեւ որ ընկերվարական գաղափարը չյաղթանակէ : »

Գորշ բաշը կ'ալիւմփի , նիհար մարդը դուրս կը ծոխ ամպիոնէն որ մինչեւ անոր կէս մէջքը կը հասնի . գորշ մօրուքը կ'երերցնէ , վճիտ ճակատը կը թօթվէ . կամաքի մատով մը , կը ցուցընէ ապագան միշտ արիւնոտ :

. . . Հոմբոս պիտի պարտաւորուի՞ իր սքանչելի անձկութեանը մէջ միշտ կսկծալ : Ալիւոր մարդկութիւնը պիտի պարտաւորուի՞ նորէն արտասուել՝ ինչպէս Բամպարանտի միտքն ու արուեստը անոր արտասուելը տեսան :

ԲՈՂ ԱՏԱՆ



Յառաջեկայ թուով պիտի սխիւք հրատարակել բոլոր նիւթի մեծ բանաստեղծ Միգրեիվիչին կենսագրութիւնը, զոր խոստացած էինք նախորդ թուով մը՝ Միգրեիվիչի հարիւրամեակին առթիւ: Այս անգամ կը հրատարակենք թարգմանութիւնը Լեհաց աղբայրին բանաստեղծին ամենէն կրակոտ բանաստեղծութիւններէն մէկուն:

Տ Ա Ղ Ե Ր Ի Տ Ա Ս Ս Ր Դ Ո Ի Թ Ե Ա Ն



Անսիրտ, անհոգի, ժողովուրդները կմախքներու ժողովուրդներ են: Երիտասարդութիւնն, թեւ տուր ինձի: Թո՛ւ չ առնեմ այս հին աշխարհէն վեր, պատրանքին երկնաւոր վերնագաւառները բարձրանամ, ուր խանդը հրաշքներ կը գործէ, նորութեան ծաղիկը կը թօթվէ ու յոյսը ոսկի ցոլքերով կը պարուրէ:

Այն որուն աշուճները ծերութենէն կը մըթափին, այն որ գէպ ի հողը խորշմալից ճակատ մը կը հակէ, թող աշխարհի հորիզոնը տեսնէ այնպէս ինչպէս իր անզօր նայուածքները զայն կ'ընդգրկեն:

Երիտասարդութիւնն, դուն երկրէս վե՛ր թռի, եւ արեւուն աչքովը՝ մէկ բեւեռնէն միւսը՝ մարդկային զանգուածները թափանցէ:

Վար նայէ՛: Յաւերժական մէզով մտայլուտամ, պիղծ ջրնեղեղի մը մէջ խեղդուած սա միջոցը, երկիրն է: Տես ինչպէս անոր մարացած ջրերուն վրայ խեցեմորթ մը բարձրացեր է իր կոնքին մէջ: Ահ, զեկաւար ու նա է միանգամայն, ստորադաս թուլամորթները կ'որսայ, մերթ վեր կ'ելլէ, մերթ խորութեանց մէջ կը մխրձի: Չի կպիր կոհակին, եւ կոհակը իրեն չի կպիր. յանկարծ պըղպըջակի մը պէս, ժայռի մը կը զարնուի ու կը պայթի: Ոչ ոք անոր կեանքը ճանչցաւ, ոչ ոք անոր վախճանը գիտցաւ: Եսականութիւնն է ան:

Երիտասարդութիւնն, քեզի համար կեանքի նեկտարն այն ատեն միայն քաղցր է երբ զայն ուրիշներու հետ մէկտեղ կը վայելես: Երկնային սրտերն ա՛յն ատեն ցնծութեամբ կը դիւնովնան երբ ոսկի թել մը զանոնք կը միացնէ:

Միասին, ո՛վ երիտասարդ բարեկամներ: Ամենո՛ւն երջանկութիւնը, ահա մեր ամենուս նպատակակէտը: Միութեամբ ու ժողովցած, խանդավառութեամբ լուսաւորուած, քալե՛նք միասին, ո՛վ երիտասարդ բարեկամներ: Նոյնչափ երջանիկ է այն որ ասպարէզին մէջ տեղը ինկաւ. եթէ մտնի, անոր մարմինը աստիճան մը կ'ըլլայ՝ փառքի պալատը բարձրանալու համար: Միասին, ո՛վ երիտասարդ բարեկամներ: Իրա՛ւ, ճամբան դժնդակ ու լըպըրժուն է, բունն ու ժն ու տկարութիւնը անոր մուտքը կ'արգիլեն: Բունն ու ժը բունն ու ժով ետ մղենք, իսկ տկարութեան գէմ՝ մեր առաջին տարիներէն իսկ՝ մաքառիլ սորվինք:

Այն որ, դեռ տղայ, կրցաւ օրօրոցին մէջ հիգրային զուլիսը ճզմել, կենսաւորոսները պիտի խեղդէ երբ երիտասարդ ըլլայ, գոնիք ին ձեռքէ՛ իր զոհը պիտի ետ կորդէ, մինչեւ երկիրք պիտի երթայ դափնիներ քաղելու: Եւ լի՛ր հոնուր նայուածքը չի կրնար հասնիլ. փշրէ՛ ինչ որ բանականութիւնը չի կրնար փշրել: Երիտասարդութիւնն, քու թո՛ւիչդ հզօր է ինչպէս արժուիր, քու բազուկդ ինչպէս շանթը:


Ո՛ւս ուսի: Մեր շղթայովն աշխարհիս շըրջանակը պաշարենք: Մեր մտածումներն ու մեր հոգիները կեդրոնացնենք միակ վառարանի մը մէջ: Քու շաւղէդ դուրս ելիր, ո՛վ երկրագունս: Մենք քեզ նոր ուղիներու մէջ կ'արձակենք: Ու քու փտտած կեղեւդ թօթափելով՝ գարնան տարիներդ պիտի վերագտնես:

Քառսին ու խաւարին մէջ զօր տարբերու պայքարը կը վրդովէր, Աստուծոյ մէկ եղիցիւովը, իրերու աշխարհը հաւասարակշռութեան մտաւ, հովերը մոնչեցին, ալիքներն հոսեցան, աստղերն երկինքը շողացուցին:

Այսպէս՝ մարդկութեան աշխարհին մէջ՝ տակաւին կը տիրէ խաւարչտին գիշերը, կրքերու տարրերը տակաւին կը պայքարին. բայց թող սէրը իր բոցն արտաշնչէ, հոգեկան աշխարհը քառսէն պիտի դուրս ելլէ: Երիտասարդութիւնը իր ծոցին մէջ պիտի փթթեցնէ զայն, բարեկամութիւնը զայն պիտի հաստատապնդէ յաւիտենական ներգաշնակութեան մը մէջ:

Մարդկային սրտերուն սառոյցները կը ճեղքրտուին, նախապաշարումները կը զաղրին հոգիները մթնցնելէ: Ողջո՛յն, ազատութեան արշալո՛յս, քու ետեւէդ՝ փրկութեան արեւը կը ծագի:

ԱՏԱՄ ՄԻԾՔԻԵՎԻԾ



ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՅԱՂԹԱՆԱԿԸ



Լաւատեսները իրաւունք ունեցան: Լա Հէի Համաժողովը մեծամիտ որուն այն մը եղած պիտի չըլլայ: Սպառազինութեանց վերջնական ջրնջումը, պատերազմին արմատական բարձու մը չէ անշուշտ որ պիտի իրականացնէ ան. ոչ ոք այդ հրաշալի արդիւնքը համաժողովէ մը սպասելու չափ միամիտ եղաւ. բայց—ինչպէս որ գուշակած էինք—իրաւարարութեան միջազգային մշտական ատեանի մը հաստատումը արդէն ընդունուած է այս վայրկեանիս, եւ այդ ատեանին գոյութիւնը Պատերազմին կարծեցեալ անհրաժեշտութեանը դէմ ժողովուրդները ապահովցնող բաւական լուրջ միջոց մը պիտի

ըլլայ : Ամենէն սկեպտիկ մտքերն անգամ հիմա կը սկսին խոստովանիլ իրական կարեւորութիւնը այս քայլին զոր մարդկութիւնը կ'առնէ դէպ ի խաղաղութիւն :

Գնացանախորհրդէն անմիջապէս առաջ , թերահաւատութիւններն ու հեգնութիւնները սաստկացած էին , եւ բացումէն յետոյ առաջին մէկ քանի օրերուն , կրքի , գոտութեան եւ նյութարութեան նշաններ կայծկլտացին , որոնք վայրկեան մը կարծել տուին թէ իրօք ժողովքը զաւելջտ մը պիտի ըլլար լոկ , կամ թէ նոյնիսկ այդ խաղաղութեան ժողովը ընդհանուր գրգռման պատճառ մը եւ պատերազմի հաւանականութեանց բազմապատկում մը պիտի դառնար : Գերմանիոյ ընթացքն է մանաւանդ որ այդ վախերուն առիթ տուաւ . Համաժողովին գումարումէն առաջ , գերման դասախօս Սթենկըլ կծու գրքոյկ մը հրատարակեց ուր կը հեգնէր Չարին ձեռնարկը , խաղաղութիւնը անիրականանալի ցնորք մը կը նկատէր եւ պատերազմը կը հռչակէր անհրաժեշտ եւ օգտակար մարդկութեան համար : Արդ , այդ Սթենկըլն է որ Վիլհէլմ իր պատգամաւորներուն հետ Լա Հէ դրկեց : Այս պարագան ուս գիւանագիտութեան ջիղերուն դպաւ բնականաբար . եւ կը կարծուէր թէ Ռուսիոյ ու Գերմանիոյ միջեւ բացուած այդ անհամաձայնութիւնը Համաժողովը պիտի անդամալուծէր . այդ յոյսը ունէին մանաւանդ թուրք պատգամաւորները , որոնք կը ներկայացնեն զիւանագիտութիւն մը որ եւրոպական պատերազմի մը վախին չընորհիւ միայն գոյութիւն ունի , եւ մտադիր էին Գերմանիոյ փէշէն բռնած , Պատերազմին ներքոյ ռոնալ Համաժողովին մէջ : Բայց բացման պահուն Վիլհէլմ զգաց որ այս Համաժողովը , հակառակ գերման զօկամակութեան , կրնայ յաջողութեան մը յանգիլ , եւ ուզեց որ առաջին դերերէն մէկը ինքն ունենայ այդ գործին մէջ , եւ իր ուսուցիկ ճատերէն մէկը արատաանեց ուր կը շնորհաւորէր Չարին ձեռնարկը եւ յոյս կը յայտնէր թէ Գերմանիոյ ներկայացուցիչը Ռուսիոյ ներկայացուցիչին հետ միացած «պիտի վարէին» այդ ձեռնարկը եւ զայն յաջողցնէին . ըսել կ'ուզէր թէ Գերմանիոյ առաջին պատգամաւոր Պ . տը Մունսթըրը կը փափաքէր դեր-նախագահ տեսնել Համաժողովին , քանի որ նախագահ պիտի ըլլար Ռուսիոյ ներկայացուցիչ Պ . տը Սթալ : Իր բաղձանքը չիրականացաւ . ոչ Ֆրանսան , ոչ Անգլիան , ոչ Ամերիկան պիտի յանդուրժէին որ Գերմանիան , առանց ո եւ է որոշ դեր ունենալու այդ գործին մէջ , իրենցմէ գերակշիռ դիրք մը առնէր . Պ . տը Սթալ նախագահ ընտրուեցաւ , իբրեւ ներկայացուցիչը Համաժողովին զաղափարը յղացող պետութեան , եւ հոլանտական առաջին պատգամաւոր Պ . Գաունսպէք դեր-նախագահ ընտրուեցաւ իբրեւ ներկայացուցիչը այն երկրին ուր Համաժողովը կը հիւրընկալուէր :

Ատկից Վիլհէլմ առնուեցաւ , ու զորոյց մը

ելաւ թէ Պ . տը Մունսթըրը—յանկարծական անհանգստութենէ մը բնուած , —պիտի քաջուէր Համաժողովէն : Այդ միջոցին էր որ Պ . Պուլտուա՝ ֆրանսական մտքին յատկութիւնը ու նրբութիւնը օգնութեան հասցուց , այդ քառոր ներդաշնակելու համար , եւ յաջողեցաւ . խորհրդարանական կեանքի քաջավարժ , ու ծանօթ իր համոզկեր ու փայլուն պերճախօսութեամբ , Պ . Պուլտուա միջոցը գտաւ բոլոր փառասիրութիւնները դոհացնելու եւ կըրքերը հանդարտեցնելու . անհասնում դեր-նախագահութիւններ եւ պատուոյ նախագահութիւններ հնարեց , եւ բաժնեց ամենուն : Պ . տը Մունսթըրը եղաւ պատուոյ նախագահ առաջին յանձնախումբին : Ժողովը բաժնուեցաւ երկք յանձնախումբի . առաջինը , իսկական նախագահութեամբ պիւճիքական պատգամաւոր Պ . Պէռնաէնի , պիտի զբաղի սպառազինութեանց նուազման խնդրով . երկրորդը , իսկական նախագահութեամբ քուսական : Կատգամաւոր Պ . տը Մառթէնսի , պիտի զբաղի պատերազմի օրէնքներուն խստութիւնը մեղմացնելու միջոցները ուսումնասիրելով . երրորդը , ամենէն կարեւորը , պիտի զբաղի միջազգային իրաւարարութեան խնդրով , եւ այդ յանձնախումբին իսկական նախագահը եղաւ նոյն ինքն Պ . Պուլտուան . կարելի է ըսել թէ Լա Հէի Համաժողովին ամենէն բեղուն ու աւմենէն փայլուն դերն է որ յանձնուած եղաւ Պ . Պուլտուային . ֆրանսական վարկին նշանակելի բարձրացում մըն է այս , եւ զբաւական մը որ ֆրանսական ողին պիտի գերակշիռ հանդիսանայ քան բրուսիականը՝ Համաժողովին մէջ . պարագայ մը որ արդէն ինքնին գեղեցիկ արդիւնք մը կը թուի մեզի :

Համաժողովը լրջաբար որոշած է արդիւնքի մը հասնիլ անպատճառ : Եւ այդ որոշման զըլխաւոր դրոյիչը՝ հանրային կարծիքին տիեզերական յուզումն է եւ մանաւանդ այն բոլոր աղմուկը զոր կը հանեն ընկերվարական , յեղափոխական , խաղաղասիրական միթիկները , քաղաքական դատերու պատգամաւորութիւնները , պատերազմատեսաց անձնաւորութիւններու ճառերը : Արդարեւ , Լա Հէ միջազգային մեծ համախմբումի ձեւն ստացաւ , ինչպէս Բոլ Ատան կը բաղձար : Բացմանը իրիկունն իսկ , Հոլանտայի ընկերվարականները բողոքի միթիկ մը կը գումարէին հռչակելու համար թէ կառավարութիւնները անկարող են մշտական խաղաղութիւնը հաստատելու , եւ թէ ժողովուրդը միայն կրնայ պատերազմը ջնջել , երբ առաջալէ ընկերական արդի կազմակերպութիւնը , որուն մէկ հետեւանքն է պատերազմը : Եւրոպայի բոլոր երկրներուն ընկերվարական ու յեղափոխական մամուլը հեգնական եղանակ մը հրնչեցուց : Միւս կողմէ բոլոր այն անհատականութիւնները որոնք խաղաղութեան յաջողանակին նուիրած են իրենց ջանքերը , եւ որոնք Չարին ձեռնարկին շուրջը հուսաւոր

և. խանդավառութեան մըրիկ մը յարուցին եւրոպական հանրային կարծիքին մէջ, աւստրիացի գրագիտուհի տը Սիւթնէն պառուհիին, անգլիացի Սթէտը, ոռու ժան տը Պլոքը որ Պատերազմին վրայ իր գիտական ուսումնասիրութեամբը Ձարին որոշմանը մէջ մեծագոյն բաժինը ունեցաւ. ֆրանսացի Յրեւտեռիք Բասին որ երկայն տարիներէ ի վեր միջազգային իրաւարարութեան ատեանի մը հաստատման անհրաժեշտութիւնը կը քարոզէր, գերման Տիկին Սեւեմբան որ կը ներկայացնէ Շիլլերի երկրին խաղաղասէրները, այդ բոլորը եւ գեռ ուրիշ նուազ նշանաւորներ, Լա Հէ խոնուած են, եւ բանախօսութիւններով, ինքնակրօններով, յօգուածներով կը շարունակեն իրենց պայքարը ի նպաստ Ձարին ձեռնարկին:

Այս պայմաններուն մէջ եթէ Համաժողովը յանգէր ոչնչի, կառավարութիւնները ընկերվարական ու յեղափոխական մտքներուն զօրութիւնը եւ վարկը բազմապատկած պիտի ըլլային՝ անոնց գուշակութիւնները արգաւթացնելով եւ իրենց ապիկարութիւնը հանդիսաւորապէս ապացուցանելով, ու նոյն ատեն պզտիկ ձգելով Սթէտները, Պլոքները, Բասինները, խաղաղութեան առաքեալները, հանրային կարծիքին խանդավառ ու լաւատես մասը, այդ ամբողջ ուժին համակրութիւնն ու նեցուկը պիտի կորսնցնէին, նոյն իսկ այդ ուժը իրենց դէմ դարձած պիտի գտնէին: Անհրաժեշտ էր բանի մը յանդիմ: Կ'ըսուի թէ մասնաւորապէս Սմերթկա եւ Անգլիա անկեղծօրէն ու ջերմօրէն կը փափագէին իրաւարարական գրութեան հաստատումը յաջողցնել: Գերման հակակրութիւնները, իրենց հետեւող բոլոր թշնամիութեանովը մէկտեղ, ըստիպուեցան կակուղնալ, եւ Համաժողովը գործել սկսաւ:

Այժմէն գիտենք թէ առաջին յանձնախումբը ոչինչ պիտի կարգադրէ: Սպասողներութեանց նուազման վրայ վէճ մը գոգոռիչ հետեւանքներ միայն կրնայ ունենալ՝ խաղաղութեան նպաստելէ շատ հետո. արդէն սպասողներութիւնները ինքնին պիտի պակսին այն օրը երբ պատերազմի հաւանականութիւնները նուազեցընող պայմանները իրապէս հաստատուին. եւ այդ տեսակէտով է որ իրաւարարական գրութեան յաջողումը անուղղակի բայց աւելի ապահով միջոց մըն է առաւել կամ նուազ մօտաւոր ապագայի մը մէջ սպասողներութիւնները նուազեցնելու. պիտի շատանան տեսակ մը պայթուցիկներու գործածութիւնը արգիլել ջանալով: Այսպէս, վերջին նիստերէն մէկուն մէջ, անգլիական Տրալ-Տրալ պայթուական գնդակներուն գործածութիւնը արգիլուեր է:

Երկրորդ յանձնախումբը պիտի կարողանայ մինչեւ աստիճան մը յաջողիլ: Կը կարծուի թէ պիտի յանգին ժընէվի դաշնագրութեան պայմանները ծովային պատերազմներու համար ալ պարտաւորիչ դարձնելու, եւ թէ պիտի կարե-

նան պատերազմի օրէնքներուն մէջ աւելի գրութութիւնն ու մարդկայնութիւնն մտցնել (եթէ երբեք կարելի է «մարդկայնութիւն» եւ «պատերազմ» բառերը ո եւ է կերպով հաշտեցնել):

Երրորդ յանձնախումբը բուն Համաժողովը կը կազմէ. եւ արդէն գործին կարեւոր մէկ մասը կատարուած է: Երկարատեւ վիճարանութիւններէ յետոյ յանձնախումբը գրեթէ վերջնապէս ընդունեցաւ իրաւարարական մշտական ատեանի մը հաստատման սկզբունքը: Պատգամաւորներէն ոմանք—Գերմանները մանաւանդ—մշտական ատեանի գաղափարին դէմ մարտնչեցան, ուզեցին որ այն պարագային ուր պատերազմը անխուսափելի դառնայ, երկու ազգերն ընտրեն երկու ուրիշ շէզոք պետութիւն որոնց միջնորդութեանը յանձնեն իրենց վէճին լուծումը: Եւ միջնորդութեան պայմանները արդէն մանրամասնօրէն վիճուեցան ու որոշուեցան: Սակայն միջնորդութեան միջոցին դիմումը չափազանց կամայական եւ պատահական կը դարձնէր իրաւարարութեան գործադրութիւնը: «Մշտական ատեան»ի գլխաւոր ջատագովը Ամերիկան է, իրեն հետ ունենալով Անգլիան. եւ անգլօ-սաքսոն գաղափարը կը թուի յաղթանակած ըլլալ: Միջամտութեան գրութիւնը պիտի շարունակուի ուսումնասիրուիլ եւ անոր պայմանները պիտի ճշգրտին եւ օրէնքի ձեւ առնեն. բայց այդ Համաժողովին կարեւորագոյն արդիւնքը իրաւարարութեան մշտական ատեանին հաստատումը պիտի ըլլայ (եթէ գերման դժկամակրութիւնը կամ ուրիշ կնճոռութիւններ գործը չվիճեցնեն): Անգլիացիք ներկայացուցին մշտական ատեանի ծրագիր մը, նմանապէս՝ Ամերիկացիք եւ Իտալացիք. Ռուսերը որ նախ միջամտութեան ծրագիր մը ներկայացուցած էին, յայտնեցին թէ պատրաստ ունին նաեւ իրաւարարական մշտական ատեանի ծրագիր մը, եւ զայն ալ մէջտեղ հանեցին: Հիմա, պատգամաւորները այդ չորս ծրագիրները իրարու կը բազդատեն եւ կը ջանան զանոնք ձուլել եւ ընդհանուրին հաւանութիւնը գրաւող վերջնական ծրագիր մը ձեւացնել: Կը կարծուի թէ այդ ատեանին պաշտօնավայրը պիտի ընտրուի Պրուսելի կամ Լա Հէի պէս քաղաք մը, ատեանին անգամ պիտի ըլլան ութը ինը ուղղէ հեղինակաւոր անձնաւորութիւններ, ցկեանս այդ պաշտօնին կոչուած. իրարու հետ վէճ ունեցող պետութիւնները պարտաւոր պիտի չըլլան զիմելու այդ Ատեանին, բայց Ատեանին գոյութիւնը պատճառ մը պիտի ըլլայ որ հանրային կարծիքը պատերազմի հրատարակման դէմ աւելի ուժգին կերպով բարձրանայ եւ իրաւարարութեան միջոցին դիմել պահանջէ. անգամ մը սակայն որ վէճ ունեցող երկու պետութիւն զիմեն Ատեանին, ստիպուած պիտի ըլլան հնազանդիլ արձակուած վճռին. եւ նոյն իսկ կը մտածուի միջոցներ ձեռք առնել անհնազանդութեան ձգտում ցուցը-

նող երկիրը Ատեանին որոշման հպատակեցնելու համար, զոր օրինակ՝ այդ երկրին հետ խզել թղթատարական, հեռագրական արտաքին յարաբերութիւնները, եւն:

Չարին ձեռնարկը պիտի յանդի ուրեմն նոր հաստատութեամբ մը քաղաքակիրթ աշխարհը օժտելու: Ինչ որ Հենրիկոս Գ. եւ Կարոլէոն Գ. Գրանսաքինները առանց յաջողութեան փորձած էին նուազ գործնական պայմաններով եւ այն պիտի չըջաններու մէջ ուր հանրային կարծիքը հասուն չէր: Նիքոլա Բ. բաղդը պիտի ունենայ միեւնոյն ձեռնարկը մասնական բայց շատ լուրջ յաջողութեամբ մը պսակուած տեսնելու: Ազգերը պիտի ունենան իրենց դատարանը, ինչպէս անհատները. եւ ինչպէս անհատները իրենց վէճերը դանակի հարուածներով լուծելու դրութիւնը շատոնց մէկդի գրին եւ Օրէնքին միջնորդութեան զիմել նախընտրեցին, ազգերը միեւնոյն բանը պիտի ընեն հիմա: Այդ հաստատութեան հիմնարկութեան յետոյ, անոր պաշտօնավարումը անտարակոյս պիտի բաղխի արդելքներու, չարակամութեանց, դժգոհութեանց. բայց այդ բոլորը երկայն չեն կրնար տեւել. Կանադային կարծիքը, հետզհետէ աւելի գիտակից, աւելի կազմակերպուած ու զօրեղ, պիտի ցցուի պատերազմի դրութեան դէմ ու իրաւարարութեան միջոցը պարտաւորիչ պիտի դարձնէ. ատկից զատ, Եւրոպա պիտի ստիպուի, նոյն իսկ իր կենսական շահերուն համար, իր ներքին կոիւնները մեղմել ու եւրոպական պատերազմի շարժառիթները ոչնչացնել. «քսան տարի չանցած, կ'ըսէր վերջերս Լավրա» խօսակցութեան մը մէջ, «ամերիկեան վտանգը» մէկ կողմէն, «ղեղին վտանգը» միւս կողմէն, այնպիսի ահաւոր ընդլայնում մը պիտի ստանան, որ եւրոպական ազգերը պիտի ըստիպուին վերջապէս մէկդի դնել իրենց ներքին կոիւնները, պիտի ջանադիր ըլլան կարգադրել առկա հարցերը, պիտի ցածցնեն սահմանազուխները, պիտի պարտաւորուին՝ մանաւանդ՝ վերջնապէս լուծել Տաճկաստանի խնդիրը որ ամենէն վտանգաւորն է, ու եւրոպական Միացեալ-Նահանգները պիտի չուշանան կազմուելու:»

Առ այժմ գլխամտութեան հոգեվարքն է որ կը տեսնենք, Բիրա Ուոթին պաշտամունքին պարտութեանն է որ հանդիսատես կ'ըլլանք. Մտքին տիրապետմանը արշալոյսը կ'ընդունարենք: Լա Հէի ժողովը, ու Տրէյֆիլսի խնդիրը, երկու մեծ նշաններն են այս պատմական յեղաշրջութեան որ կը կատարուի:

Լա Հէի Համաժողովը պիտի չզբաղի քաղաքական խնդիրներով, ինչպէս որ արդէն յայտարարուած էր ստաջուց: Հակառակ այդ յայտարարութեան, բոլոր կեղեքուած ազգութիւնները Համաժողովին դիմեցին պատգամա-

ւորներով ու յիշատակագրերով. Մակեդոնացիք, Ֆինլանտացիք, Բոլոնիացիք, Երիտասարդ-Փուրքիոյ ներկայացուցիչները եւ Հայերը իրենց բողոքն ու խնդրանքը տարին Դեսպանախորհուրդին: Չեւակերպութեան համար ժողովը մասնաւոր յանձնախումբ մը կազմեց որպէսզի ընդունի եւ արձանագրէ բոլոր այդ աղերսագրերը. այդ յանձնախումբը, բոլոր ղրկուած թուղթերը ստանալէ յետոյ, վերջնականապէս հաստատեց որ Դեսպանախորհուրդը անկարող է այդպիսի խնդիրներով զբաղելու:

Այդ յիշատակագրերու կամ պատգամաւորներու ուղարկումը բոլոր այդ գատերուն համար ռեֆրանի օգտակարութիւն մը կ'ունենայ լով, եւ ատի իր անհերքելի կարեւորութիւնը ունի: Իայց անգամ մըն ալ պէտք է որոշ կերպով բացատրել, մասնաւորապէս մեր խեղճ ժողովրդին որ օրէ օր կը սպասէ հայկական խնդրոյն լուծմանը, թէ այս Համաժողովին կարելի չէ սպասել այդ լուծումը, թէ նոյն իսկ յուսալու չէ բնաւ որ այդ խնդիրը Համաժողովին օրակարգին մէջ պիտի մտնէ: Գրեցի եւ զարձեալ կը կրկնեմ թէ այդպիսի խնդիր մը միայն այն ատեն Դեսպանախորհուրդին օրակարգը կրնար մտնել երբ եւրոպական պետութիւն մը, իր երկրին հանրային կարծիքէն բնազատուած, կամ մասնաւոր իր շահերուն համաձայն գտնելով այդ բանը, որոշէր այդ խնդիրը յուզել Դեսպանախորհուրդին մէջ: Եւ այդ սահակէտով կարեւորագոյն աշխատութիւնը կը կայանար դրոշելու մէջ եւրոպական հայասէր խմբակները որ իրենց երկրին կառավարութեանը մօտ իրենց ազդեցութիւնը բանեցնեն եւ զայն մեղեն որ իր պատգամաւորներուն յանձնարարէ «Խաղաղութեան խոչընդոտ»ներուն մէջ չմտնալ նաեւ Հայոց անհանդուրժելի եւ վտանգաւոր կացութիւնը:

Օգտակար էր միանգամայն որ Հայութեան բաղձանքները ներկայացնող բնակարկցութիւններն իրենց պատգամաւորները դրկէին Լա Հէի, Դեսպանախորհուրդին յիշատակագիր մը յանձնելու, լիազօրներուն հետ մասնաւոր անսակցութիւններ ունենալու, Լա Հէի մէջ Հայոց արդի կացութեանը վրայ բանախօսութիւններ արտասանելու համար. այս ամէնը՝ ոչ թէ քաղաքական ու եւ է անմիջական արդի նքի յոյսով, այլ Լա Հէի մէջ տեղի ունեցած մեծ դէպքին առիթով հայկական խընդրոյն վրայ տիեզերական մամուլին ու դիւանագիտական աշխարհին ուշադրութիւնը հրաւիրելու բարոյական օգուտը աչքի առջեւ ունենալով: Պ. Չերազ, զոր Պուլկարիոյ հայ գաղթականութիւնները պատգամաւոր ընտրած էին, յանձնեց է (ինչպէս կ'իմանանք Թանէն) յիշատակագիր մը Դեսպանախորհուրդին, տեսակցութիւններ ունեցել է մէկ քանի լիազօրներու հետ. միայն Հայաստանի ջարդերուն վրայ իր բանախօսութիւնը չէ կրցել արտա-

սանկե . թուրք պատգամաւորները յաջողեր են Նոյանական կառավարութիւնը ստիպել որ այդ բանախօսութիւնը արգելուի :

Երբ իրաւարարութեան մշտական Ատեանը հաստատուի եւ սկսի գործել , կարելի է որ հայկական խնդիր կարգադրելու մասին վէճ ունեցող պետութիւնները Ատեանին վճռին դիմեն՝ զայն լուծելու համար : Այն ատեն առաւել քան երբեք հայ գործիչները պարտք ունին եւրոպական հանրային կարծիքը բորբոքելու ջանքեր թափել ի նպաստ հայկական դատին , որպէսզի կառավարութիւնները ըստիպուին զբաղիլ այդ խնդրով : Սակայն այդ խնդիրը այն ատեն միայն կրնայ լուծուիլ «իբր հայկական խնդիր» ու հայկական ճշմարիտ շահերուն համաձայն , երբ մենք կարող ըլլանք մեր խնդրոյն լուծումը միմիայն եւրոպական կառավարութեանց քմայքէն ըստ պատկառման չչառանալ , երբ մենք կարող ըլլանք մեր խնդիրը ձգել , գործնական ու որոշ ձեւի մը մէջ ներկայացնել զայն , եւ մեր ուրոյն ուժերով անոր լուծումը պատրաստել ու զիւրացնել : Մեր խնդիրը մենք միայն կրնանք լուծել , տարակոյս չկայ ասոր : Իրաւարարական Ատեանը թանկագին օժանդակ մը կրնայ ըլլալ՝ որպէսզի մեր ջանքերը պսակուին ու նուիրագործուին : Բայց պիտի ըմբռնենք : Ու կարող պիտի ըլլա՞նք :

Ա . Զ .

* *

— Լոնտոնի անգլո հայկական ընկերակցութիւնը , որուն ղեմած էի , յիշատակագիր մը զրկած է , — ինչպէս կը հաղորդուի ինծի — անգլիական արտաքին գործոց նախարարութեան , Լա Հէի Դեսպանախորհուրդին ուղղուելու համար :

— Փրանքո-հայկական ընկերութեան կողմէ , Պ . Լալիս անձամբ տարաւ յանձնեց Պ . Տէլքասէին Լա Հէի Դեսպանախորհուրդին ուղղուած յիշատակագիրը : — Ընկերութեան ջանքերով , երբեքս Էփելի մէջ Տիկին Սեփոնի մէկ պերճախօս ու յուզիչ յօդուածը Հայոց արգի կացութեանը վրայ , եւ Օռոնի մէջ՝ հրաւէր մը Փրանսական կառավարութեան որպէսզի Լա Հէի Դեսպանախորհուրդին առիթով Հայոց կացութիւնը եւրոպական զիւրաքաղիտութեան ներկայացուի : Մօտերս պիտի երևայ Ռըլլիսը Բաւիին մէջ կարեւոր յօդուած մը նոյն խնդրոյն վրայ : Նմանապէս քիչ ատենէն Քլերանսական մամլոյն մէջ պիտի հրատարակուի այն յիշատակագիրը զոր Փրանքո-հայկական ընկերութիւնը զրկեց Դեսպանախորհուրդին : Ընկերութիւնը որոշեց աշխատի յետաձգել լրագրական յօդուածներու եւ բանախօսութիւններու շարքը ի նպաստ հայկական դատին :

— Պիլսէն , կացութեան շատ մօտէն տեղեկ եւրոպացի մը մեզի կը հաղորդէ թէ Օր-

մանեան պատրիարքը , Սուլթանին զրդամբը եւ Արթին փաշայի հետ համաձայնութեամբ , մայիս 2 ին Լա Հէի Դեսպանախորհուրդին նախազահին ուղղած է հեռագիր մը որով կը յայտարարէ թէ բոլոր այն հայ ընկերութիւնները կամ անհատները որ ղեմած են Դեսպանախորհուրդին , ազգը ներկայացնելու ո եւ է իրաւունք չունին :

Այս զղուելի արարքը , որով Օրմանեան կը ձգտի չքացնել արտասահմանի Հայութեան բողոքը որ ամբողջ Հայութեան զգացմանց հարազատ արտայայտութիւնն է , ուրիշ արգիւնք պիտի չունենայ բայց եթէ եւրոպական զիւրաքաղիտութեան հանդիսաւորապէս ծանուցանել թէ Հայոց պատրիարքը այս վայրկեանիս Հայ մը չէ , այլ հլու թուրք է-ֆէնտի մը :

Զ .



Վ Ճ Ի Ռ Ը

— 0 —

Վերջապէս , վճարել Ատեանը տուաւ իր վճիռը որուն անձկագին կը սպասէր քաղաքակիրթ աշխարհը : Այդ վճիռը՝ Արդարութեան յաղթանակն է : Տեղեկարար Պ . Պալօ-Պորտէ , ընդհ. գատախօս Պ . Մանօ և տիկին Տրէյֆիւսի փաստաբան Պ . Մոնտա , ջտխախիչ ու վերջնական ապացուցմամբ մը ցուցնելէ յետոյ Տրէյֆիւսի անմեղութիւնը և զինքը գատապարտողներուն ուժիրը , եզրակացուցին թէ վճարել Ատեանը պարտէր Բարիլի Պատերազմական խորհուրդին 1894 ի վճիռը բեկանել և ջնջել ու Տրէյֆիւսը զրկել նոր Պատերազմական խորհուրդի մը առջև : Ի՞նչն Պատերազմական խորհուրդն է որ պիտի գտաէ Տրէյֆիւսը , և զինուորականներու ձեռքով ազարտուած ու սպաննուած անունը նորէն անոնց ձեռքով պիտի մաքրուի ու կենդանանայ :

Աշխարհ շունչ պիտի տանէ այս վճիռը իմանալով : Եւ ասիկա պիտի մնայ ամենէն մեծ յաղթութիւններէն մեկը զոր Միտքը տարած եղաւ Բիրտ-Ուժին վրայ : Ափ մը մարդոց անձնութիւնը , յանդգնութիւնը , կորովն ու ճարտարութիւնը բաւեցին կղերական ու զինուորական բռնապետութիւնը փշրելու , և ապացուցին թէ Արդարութիւնը լոկ բաւ մը չէ : Եւ առաջին անգամն է պատմութեան մէջ որ պարզ քաղքենիներ , միմիայն մաւրորական միջոցներով , կը յաղթեն զինուորական ուժին : Այս ամբողջ վսեմ պատմութիւնը Փրանսայի մէջ միայն կրնար կատարուիլ . «Ճշմարիտ Փրանսան» ողջ է ուրի՞ն , և անլի կենսալորդ ու գեղեցիկ քան երբեք : Ասով Փրանսա շքեղօրէն ապտակած կ'ըլլայ բրոսիական ողին և Բիրտ-Ուժին պաշտամունքը , և գործով կը հաստատէ թէ իրաւունքը Ուժէն գերիվեր է :

Հրէաները որ այս հոյակապ պայքարին շարժառիթը եղան և անոր յաջողմանը մէջ ունեցան հզօր ու անձնօրէր բաժին մը , իրենց ցեղին տարեգրութեանց ամենէն փառաւոր հջերէն մէկը հիւսեցին ստով : Պայքարը դեռ չէ աւարտած անշուշտ : կը մնայ անմեղին արձակումը , ու մանաւանդ ոճրագործներուն պատուհասումը : դեռ խոշոր դժուարութիւններ կան ընկճուելու : Բայց «Ճշմարտութիւն»ը իր ճամբուն մեծագոյն մասը քալեց անցաւ արդէն , — պիտի շուշանայ հասնիլ մինչև նպատակէտը : Եւ այնուհետև , երբ այս մասնաւոր հարցը լուծուի լմնայ , արդարութեան մարտիկները գումարտակը պիտի անցնի ուրիշ գատերու : Այս յաղթանակը որ իրականացաւ հակառակ այնքան անընկճելի , այնքան վիթխարի արգելքներու , յոյսը կը բազմապատկէ բոլոր անիրաւուածներուն : ուրեմն բոլոր արդար գատերը իրենց ժամը պիտի ունենան : Այս դարուն ամենէն մեծ դէպքն է սա : Ապրի՛ Ֆրանսան :



ՀԱՅ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆԸ ԲԱՐԻՉԻ ՄԷՋ

Պ . Եղիազարեան կազմակերպած էր յունիս 2ի իրիկունը , Բլելյէլի սրահին մէջ , հայկական երաժշտութեան երեկոյթ մը , որ բաւական յաջող անցաւ : Նուագահանդէսը սկըսաւ բանաստեղծութեամբ մը որով Պ . Բ . Օպոնի Ֆրանսացի երիտասարդ հայաղէտ մը՝ Պ . Բառիէոնի աչակերտներէն , Հայոց պատմութեան , բանաստեղծութեան եւ երաժշտութեան վրայ մէկ քանի ընդհանուր սեղիկութիւններ տուաւ : Պ . Օպոնի շատ յուզուած շեշտերով պատկերացուց Հայոց արդի կացութիւնը , եւ մեր հին ու նոր երաժշտութեան հատուածներուն մէջէն ցուցուց հայ հոգիին ողբազին կամ հաւատալից , միտտիքական կամ ազատասէր արտայայտութիւնները : Առաջին մասը կը կազմուէր Հայկական Պատարագին մէկ քանի կտորներէն (Պ . Եքմալեանի շարադրութեամբ) , զոր երգեց Ֆրանսացի արուեստասէրներու խումբ մը : ձեռնարկը շատ դժուարին էր , երգողները՝ անվարժ այս նոր լեզուին ու արուեստին , եւ մեծ մասամբ միջակ կամ աննշան ձայներով . բայց յայտնի էր որ շատ խնամք ու աշխատութիւն թափած էին , եւ իրենց անձնուիրութիւնը ողջունուեցաւ ջերմ ու համակիր ծափերով : Երկրորդ մասը կը բաղկանար հայկական նոր երգերէ , զոր երգեց Պ . Եղիազարեանց , առանձին եւ խումբին ընկերակցութեամբ . այդ երգերէն Հերիֆ Որդեակիբ եւ Զէյրունցիները , Պ . Եղիազարեանի տաք եւ

զգայուն ձայնով թարգմանուած , խանդավառ ընդունելութիւն մը գտան : Զարմացանք միայն սեանելով որ Պ . Օպոնի Հերիֆ Որդեակիբ եղանակը ներկայացուց իրրեւ Պ . Եղիազարեանի ձեռքով կարգադրուած հայ ժողովրդական երգ մը , մինչդեռ ամէն մարդ գիտէ որ Զուխաճեանի Լեպիկիպիանին մէկ կտորն է՝ Մնակեանի բանաստեղծութեան յարմարցուած : Պ . Եղիազարեան որ նուագաստեղծ չէ այլ պարզապէս երգիչ , պարսաւոր էր Զուխաճեանին անունը յիշել տալ եւ այս առիթով յարգանք մատուցանել տաղանդաւոր ու ողբացեալ հայ երաժշտին :

Պ . Աքելեանց , Պարուի թատրոնին ծանօթ դերասանը , որ Բարիզ կը գտնուէր ամսէ մը ի վեր , երկու հայերէն բանաստեղծութիւն արտասանեց , Նալբանդեանի Ազատարիւնը , եւ Մի խորհուրդ Տանկանայերին :

Մրանը կէսէն աւելին լեցուն էր . կային բաւական թուով Եւրոպացիներ , որո՞ք գոհ մնացին այս երեկոյթէն , ուր իր դժբաղդութիւններով միայն ծանօթ ժողովրդի մը պատմութեանը եւ երաժշտութեանը վրայ գաղափար տրուեցաւ իրենց :

Պ . Եղիազարեան շնորհաւորութեան արժանի է այս դժուարին ու մեծապէս չահեկան փորձը ձեռնարկած ըլլալուն համար . կը փափագրնք որ այս փորձը կրկնուի , աւելի կատարելագործուած ու ճախացած :

Պ . ՅԱՍՈՒԼԵԱՃԵԱՆ Ի ԲՍՈՒՉ

Այս օրերս Բարիզ հասաւ Պ . Յասուլեանձեան , յայտնի հայ ողբերգուն : իր ունեցած յանձնարարականներուն շնորհիւ ընդունուեցաւ Լաուրիտալիէն հիւանդանոցը , ուր քիչ մը ատեն մնալէ ե կազդուրուելէ յետոյ՝ մտադիր է Եգիպտոս մեկնիլ :

Նիւ-Եորքէն խումբ մը Տիգրանակերտցիներ մենէ խընդրած են ուղղել սխալ մը որ սպրդած էր «Անասիա»ի Գ . թուոյն առաջնորդողին մէջ : Տիգրանակերտի Ֆրանսական Հիւպատոսին կնոջը տիկին Մեռիէի ընկերացողները , երեք հարիւր «որբեր» չեն եղած , ինչպէս զբաժ էինք յիշողութեան շփոթութեամբ մը , այլ երեք հարիւր «գաղթականներ» :



Le Gérant : GEORGES WALINE.
Paris. — Imp. V^o ALBOUY, 75, avenue d'Italie.

Այն անձերը որ բաժանորդ չեն գրուած ու ԱՆԱՀԻՏԻ առաջին եւ երկրորդ թիւերը վար
 դրած են , վերջին անգամ մըն ալ կը խնդրենք որ հաճին ԵՏ ԴԱՐՁՐՆԵԼ :
 Յանձն կ'առնենք նոյն իսկ ԴՆԵԼ :

Ա Ձ Դ Ե Ր



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԵՅԱԻ
 ԱԼԵԿՍԱՆԴՐ ԾԱՏՈՒՐԵԱՆԻ
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հ Ա Տ Ո Ր Բ .
 գին ւեկ ռուպլի
 Ղիմել հեղինակին՝
 Sadovaja Karetnij, Nomera Ivanovoj N. 10
 Russie MOSCOU

Լ ո յ ո ս ե ս ա լ
 Վ . Փ Ա Փ Ա Ջ Ե Ա Ն Ի

Լ Ա Յ Բ Ո Շ Ա Ն Ե Ր
 Ա Ջ Գ Ա Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Ս Ո Ւ Մ Ն Ա Ս Ի Բ Ո Ւ Թ Ի Ի Ն
 գինն է 50 կոպէկ (1, 20 ֆր .)

Ղիմել հեղինակին՝
 Mr . V . Papasian , Soujnie nomera
 TIFLIS



Գ Ա Ռ Ն Ի Կ Տ Է Օ Ք Մ Ի Ճ Ե Ա Ն

ԴՐԱՎԱՃԱՌ ԹՂԹԱՎԱՃԱՌ ԵՒ ՏՊԱԳՐԻՉ

Մասնաւոր պահեստ ուսանայ հրատարակութեանց , ղպրոցական եւ գրասենեկի ամէն տե-
 սակ պիտոյքներու : Տպագրութիւն՝ հայերէն , ֆրանսերէն պուլկարերէն , ռուսերէն , գեր-
 մաներէն եւ անգլիերէն լեզուներով :

Աշխատակից՝ Հայերէն գրքերու Հրատարակչական ընկերութեան Թիֆլիզի :
 Գործակալ՝ «Արաքս» , «Հանդէս-Ամսօրեայ» , «Ազգագրական Հանդէս» , «Լուսնայ» , «Անահիտ» ,
 եւ ուրիշ հրատարակութիւններու :

Արժէքուցակներ կը յղուի 25 սնդ . ի չգործածուած նամակադրօջմի փոխարէն :
 Դիմել՝ K. Deukmédjian, Roustchouk, Bulgarie.


ՎԱՀԱՆ ՄՈՋԵԱՆ
 Կը գնէ ամէն տեսակ նամակադրօջմի
 ԼԱԻԱԳՈՅՆ ԳՆԵՐՈՎ
 (40, Rue de Dunkerque, PARIS)

ՁՈՒՎԱՐԱՆ ՏՊԱԳՐԱԿԱՆ ՏԱՌԵՐՈՒ
 Եւրոպական տառերէ զատ կը ձուլէ մաս-
 նաւորաբար հայերէն , տաճկերէն եւ երբայե-
 ցերէն տառեր :
 M^r Agop Dzerounian, Sophia (Bulgarie)

CYCLE DES ÉTUDIANTS
 11, RUE DE VAUGIRARD, 11
 MAISON ZADIG

Bicyclettes, sur mesure, à tous prix. Spécialité d'accouplements, système breveté.
 Location, réparation et remisage.

Պ . Չափիկ հայրենակիցներու համար տրամադիր է գոնացուցիչ պայմաններով եւ հաւա-
 սարձուրեաւք կատարել այն ապսպրանքները զորս կը յուսայ ընդունիլ :



ԱՆԱՀԻՏ՝Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Անահիտ պիտի հրատարակուի ամիսը մէկ անգամ . իւրաքանչիւր թիւ պիտի բաղկանայ 32 էջէ , եւ պիտի արժէ՝ ձեռքէ գնողներու համար 1 ֆրանք (Ֆրանսա) , 20 սէնդ (Ամերիկա) 1 ֆր. 20 (օտար երկիրներ) :

Բաժանորդագինն է տարեկան՝ 10 ֆրանք (Ֆրանսա) , 12 ֆրանք (օտար երկիրներ) , 5 րուպլի (Ռուսիա) , 2 տոլար (Ամերիկա) . վեցամսեայ՝ 5 ֆրանք (Ֆրանսա) , 6 ֆրանք (օտար երկիրներ) , 2,50 րուպլի (Ռուսիա) , 1 տոլար (Ամերիկա) :

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ ԿԱՆՆԻԿ Է :

Ձեռագիրները ետ չեն դարձուիր .

Կ'ընդունուին ազգեր :

Նամակ , յօդուած եւ բաժանորդագին ղրկել՝

A. TCHOBANIAN

6 Place de l'Odéon

PARIS

ԱՆԱՀԻՏ՝Ի ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԸ

ՊՈՒԼԿԱՐԻԱ. —

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ. —

ՆԻՒ-ԵՈՐԲ. —

ԻՍԹ ԲԷՄՊՐԻՃ. — (Մաս . , Ամերիկա)

ԻՍԹ ՈՒՈԹԸՐԹԱՈՒՆ. — (Մաս . , Ամերիկա)

ՈՒՍԹԸՐ. — (Մաս . , Ամերիկա)

Պ . Գառնիկ Տէօքմէճեան (Ռուսոճուք)

Տր . Կ . Փաշաեան (Դաւրէժ)

Պ . Պետրոս Ղուժիկեան

Պ . Աշոտ Տէր-Մանուէլեան

Պ . Մանուկ Պ . Գալստեան

Պ . Յակոբ Գասապեան